о) судостроительство; прокуратура; уголовное, уголовно-процессуальное и уголовно-исполнительное законодательство; амнистия и помилование, гражданское, гражданско-процессуальное и арбитражно-процессуальное законодательство; правовое регулирование интеллектуальной собственности;

п) федеральное коллизийное право;

р) метеорологическая служба, стандарты, эталоны, метрическая система и исчисление времени; геодезия и картография; наименование географических объектов; официальный статистический и бухгалтерский учет;

с) государственные награды и почетные звания Российской Федерации;

т) федеральная государственная служба.

Важно подчеркнуть, что в Конституции не употребляется термин "исключительное" ведение Федерации. Однако, пункты комментируемой статьи позволяют их оценивать как предметы ведения и полномочия, составляющие исключительную компетенцию Федерации. В ст. 71 и положении ч. 1 ст. 76 Конституции (по предметам ведения Российской Федерации принимаются федеральные конституционные законы и федеральные законы, имеющие прямое действие на всей территории Российской Федерации) подчеркивается не столько то, что названные вопросы относятся к исключительной компетенции Федерации, сколько то, что они решаются федеральным законом, а не иным федеральным нормативным актом.

Но, это не означает, что субъекты Федерации не могут участвовать в решении этих вопросов, например, они участвуют через своих представителей в Совете Федерации.

Согласно ч. 1 ст. 72 Конституции, в число предметов совместного ведения Российской Федерации и ее субъектов входит:

а) обеспечение соответствия конституцией и законов республик, уставов, законов и иных нормативных правовых актов краев, областей, городов федерального значения, автономной области, автономных округов Конституции Российской Федерации и федеральным законом;

б) защита прав и свобод человека и гражданина; защита прав национальных меньшинств; обеспечение законности; правопорядка, общественной безопасности; режим пограничных зон;

в) вопросы владения, пользования и распоряжения землей, недрами, водными и другими природными ресурсами;

- г) разграничение государственной собственности;
- д) природопользование; охрана окружающей среды и обеспечение экологической безопасности; особо охраняемые природные территории; охрана памятников истории и культуры;
- е) общие вопросы воспитания, образования, науки, культуры, физической культуры и спорта;
- ж) координация вопросов здравоохранения; защита семьи, материнства, отцовства и детства; социальная защита, включая социальное обеспечение;
- з) осуществление мер по борьбе с катастрофами, стихийными бедствиями, эпидемиями, ликвидация их последствий;
- и) установление общих принципов налогообложения и сборов в Российской Федерации;
- к) административное, административно-процессуальное, трудовое, семейное, жилищное, земельное, водное, лесное законодательство о недрах, об охране окружающей среды;
- л) кадры судебных и правоохранительных органов; адвокатура, нотариат;
- м) защита исконной среды обитания и традиционного образа жизни малочисленных этнических общностей;
- н) установление общих принципов организации системы органов государственной власти и местного самоуправления;
- о) координация международных и внешнеэкономических связей субъектов Российской Федерации, выполнение международных договоров Российской Федерации.

Гарантируя равноправие субъектов федерации, п. 2 ст. 72 Конституции России устанавливает, что данные положения в равной мере распространяются на республики, края, области, города федерального значения, автономную область, автономные города.

Пункт 2 ст. 72 Конституции конкретизирует содержание статьи 5 Конституции, в которой сказано, что Российская Федерация состоит из равноправных субъектов и что во взаимоотношениях с федеральными органами государственной власти все субъекты равноправны.

Наряду с вопросами совместного ведения Конституция России содержит имеется ряд вопросов, относящихся к исключительному ведению республик. Исключительные полномочия республик в составе Российской Федерации определены их конституциями на основе Конституции Российской Федерации и федеративного договора. Они осуществляются республиканскими органами законодательной, исполнительной и судебной власти. Республика самостоятельно распоряжается своей государственной собственностью, землей, недрами, лесами, и водами. Кроме того, она устанавливает республиканский бюджет, республиканские и местные налоги, республиканские фонды экономического, социального и

культурного развития. Республика осуществляет правовое регулирование экономического, социально-культурного и политического развития.

По Конституции республика устанавливает, а также регулирует внешнеэкономические, научные и культурные связи с зарубежными странами, осуществляет представительство в международных организациях.

Можно сказать, что республики в составе Российской Федерации самостоятельно осуществляют полномочия, не отнесенные Конституцией Российской Федерации и Федеративным договором к ведению Федерации или к предметам совместного ведения Российской Федерации и ее субъектов.

¹ Токвиль Алексис де. Демократия в Америке. — М.: Прогресс, 1992, с. 48

² Конституционное право: Учебник / Отв. ред. В.В. Лазарев. — М.: Юрист, 1999г., с. 276

³ Баглай М.В. Конституционное право Российской Федерации. Изд. 2-е изм. и доп. М.: НОРМА-ИНФРА, 1999. С. 300

⁴ Арииня А.Н., Марченко Г.В. Уроки и проблемы становления российского федерализма. М., ТОО "Интелтех", 1999. С. 131

⁵ Умнова И.А. Конституционные основы современного российского федерализма. — М.: Дело, 1998, с. 95.

⁶ Конституция Российской Федерации. Проблемный комментарий. М.

⁷ Чиркин В.Е. Современное федеративное государство. Учебное пособие. — М.: Издательство МНИМП, 1997, с. 43

⁸ Российский Федерализм: Конституционные предпосылки и политическая реальность: Сборник документов (Под ред. Н.В. Варламовой, Т.А. Васильевой. — М. 2000г., С. 52.

⁹ См. Конституция Российской Федерации : Научно — практический комментарий. / Под ред. акад. Б.Н. Топорнина. — М.: Юрист, 1997, С. 401

Arustamyan R. S

The Constitutional basis of Federal construction of Russia

S u m m a r y

According to the constitutions, which was admitted in 1993, there are 89 subjects in Russian Federation. Among them 21 republics, 6 territories, 49 provinces, 2 cities with a federal significance, one autonomous district, and 10 autonomous regions.

The constitution (1993), admits the right of self — determination of peoples only in Russian Federation. The subjects have no rights of way out of Federation, including republics. The regularity of Russian Federalism concludes that in its foundation puts both the national and the territorial principles.

Արստամյան Ռ.Ս.

Ֆեդերատիվ Ռուսաստանի կառուցվածքի սահմանադրական հիմունքները

Ա մ փ ո փ ու մ

Սահմանադրության համաձայն 1993 թ. Ռուսաստանի ֆեդերացիայի կազմում կար 89 սուբյեկտ, որոնց թվում 21 հանրապետություն, 6 երկրամաս, 49 մարզ, 2 քաղաք՝ ֆեդերացիայի նշանակությամբ, 1 ինքնավար մարզ, 10 ինքնավար տեղամաս (1993 թ-ին սահմանադրությունը ճանաչում է ժողովրդների ինքնորոշման իրավունքը միայն Ռուսաստանի ֆեդերացիայից դուրս գալու իրավունք սուբյեկտները, ինչպես նաև հանրապետությունները չունեն:

ՌՖ-ի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա հիմքում ընկած են ինչպես ազգային, այնպես էլ սահմանային սկզբունքներ:

Խանյան Ս.Ս.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՊՈՆԱԿԱՅԱՅ ԱՐԳԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

«Ինչպիսի» ընթացքի մեջ է պոլսահայ պոեզիան և ի՞նչ տեղ է գրավում հայրենապատումը նրանում» հարցի պատասխանը ստանալու համար բավական է դիմել «Ափյուռքահայ արդի գրականություն» երկհատորյակին, որի Ա հատորը բաղկացած է 500, իսկ Բ հատորը՝ 800 էջից: Հատորները խմբագրել և համադրել է բանաստեղծուհի, գրականագետ-մանկավարժ Սեդա Ծաղիկյան-Տեմիրճյանը: Ժողովածուները հրատարակվել են Ափյուռքի 55 գրասեր ազգակիցների նվիրատվությունների շնորհիվ, որոնց անվանացանկը երախտիքի զգացումով բերված է նրանցում: Ա հատորը ամբողջությամբ ընդգրկում է պոլսահայ գրականությունը, Բ հատորը՝ աշխարհի տարբեր գաղթօջախներում ապրող գրողների ստեղծագործությունները:

Որպես մուտք, Ս.Տեմիրճյանը բերել է ամմահ Դ.Վարուժանի մարգարեական խորհուրդը. «Ո՛վ պիտի կրնայ գրել այդ տառերուն պատմությունը, որոնք հրաշեկ գամերու պես ցեղին գոյությունը հաստատեցին մեր մագաղաթներուն հավերժական հաստատությունաց վրայ: Աստուածային Ա-են սկսեալ, որ աղօթքը մը նման բազուկները վեր կարկառած, դարերու ընթացքին երկինքն հաստատ բռնեց հայութեան գլխուն վրայ, մինչև ինքնամիտի ֆ-ն, որ յոյսի ջղամիդին փափաթուած սիրտը միայն բաց, քալեց, քալեց դեպի արշալույսերը գալիք օրերուն. այդ բոլոր տառերը կարաւան առ կարաւան առաջնորդեցին մեր գոյութիւնը, մեր հայկականութիւնը մինչև ներկա դարերներուն սեմին վրայ»:¹

Ինչպես տեսնում ենք, Մեծն Վարուժանը մայրենի մաշտոցագիր չէզվի հետ է կապել մեր ժողովրդի գոյությունն ու հայկականությունը: Դրանով էլ պետք է բացատրել Ս.Տեմիրճյանի բանաստեղծությունը՝ նվիրված հայ գրչի մշակներին, գետնդված Ա հատորում, և այդ հատորներում հայրենասիրական եղբերին մեծ տեղ հատկացնելը:

Պոլսահայ գրականությունը սկսեց աշխուժություն ապրել երկրորդ աշխարհամարտի տարիներին և նրանից հետո: Այն կապվում է Կարպիս Ճանճիկյանի /1920-1946/, Հայկազուն Գալստյանի /1920-1985/ և Արամ Շավարշի /1917-1979/ մուտքի հետ: Այդ առթիվ Բագրատ Թեվլյանը գրել է. «Արդեն իսկ այդ տղաքը մեր ցեղին յատուկ ստեղծագործ ընդունակությամբ կրցած են ինքնատիպ արուեստի նոր ուղի մը բանալ հայ գրականության մեջ»:² իսկ Ջարեհ Խրախունին 1991-ին ընդգծել է. «Որքան ուրախ, որքան հպարտ պետք է ըլլանք մենք ամենքս ալ, որ այսօր հօգ չէ թէ փոքր չափի վրայ, բանակը կարելուր չէ այնքան – մենք ալ ունինք ինքնուրույն քերթողութիւն մը, որ՝ թերես վերջին շրջաններու պատմութեան մեջ առաջին անգամ ըլլալով՝ կէս դար հեռուէն չի հետեւիր եվրոպական գրական դպրոցներու, այլ անոնց հաւասար մակարդակի վրայ, ինքն ալ փոքր առ փոքր կը խմորէ հատ մը՝ նույնքան բարձրորակ, խոստմնալից, կենսունակ»:³ Իսկ Հակոբ Կարպենցը պիտի հաստատի, «Կարպիս Ճանճիկեանը մահացաւ 26 տարեկան հասակում: Այդուհանդերձ իր երևումը հայ գրականության երկնականաբար ասուլային ցուլից առաջնել եղավ շրջադարձային, յատկապես խտամպուլահայ բանաստեղծութեան բնագավառում»:⁴

Հակոբ Կարպենցին գրավեց Ճանճիկյանի պարզ, անմիջական, անպաճույճ ոճը: Նա գրական հրաշքի համագոր երևույթ է համարում՝ համաշխարհային առաջին պատերազմի ու Մեծ եղեռնի պատճառած արհավիրքներից հետո Պոլիսը գրական նոր փնտրտուքների կենտրոն դառնալը: Հիդավի, Կ.Ճանճիկյանը, Հ.Գալստյանը և Ա.Շավարշը պոլսահայ գրական նոր շարժման նախակարապետները եղան, որոնցից հետո 50-ական թ սկսած հանդես եկան Արմենուհի Թերզյանը, Ատրիմե Տատրյանը, Վարուժան Աճեմյանը, Ջավեն Պիպեոյանը, Երվանդ Կոպեկյանը, Ջահրատը, Ռոպեր Հատտեմյանը, Ջարեհ Խրախունին և ուրիշներ:

Ի՞նչ տեղ է գրավում հայրենապատումը պոլսահայ բանաստեղծների ստեղծագործություններում և ի՞նչ երանգներով են նրանք արտահայտում իրենց անմարում

կարոտն ու զգացումները մի այնպիսի քաղաքում և երկրում, որտեղ յաթաղանի զոհերը դարձան մեկուկես միլիոն հայեր, և այսօր էլ Պոլսում ապրող նրանց ժառանգները գտնվում են քալեաթածին հայացքների տակ:

Ծանոթանալով պոլսահայ բանաստեղծների ստեղծագործություններին, նկատում ես, որ նրանք երբեք իրենց մտքից ու խոհերից չեն հանում մեր պատմական հայրենիքի պատկերը, չեն դադարում ազատության սրբազան գաղափարից: Նկատելի է, որ նրանց հայրենապատումը ճակատային չէ, ավելի շատ իրենց զգացումներն արտահայտում են ենթաբնագրային արձարծունեություն: Մի այնպիսի նուրբ բանաստեղծ, ինչպիսին Կարպիս ճանճիկյանն է, տարագրությունն իր իսկ տան մեջ արտահայտում է այսպես.

Փողոցը նոյն տեղը կը մնայ
պանդոկին դուռը նոյն
մեր բզկտած հացին փշրամբները
կը մնան դեռ սեղանին վրայ
եւ փողոցի մայրոջ
պատուհաններուն վարագույրները
մեր վար քաշած վիճակին մեջ նոյն
մենք ինչու՞
նոյնը չմնացին սիրելիս
դարձանք իրարու անճանաչելի:⁵
/«Տարագիր»/

Կ.ճանճիկյանի հայրենասիրությունը իր նրբերանգներով երևան է գալիս հողասիրության մեջ: Դիմելով հողին, նա հարցնում է. «Ինչպես կապրին մարդիկ երբ դուռն չըլլաս»: Բանաստեղծը մեկ առ մեկ թվարկում է հողի բարեմասնությունները և ապա հայկական անանցանելի կարոտով և վերադարձի հույսով ընդհանրացնում. «Խաւատա հող քեզի համար տրուած իւրաքանչիւր նահատակ» ապացույցն ես մեր սիրո.

Թռչունները որ քեզնէ
իրենց ոտքերը կտրեցին
... Օր մը վերջապէս
դարձեալ քեզի պիտի դառնան
ու օր մըն ալ
երբ դուռն օթեան պիտի ըլլաս
մեր մարմինին,
մեծ բանաստեղծներ
քեզի համար
քերթուածներ պիտի գրեն
երմէկ մեզի
քու ծոցիդ մեջ պիտի ըլլանք: ⁶

Մինաս Թեօլեօյանը /1913/ հայրենիքի ազատությունը համարում է անմնացորդ: Բանաստեղծը նրա ծայրը լսում է Մասիսի ծերպերի մեջ, ուր Արտավազդը սերմեր է ցանել, Նոյան Տապանի հաղթերգի ղողանջներում, Ավարայրի խռովքում.

Անուղի ինչ փոյթ, - երբ ոտնաձայնդ՝ հիմա,
Յոգիին մեջ մեր տխուր, աղօթական երգի պես,
Վաղուան այցդ կավետէ...
Ցնորք մը չես դուռն, այս փաստն է լուկ
Որ կընես մեզ երջանիկ,
Եվ տրոփին՝ որով կապրի մեր սիրտը դեռ

Անբաւ բերկրանք կը բերէ...

Ե՞րբ պիտի գաս...

/«Ե՞րբ պիտի գաս»/

Հայրենասիրական իր երգերուն Ա.Ք.Ջանգուն (1917) կոչ է անուն չմոռանալ մեր երգերը, չվախենալ չարից, թշնամու ահից, միշտ հնչեցնել մեր լեզուն, չկորցնել օտարության մեջ («Ինչու»)։ Հայրենասիրական նույն զգացմունքներն են արտահայտված նրա «Դարերն ի վեր», «Ափյուռքյան տվախտանք», «Եթե վիրավոր» բանաստեղծություններում։ Իսկ Ջահրատին /1924/ հուզողը մեարդաբար իսկ իր լեզվի հավերժացումն է։ Այն և խունկ և, և վանք, և ավետարան։ Ըստ Ջահրատի, Մեր հոգու հետ խոսում են Մեսրոպյան գրերը։ Նրանք.

Արեւ ու արտ կը բուրեն

Վարդ ու սոխակ – Սայաթ – Նովա ու Կոսիտաս կը բուրեն

Կեանք կը բուրեն

Վերագաթնում ու յաղթանակ կը բուրեն

Ուր որ ըլլան հողմացրին ուր որ գաղթեն-վարդապետ

Քու տառերդ ազատութիւն կը բուրեն։⁸

/«Մեսրոպաբույր»/

Իգնա Սարգսյանի /1945/ բանաստեղծական աշխարհում կորուսյալ հայրենիքը վերածվել է հոգևոր մի այնպիսի պատկերի, առանց որի չի պատկերացնում ոչ իր տենչը, ոչ էլ երգը։ *Պատմություն, չարչարանք, տառապանք, լույս* մետաֆորները նրա հայրենապատումի առեջներն են, իսկ *ազգ-ցեղ* հավաքական ուժերը ամենամվիրական երանգները, որոնք ընդհանրության մեջ հայի երազն են։ Նրա դարավոր հեքիաթի գործը։ Հայրենիք-ազգ հասկացությունը Իգնայի մոտ հավասարվում են, պայմանավորվում մեկը մյուսով։ Աշխարհասփյուռ հայ ժողովրդի երազի իրականացումը բանաստեղծուհին կապում է նրա անբակտելի միության հետ։ Հոգ չէ թե ազգի մատներին «Կոչում են կապեր... Հերձոտեր փխերը», հոգ չէ թե «Ճաթեր են» շրթները... և երգերից «Քախծ կը բուրեն», նրա քնարական հերոսը հավատում է ապագային.

Մինչ արևու-քրտինքդ պիտի գծե

Կրանիթեայ կորովդ ազատութիւնդ պիտի հիւսե

Անքակտելի միութիւնդ անմահութիւնդ պիտի կերտե

Օ դուն իմ ազգս տառապած-դուն իմ ցեղս ցիրուցան։⁹

/«Գեղուն»/

Իգնայի «Կապույտի ծարաւ» բանաստեղծությունը հոգու բազմաշերտ ծալքեր ունի։ Նման երգ կարող է իյուսել միայն հայ բանաստեղծը։ Կապույտ երկինքների, կապույտ ծովերի, կապույտ երազների, կապույտ ծաղիկների ընդհանուր ծփանքն ու բույրը Իգնայի քնարական հերոսին հասցնում են «Կապույտ անցեալներ»-ին, որտեղ նա կարող է «Տրցակ-տրցակ հուշեր» մտաբերել, սակայն միշտ «տառապող սրտի մեջ» զգալ անհազ մի ծարավ։ Հենց այս հյուսվածքի սահմաններում էլ բանաստեղծուհին ստեղծում է մեր ազգային պատկեր-կերպարը, որպես «հավերժության ծառ»։ Իգնան մեր ազգային ոգու ինքնաճանաչման խորհրդանշանները համարում է *տառապանքը-հալածանքը-մահը-կարոտը, հուսախաբությունը-պատերազմը-նահատակությունը-հույսը-պայքարը*։ Մեր պատմության ընթացքի տարեգրության սահմանների մեջ բանաստեղծուհին չի չլքացնում այն ցավալի ճշմարտությունը, որ թելադրված է ասես ազգային ճակատագրով։ «Պատերազմներ, նահատակներ, մարտիրոսներ տեսանք-գրում է նա, - ցուրտ հողը մեր տաք արցունքով թրջեցինք, արհավիրք, կեղեքում, հեծկտուլք-թախիծ տեսանք...», սակայն «փինիկ եղանք»։ Հավատարիմ հայրենասիրական իր քնարեգության ընդգրկումներին

իզման չի կորցնում պատմական հայրենիքի ազատագրման հույսը: Հայ ժողովուրդը իսկ և իսկ իր ավանդական երկրի վրա կառուցած անմահ կոթողների նման է: Վանքը հային է նման, հայը՝ իր կերտած վանքին: Այստեղ է նրանց միասնության գաղտնիքը.

Հմանքի վանք մը եղանք
ծինին տակ կորսուեցանք
ծինահալին դարձեալ ցուցինք
անմահ երգ մը եղանք
կռուկի նման
ճախրեցինք հորիզոնէ հորիզոն...¹⁰

Բանաստեղծուհին ընդհանրացնում է, որ արմատներով մեկ, գոյատևման դժվարին ճանապարհին ապրեց հայությունը, երակ-երակ ծաղկելով՝ որպես «Հավերժության ծառ»:

Պոլսահայ արդի պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից է Զարեհ Նարախունին /1926/: Նարախունին միշտ բոլորը է պահել իր ժողովրդի ազատաբաղձ ոգու կրակը որպես բանաստեղծական խորհրդանիշ: Նրա հայերգության մեջ պարզորոշ երևում են ազգային մտածողության պատմական և գեղագիտական ակունքները: Բանաստեղծի հուզաշխարհը իսկ և իսկ հայ մարդու ապրած տառապանքի և երազի հանրագումար է: Նրա ստեղծագործության արմատները մի կողմից գնում են դեպի մեր տոհմիկ պատմության խորքերը, մյուս կողմից սնվում հայ ժողովրդի, առանձնապես սփյուռքահայության արդի տազնալներից և ակնկալություններից: Նարախունին ինչքան էլ խորհում է համամարդկային ակնկալությունների մարմնավորման մասին, միևնույն է, ծեռքը դնում է մեր ազգային ցավի վրա: Նրա էպիկական հերոսը մարդու և մարդկային հաղթանակ երազելով հանդերձ, կրծքի տակ չղյուժ է մեր ազգային իդեալների ծաղկումը: Նարախունին հավատում է «թափած արյան և արցունքի» հուսաբեր արդյունքին, ուստի խորհուրդ է տալիս. «Ժառ տնկել և միաժամանակ խրախուսում. «ուր ալ տնկեք պիտի բռնե անպայման» /«Այս ծառը սուրբ»/: Նրա հայրենապատումը երևան է զալիս ազատերգության համածուլվածքով: Պատճառը պարզ է: Ափյուռքը մեր ավանդական հողերի, օջախների, հեքիաթների կորստից է ծնված և պարզ է, որ հայրենիքի վերադարձը սփյուռքահայ /և ոչ միայն/ բանաստեղծի համար առաջին հերթին փրկության բաղձանք է, որը կոնկրետության մեջ դրսևորվում է որպես **ազատաբաղձ ոգի**: Տվյալ դեպքում Նարախունու պոեզիայում **հայրենիք-ազատություն-ոգի** հասկացությունները կերպավորվում են մեթոդաբանական մեթոդների պատկերներով: Դիմելով Ազատությանը, բանաստեղծը նշում է.

ԱՅԲ-ը արյունն է թափված
ԶԱ-ն գոհվածներն անանուկ
ԱՅԲ-ը անունդ է արփավառ
ՏԻՈՒ-ն տենչանքն է տանջող
Ու-ն ուրացումը ույժին
ԹՈՒ-ն թվականն է ահեղ
ՅՈՒ-ն յուրացումը ջախիղ
ՆՈՒ-ն նահատակը վերջին:¹¹

/«Ազատություն»/

Թեմատիկ բազմազանության մեջ Նարախունու ազատերգությունը ամենավառ երազն է, իսկ արդեն նշեցինք, որ այն ուղիղ իմաստով հայրենապատում է: Առաջին «Հաղթական» բանաստեղծությունից /1944/ մինչև «Ազատություն» 1993 զիրքը Նարախունու ստեղծագործական հուզաշխարհում հաջնում է **Լեռ-ը**, շրշում **ծառ-ը**, շիկանում ԱՅԱՏՈՒԹՅԱՆ հուրը, շքերթվում ՀեղձՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ղողաճնում ՏՈՒՆԱՅԱՆԳԸ,

փողփողում ԳՐՈՇԸ, խոսում ՀԱՅԱՍՏԱՆԸ, շողում ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ խորհուրդը: Խրախուսին հասել է մի բարձունքի, որտեղից ինքը հայոց համագգային ճակատագիրն է շոյում և միաժամանակ ընթերցողը իր հոգու խորքն է տեսնում: Նա տարբերվում է այն կարճամիտ մտավորականներից, ովքեր ազգի շահ-ճակատագիրը կապում են քաղաքական խաղերի, միջկուսակցական վեճերի հետ: Խրախուսին ընդունում է մի ճշմարտություն: Վերածնված Հայաստանը երևան ուստանով այն միակ խաղիսխն է, որին հենվելով միայն աշխարհասփյուռ հայությունը կարող է հասնել իր երազած ավերին: Նման հետևություն բերող լավագույն կովաններից մեկը բանաստեղծի «Նամակ եղբորս» բանաստեղծությունն է՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման առթիվ 1992 թ. գրված նրա «Արդյոք կա՞ թաքուն գաղտնիք» շարքից հետո: Բանաստեղծի և քաղաքացու հեզահամբույր և քաղաքակիրթ դիրքերից խրախուսին պատասխանել է նրանց, ովքեր քննադատել են այդ բանաստեղծության համար: Անվանի բանաստեղծը եղբոր «մեղմ սուլլը» համարում է «անողոք» արարք: Ինչպես դիպուկ նկատում է Խրախուսին. «Սազ չմնաց որ չհանձնենք փչող անհաշտ անհարազատ հովերուն»: Նա հայ մարդու քաղաքացիական պարտքի զգացումով հանձն է առնում, որ «Հովը անվերջ մեր երեւը կապտակե՝ միշտ շոյելու պատրանքով...»: Մի՞թե դժվար է նկատել, որ մեր «արյունը ներս է դարձել, կը թանձրանա ամեն օր ու կը սպառնա մեզ խեղդել»: Բայց ոչ միայն այդ: Խրախուսին իմաստնացած մեր կորուստներից և գտնելու նպատակով պատեպատ խփվելուց խորհրդածում է.

եղբայր իմ
Հայրենիքը եթե միայն ծննդավայր չէ ինձի
Հայրենիքը եթե միայն սննդավայր չէ քեզի
ես մեկ անգամ պանդուխտ եմ
Դու՛ն երկու...¹²

Խրախուսին իմացական-հուզական իր պոետական ծավալումներում ձգտում է կենդանի պահել հայոց ազգային նվիրական երանգներն ու զգացումները: Նա մեր տղաների պարի մեջ տեսնում է «թեթ քացած խաչքար... երկինք հասած կատար... մարտահրավեր» /«Պար»/, Հայոց Անկախության հռչակագրի տողերում շոշափում վեց դարուց ավելի խորտակված մեր պետականության վերածնունդն ու հաղթական երթը, որի առջևից ասես «Հայկ նահապետ վաղընջական իր պրկված աղեղեն կարծակե նետը լուսեղ հավերժության աստղերուն» /«Ուրեմն ըսենք պարզորեն-616»/:

Խրախուսու հայրենասիրական պոեզիայում կարևոր տեղ է հատկացված պատմությանը: Նրա հիշողության սահմանները սկսվում են հայոց առասպելական շրջանից հասնում այսօրվա դրամատիկ շիկացումներին: Անցյալի և ներկայի կապը նա ներկայացնում է որպես զուս: Այդ ինչու՞ «Ամոնց դողեմը գայլ էր, իսկ մերը գառնուկ»: Այդ չէ՞ պատճառը, որ գառները «մեծացան մաքրասպիտակ խեղճուկրակ» /«Պատմություն»/: Խրախուսին անդրադառնում է ժողովրդի կորուստներին, նկարագրում դարավոր թշնամու դաժանությունները, մեր ժողովրդի ողբերգական ու ճակատագրական էջերը: Բայց պետք է ընդգծենք, որ բանաստեղծը Պոլսի պայծառներում մեր անցյալը պետք է ներկայացնի այլաբերության ընձեռած սահմաններում: Այդ է վկայում. «Ամպի պատմություն» ծավալուն բանաստեղծությունը: Ժողովրդական հեքիաթին հատուկ մուտքով բանաստեղծը նկարագրում է ամպը, որ դարերի ընթացքում «Բյուրեղափայլ փրփուր դարձած-եթերային փետրափունջի վերածված կը պսակվեր մայր արևուն ոսկեկրակ շողերով»: Սակայն ամպը «մոռացեր էր ան իր վերելքովն ինք արբշիռ ԱՆ մոռացեր էր բոլոր հովերն ու շուռնչն անոնց չարական»: Արդյունքում.

եվ անխնա հալածեցին ամպը հեք
Պատռեցին կտրատեցին պառակտեցին գայն ամբողջ
Պատառ-պատառ ծվեն ծվեն բզկտեցին միսն անքիծ

«Մասն
սպաս
ամպի
շղթայ

«Համ
Առաք
որպե
անուն

Հ.Թո
խաղ
համ
իրա
նվիր
խառ
«Դր
մահ

փոխ
Նրա
ան
խու

Փեռեկտեցին անոր մարմինն արևափայլ կաթնաթույր
ու ցրվեցին չորս ծագերուն աշխարհի...¹³

/«Ամպի պատմություն»/

Բանաստեղծության ընթացքի մեջ խոսք է գնում գաղթաշխարհի մասին, ուր ամպը «նստավ ցրիվ տանիքներուն և փեղկերուն և մայթերուն անտարբեր», բայց չանցան, սպասում են պահին, որ «Վեր ամբառնան, դառնան քույա ըսպիտակ ու միանան փոքր ամպին երկնաճեմ»։ Դժվար չէ նկատել, որ բանաստեղծի երևակայության և խոհերի շղթայում մեր ժողովրդի կորուստների և վերադարձի հույսի պատկերն է։

Հայոց մեծ եղեռնի արհավիրքի պատկերն է ներկայացվում խրախուճու «Համակշիռ», «Ոչ այլ», «Լեռն ի վեր», «Դաշտը անտեր» և այլ ստեղծագործություններում։ Լեռնայական խորհրդանշանների շրջապտույտի մեջ կարևոր տեղ է զբաղում արծիվը որպես սավառակի հակապատկեր։ Քնարական հերոսը հանդես է բերվում արծվի անունից։ Արծիվը սավառակը ներկայացնում է «հազար սաղարանք» խմորող չար ուժ։

Իսկ մենք արծիվ-կուրծքին կրակ սրտին արյուն
աչքին երազ ու կտուցին կոծ ու կանչ
հավերժության գագաթներին կը նայինք վար –
սավառակին
... Կը սլանանք ահագնաթափ թևածուճով մանձնուղաց
չար զանգին խոտ կոխելու պես-բռնացք կըլլանք...¹⁴
/«Սավառակ»/

Հավատարիմ հայ դասական պոեզիայի ավանդույթներին, խրախուճին Յ.Թումանյանի, Դ.Վարուժանի, Ե.Չարենցի և մյուս մեծությունների հանգույն մեր ժողովրդի խաղաղ ու ազատ կյանքը տեսնում է մյուս ժողովուրդների ազատ կյանքի և համագործակցության մեջ, միաժամանակ պաշտպանելով փոքր ժողովուրդների իրավունքները։ Թուրքիայում Հայոց Պատրիարք Արք.Գալուստյանի սուրբ հիշատակին նվիրված «Երգ երազանքի» բանաստեղծության մեջ խրախուճին «Ազատություն, խաղաղություն, ուրախություն» է ակնկալում աշխարհի բոլոր մարդկանց համար, իսկ «Դրոշ» երգում ժխտում է այն դրոշը, որի խորհրդանիշը կես թուրն է և մանգաղաձև մահիկը։ Նա երազում է կանաչ-սրճագույն-դեղին /ոսկեգույն/ այն դրոշը, որ.

մազերուն պես ալիք ալիք հողմածածան հերարձակ
Այն աննման աղջկան
որ կուրծքը բաց
մեկ ձեռքին սուր, մյուսին հաց
Կառաջնորդե ամբոխները սրարբած։¹⁵
/«Դրոշ»/:

Չարեհ խրախուճու հայրենապատմի մեջ Լեռը և լեռան մարդու փոխհարաբերությունը ներկայացվում է որպես հայոց աշխարհի համայնապատկեր։ Նրանում «Մարդը լեռան կը նայի, լեռն ալ իրեն կը նայի»։ Այդ «Լեռը չենք մե...»։ Լեռան անունը չկա, բայց պարզ է, որ լեռը երկնամերձ Արարատն է, ինչպես քնարական հերոսն է խոստովանում.

Այն այն լեռն է
Որ ամենուր բիթին խորն է բևեռված
Որ ամենուս մորթին տակն է – միս ոսկոր
Որ ապրում է գոյություն է իրական
Ու երազ է առասպել է անսահման։¹⁶

Սակայն Երազ-առասպել այդ լեռը վերածվում է հույսի և դեպի իրեն կանչում նրան կարոտ տիրոջը, որն էլ շնչում է. «Այս լեռը մեծ Անմահության սանդուխտն է Ու կամաց-երկյուղած Կը բարձրանամ լեռն ի վեր»:

Ինչպես աշխարհասփյուռ, այնպես էլ պոլսահայ բանաստեղծների սրտի և հոգու ծայրը՝ ակունքված կորուսյալ հայրենիքի կարոտից, հույսի թևերով փարված Հայաստանին, տազնապած աշխարհի խաչմերուկներում ուժացման իրողությունից, երգի թևերով հանձնված է սերունդներին: Արդի սերունդը իր հայրենապատումն է արարում բանաստեղծական նոր ձևերով, որի բովանդակությունը մաքառման շոշափելի երանգներ է ձեռք բերում:

1. Սփյուռքահայ արդի գրականություն, հ.Ա, Ռոյլ օր, Միշիկոն, 1994 թ., էջ 2
2. Նույն տեղը, էջ 10:
3. Նույն տեղը, էջ 13
4. Նույն տեղը, էջ 14
5. Նույն տեղը, էջ 23
6. Նույն տեղը, էջ 49
7. Նույն տեղը, էջ 43
8. Նույն տեղը էջ 62
9. Նույն տեղը էջ 81
10. Նույն տեղը, էջ 82
11. Զ.Խրախունի, Ազատերգություն, Երևան, 1993, էջ 23
12. Խրախունի, Ազատերգություն, Երևան, 1993, էջ 86
13. Նույն տեղը, էջ 62:
14. Նույն տեղը, էջ 75-76
15. Նույն տեղը, էջ 53
16. Սփյուռքահայ բանաստեղծություն, Երևանի պետական լսարանի հրատ. 1981, էջ 431

**ХАНЯН С.А.
ТЕМА ПАТРИОТИЗМА В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ
КОНСТАНТИНОПОЛЯ**

Резюме

Чтобы найти ответ на вопрос, в каком процессе находится армянская поэзия в Константинополе и какое место занимает в ней тема патриотизма, достаточно обратиться к двухтомнику “Современная зарубежная армянская литература”, первый том которого состоит из 500, а второй из 800 страниц. Оба тома составила и редактировала поэтесса, литературовед и педагог Седа Цахикян-Темирчян. В первом томе охвачена армянская поэзия Константинополя, а во втором-произведения писателей армянской диаспоры.

Армянская литература Константинополя оживает в годы второй мировой войны и после нее. Это явление связано с именами Карписа Чанчикяна (1920-1946), Айказуна Галстяна (1920-1985) и Арама Шаварша (1917-1979). Их поэзию высоко оценили писатели и литературоведы Баграт Тевян, Акоп Карпенц и другие.

Знакомясь с произведениями армянских поэтов Константинополя, замечаешь, что в их мыслях и думах не забывается образ исторической родины — Западной Армении. В стихотворениях М.Теолеояна, С.С.Зангу, И.Сарыаслан и других воспеваются родные очаги

потерянной родины, плененный Арарат, исторические памятники и т.д. В их стихах часто встречаются метафоры *история, мучение, страдание, надежда, свет*, а понятия Родина — Нация представлены как одно целое.

Крупным представителем современной армянской поэзии Константинополя является Зарех Храхуни. В его патриотических стихах национально-историческое мышление проявлено в метафорах *Родина-Свобода-Язык*. Он с большим воодушевлением воспевает независимость Армении. Образ Родины создан в стихотворении "История", "Танец", "К вершине горы", "Самолет", "Знамя" и других произведениях.

В армянской современной поэзии Константинополя новыми поэтическими формами создан образ исторической родины, освобождение которой связывается с республикой Армении.

Khanian S.A.

The theme of patriotism in modern Armenian poetry of Constantinople

Summary

To find the answer to the question in what process Armenian poetry is in Constantinople and what place the theme of patriotism takes in it, suffice to draw our attention to two-volume edition of "Modern Foreign Armenian Literature", the first volume of which includes 500 and the second — 800 pages. Both volumes were compiled and edited by a poetess, literary critic and teacher Seda Tsakhikyan Temirchian. The first covers Armenian poetry in Constantinople, the second — the works of Armenian writers in Diaspora.

Armenian literature in Constantinople revived during and after the years of World War II. This phenomena is connected with the names of Karpis Chamchikyan (1920-1946), Hikasune Galstian (1920-1985) and Aram Shavarsh (1917-1979). Their poetry was highly estimated by such writers and literary critics as Bagrat Tevian, Akop Karpents and others.

Getting into the works of Armenian poets Constantinople we notice that in their thoughts and ideas they don't forget the image of their historical Motherland-Western Armenia. The hearth of the lost Motherland, prisoned Ararat, historic monuments are glorified in the poems of M. Teoleolian, S. Zangu, N.Saryaslan and others. In their poems we often meet metaphors, history, torture, suffering, hope, light. Such concepts as Motherland and Nation are introduced as one whole.

One of the prominent representatives of modern Armenian poetry in Constantinople is Zarekh Khrakhuni. In his poems the national-historical thinking is shown in such metaphors as Motherland-Freedom-Language. With great inspiration he glorifies the independence of Armenia. The image of Motherland is created in the poems "History", "Dance" To the Top of the Mountain", "Plane", "Banner" and other works.

In modern Armenian poetry in Constantinople by means of new poetic forms is created the image of historic Motherland, the freedom of which is connected with the Republic of Armenia.

Խաճյան Կ. Ս.
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ ՌՈՒՄԵՐԵՆ

Հայ ժողովուրդը 2000թ. նշեց մեծանուն բանաստեղծ, համաշխարհային պոեզիայի ամնաի ներկայացուցիչներից մեկի՝ Ավ. Իսահակյանի ծննդյան 125-ամյակը:

Զնայած տասնամյակների ընթացքում ուսումնասիրվել է մեծ բանաստեղծի հարուստ ժառանգությունը, այնուամենայնիվ յուրաքանչյուր նոր սերունդ նրա ստեղծագործության մեջ տեսնում է նոր երանգներ՝ ելնելով իր աշխարհայեցողությունից և գեղագիտական ընկալումներից:

Ավ. Իսահակյանի ստեղծագործության մեջ բազմակողմանի արտացոլված է ժողովրդի հոգեկան հարուստ աշխարհը: Նրա բանաստեղծական արվեստում խտացված են ոչ միայն հայկական, այլ նաև համաշխարհային պոեզիայի լավագույն ավանդույթները: Պատահական չէ, որ Վարպետի ստեղծագործությունը բարձր է գնահատված ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթի ներկայացուցիչների կողմից:

Ավ. Իսահակյանը դեռևս պատանեկան տարիներից ծանոթ է եղել ռուսական պոեզիային: Ռուս գրականության հետ Ավ. Իսահակյանի սերտ առնչությունների մասին քիչ չեն գրվել: Հայտնի են գրականագետներ Կ.Գրիգորյանի, Պ.Մակինցյանի, Ա.Ինժեկյանի, Գ.Հովսեփյանի, Դ.Դանալանյանի, Էդ.Ջրբաշյանի, Գ.Հովհաննիսյանի, Ավիկ Իսահակյանի և մյուսների ուսումնասիրությունները: Առանձնապես ուշագրավ է ակադեմիկոս Լ.Սկրտչյանի «Ավ.Իսահակյանը և ռուս գրականությունը» ուսումնասիրությունը, որտեղ ցույց են տրված Իսահակյանի և ռուս իրականության կապերը, Իսահակյանը որպես ռուս գրականության գիտակ և պրոպագանդիստ, Ավ.Իսահակյանի պոեզիայից կատարված ռուսերեն թարգմանությունների ընթացքը և արվեստը, ինչպես նաև Ավ.Իսահակյանը ռուս քննադատության գնահատմամբ: Անվանի գրականագետը հանգամանորեն ներկայացնում է Վարպետի «Աբու Լալա Մահարի» պոեմի բրյուսովյան թարգմանությունը և առանձնապես քննարկված բանաստեղծությունների թարգմանությունները Ալ.Բլոկի կողմից:

Կարող ենք վստահորեն ասել, որ այսօր Ավ.Իսահակյանի պոեզիան ռուս ընթերցողը կարող է կարդալ իր մայրենի լեզվով: Դա ապացույց է այն բանի, որ Իսահակյանի և ռուս գրականության կապը եղել է փոխադարձ: Ավ.Իսահակյանի առաջին բանաստեղծությունը ռուսերեն լույս է տեսել 1899թ. «Ռուսիա և Ասիա» շաբաթաթերթում՝ բանաստեղծ Ա.Գրենի խմբագրությամբ, ապա հրատարակվել են Վարպետի «Մայրիկ, նայիր, արևն ինչպե՞ս» և «Թե՛ դեպի կյանքը, թե՛ դեպի մարդիկ» բանաստեղծությունները: Այնուհետև Իսահակյանի «Սիրու՛ն աղջիկ, երկիր լինիմ» բանաստեղծությունը թարգմանաբար տպագրվեց Սանկտ-Պետերբուրգում լույս տեսնող «Ժվոպիսնոյե օբոզրենիյե» ամսագրում 1900թ. 11-րդ համարում: Այդպես սկսվում է Ավ.Իսահակյանի մուտքը ռուս գրականություն: Ինչպես նշում է Լ.Սկրտչյանը, Իսահակյանի պոեզիայից բարձրարժեք թարգմանությունները սկսվում են Վ.Բրյուսովից և Ալ.Բլոկից:

Ավ.Իսահակյանի բանաստեղծական շարքերը տպագրվել են «Արտասահմանյան գրականության տեղեկագիր» („Вестник иностранной литературы“), «Կրթություն» („Образование“) (1902), «Մանկական ընթերցանություն» („Детское чтение“) (1903), «Նիվա» (1904) ամսագրերում: Ապա Իսահակյանի բանաստեղծությունները առանձին շարքերով տպագրվել են «Ժամանակակից հայ բանաստեղծներ» („Современные армянские поэты“) (1903), «Ժամանակակից հայ գրականություն» („Современная армянская литература“) (1906), «Հայկական մուսա» („Армянская муза“) (1907) ամսագրերում:

Վարպետի բանաստեղծությունները ռուսերեն առանձին ժողովածուով առաջին անգամ լույս է տեսել 1907թ. «Արաքսի ծաղիկները» („Цветы Араза“) խորագրով: XX

դարի սկզբից մեծ պոետի բանաստեղծությունների թարգմանությամբ զբաղվել է Վ.Բրյուսովը, Ալ.Բլոկը, Վ.Դերժավինը, Ա.Ախմատովան և շատ ուրիշներ:

Ալ.Բլոկը 1915թ. թարգմանեց Իսահակյանի 20 բանաստեղծություն: Ինչպես նկատել է Լ.Սկրտչյանը, «Եթե նա երկու ամսում թարգմանել է Իսահակյանի 20 բանաստեղծությունները, նշանակում է, որ նա անկեղծ հափշտակվել է նրանով»:¹ Ալ.Բլոկի թարգմանած բանաստեղծությունները 1916թ. տպագրվեցին «Հայաստանի պոեզիա» ժողովածուում Վ.Բրյուսովի խմբագրությամբ: Ալ.Բլոկը Իսահակյանից թարգմանել է «Մայրիկիս», «Արագի ափին բոստանըս լինի», «Եվ արծիվ մի սև իջավ սըրարշավ», «Երազիս տեսա, օրոր ու շորոր», «Բալես ունի հնդու-մաթա», «Օտար, ամայի ճամփեքի վրա» և այլ բանաստեղծություններ, որոնք բարձր են գնահատվել թե՛ ռուս և թե՛ հայ գործիչների կողմից:

Հետագա տարիներին Իսահակյանի ստեղծագործությունները լույս տեսան առանձին ժողովածուներով, որոնց շարքում առանձնանում է Վարպետի 100-ամյակի առթիվ տպագրված ընտրանին, որին մասնակցել են ժամանակակից մի շարք բանաստեղծներ, որտեղ իր յուրահատուկ տեղն ունի անվանի բանաստեղծ-թարգմանչուհի Վ.Չվյազինցևան: Ալ.Բլոկից հետո Վ.Չվյազինցևան ռուս այն բանաստեղծներից է, որ իր ստեղծագործական կյանքի իմաստը տեսել է նաև մեծ Վարպետի երգերի թարգմանության ասպարեզում: Վերոհիշյալ ժողովածուում տեղ են գտել Վարպետից նրա թարգմանած 22 քնարական բանաստեղծությունները:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում այդ թարգմանությունները, բանաստեղծուհին կարողացել է, արդյոք, Ալ.Բլոկի թարգմանությունների մոտ ներկայացնել Վարպետի երգերի համարժեքը: Այդ թարգմանությունները գնահատելու համար սխալված չենք լինի, եթե բերենք Ավ.Իսահակյանի վերաբերմունքը թարգմանչական արվեստի նկատմամբ: Այդ տեսակետից հետաքրքիր է Վարպետի նամակը ուկրաինացի ակադմիկոս Բանաստեղծ Մ.Ռիլսկուն: 1951թ. Մ.Ռիլսկին վարպետին էր ուղարկել ուկրաիներեն լեզվով հրատարակված նրա ընտրանին: Նամակի սկզբում Ավ.Իսահակյանը նախ շնորհակալություն է հայտնում իր բանաստեղծությունները ուկրաինացի ընթերցողին ծանոթացնելու համար: Սպա հայտնում է, որ ինքը հրավիրել է ուկրաիներեն տիրապետող մի ընկերոջ, որպեսզի ժողովածու կարդա իր համար և օգնի ուկրաիներեն գրելու պատասխան նամակը: Այդ ամենից հետո Ավ.Իսահակյանը գոհունակությամբ հայտնում է. «Եվ այժմ ես համոզվեցի, որ Դուք, Չեր և իմ բարեկամներն իմ բանաստեղծությունները թարգմանել են ճիշտ, լավ, կարողացել են իմ խոհերն ու զգացմունքները, այն բոլորը, ինչ թանկ ու հարազատ է իմ սրտին, հաղորդել գեղեցիկ, նուրբ ու հարուստ լեզվով, ամնոռաց, սրտայի երգերի լեզվով, որոնք ես սիրում եմ երկար տարիներ ի վեր»:²

Դժվար չէ նկատել, որ վարպետը թարգմանից պահանջում է բնագրին մնալ հարազատ («ճիշտ»), թարգմանել վարպետորեն («լավ»), պահպանել թարգմանվող հեղինակի «խոհերն ու զգացմունքները», լեզվաոճական առանձնահատկությունները:

Վ.Չվյազինցևայի թարգմանությունները համապատասխանում են Վարպետի վերոհիշյալ պահանջներին: Բերենք մի քանի օրինակներ: Ավ.Իսահակյանի «Անտուն գիշերներ» գողտրիկ բանաստեղծությունը Վարպետի ստեղծագործական խառնվածքի առաջին շրջանի հիմնալի արտահայտություններից է.

Անտուն գիշերներ,
Անքուն գիշերներ,
Քուրիկ, քեզ համար,
Այրված քո սիրով,
Կարոտիդ հըրով,
Ես շատ լացեցի,
Ես շատ տանջվեցի-
Անքուն գիշերներ,
Անտուն գիշերներ...

Վ.Զվյագինցևան թարգմանել է.

В бездомные ночи,
В бессонные ночи,
Глухою порой,
В разлуке с сестрой,
Скорбя и любя,
Я горько рыдал.
Я столько страдал
В бездомные ночи,
В бессонные ночи.

Թարգմանչուհին պահպանել է վերնագիրը՝ «Անտուն գիշերներ»- „Бездомные ночи“։ Դա կարևորվում է նրանով, որ ընթերցողը հենց առաջին ծանոթությունից հասկանում է բանաստեղծի տրամադրությունները։ Թարգմանության մեջ պահպանվել է նաև երգի կառուցվածքը՝ 9 տող, որոնցից առաջին երկուսը կրկնված է նաև վերջում։ Մնացած 5 տողում բացահայտված է քնարական հերոսի սիրո ծարավը, կարոտի հուրը, լացը, տանջանքը, այսինքը բանաստեղծի զնահատականը կյանքին՝ սոցիալական ֆոնի վրա։ Թարգմանության մեջ մենք համոզվում ենք „разлука, скорбь, любовь, рыдал, страдал“ բառերին, որ բանաստեղծության հիմնական հենքն են կազմում։ Թարգմանչուհին փոխել է միայն արտահայտվելու եղանակը։ Երգի հայերեն քնագրում քնարական հերոսը դիմում է հերոսուհուն և զրույց-խոստովանությամբ արտահայտում իր ապրումը, իսկ ռուսերեն թարգմանության մեջ քնարական հերոսը առանց դիմելու «բրոջը», պարզապես ներկայացնում է իր ցավը, իր խոհը։ Զվյագինցևայի այս թարգմանության մեջ Ավ.Իսահակյանի հոգու աշխարհն է, նրա զույները։

Վ.Զվյագինցևայի թարգմանություններում իր ճաշակին ու զաղափարներին հարմարեցված փոփոխություններ կան։ Նրա կատարած փոփոխությունները կապված են ռուսաց լեզվի արտահայտամիջոցների, դարձվածների, ժողովրդական բառ ու բանի օգտագործման, բնագրի ռիթմն ու տաղաչափությունը պահպանելու հետ։ Վերցնենք Իսահակյանի «Դա՛րդըս լացե՛ք, սարի սըմբուլ» տողով սկսվող բանաստեղծության թարգմանությունը։ Բանաստեղծության առաջին տողը ռուսերենում ինչու է. „Поплачь, сумбул-трава, со мной“։ Ռուսերեն լեզվում «Դարդըս լացե՛ք» բառակապակցությունը չկա, ուստի թարգմանչուհին օգտագործել է միայն «լացե՛ք» բառը, չկա նաև՝ «Սարի սըմբուլ» արտահայտությունը։ Այստեղ Զվյագինցևան վարվել է հետոդեն, օգտագործել է «սըմբուլը» մի այնպիսի բառակապակցության մեջ, որ ռուս ընթերցողը ճանաչի, թե ինչ է «սըմբուլը», ուստի թարգմանել է. „сумбул трава“։ Եվ որպեսզի պահպանվի քնարական հերոսի լացը, թախծը, տողի վերջում ավելացրել է „со мной“ բառերը։ Եվ ճշտորեն ստացվել է Իսահակյանի քնարական հերոսի դիմումը սարի սըմբուլին, ալվան-ալվան ծաղիկներին, բաղի բլբուլին, զով հովերին, որ իր դարդը լացեն միասին։

Թարգմանչուհին հասել է իր նպատակին.

Поплачь, сумбул-трава, со мной,
Рыдайте, цветы полей,
Плачь соловей, во тьме ночной,
Прохладою, ветер, вей.

Բանաստեղծության հաջորդ տների պատկերային հյուսվածքի մեջ մտնող «Երկինք-գետինք գլխուս մթնան», «անտեր-անտուն կուլան», «յարիս տարան», «յարս ինձի հանեց արտեն», «անճար թողեց», «անդեղ թողեց» արտահայտությունները համարյա անփոփոխ օգտագործել է թարգմանչուհին, որի շնորհիվ պահպանվել է Իսահակյանական ընթերցողության հարազատ շունչը:

Темны просторы немой земли.
Покинутый, плачу я,
Отняли милую, увели,
Отринутый, плачу я.
Не пожалела она меня,
Лишила силы- ушла,
Рану в груди, горячий огня,
Не исцелила-ушла.
Поплачь, сумбул-трава, со мной,
Рыдайте, цветы полей,
Плачь, соловей, во тьме ночной,
Прохладою, ветер, вей.³

Ավ.Իսահակյանին միշտ հուզել է սեփական ժողովրդի և մարդկության ճակատագիրը: Նրա պոեզիան հարազատ ժողովրդի ճակատագրի և ազատասիրական ոգու արձագանքն է: Ուստի Իսահակյանին լրիվ հասկանալու համար անհրաժեշտ է պատկերացնել նրա պոեզիայի պատմա-սոցիալական ընդգրկումների խորությունը: Նրա ընթերցողության տարբեր մտահղացումներում մերթ սիմվոլիկ փոխակերպումը, մերթ՝ այլաբանորեն, մերթ՝ անմիջական հույզով, մերթ՝ խոհական ընդհանրացումներով, մեկ՝ անեծք-բողոքով, մեկ՝ օրինանք-հիմնով մարմնավորվել են ժողովրդի տվայտանքներն ու ակնկալությունները: Վ.Զվյագինցևայի թարգմանությունների մեջ ռուս ընթերցողը կարող է հստակ տեսնել ու պատկերացնել Վարպետի հոգու խառնարանը, նրա երգերի նրբին զոյները, լսել աստվածային ծայմն ու մարդկային խռովքը: Վարպետի միայն «Դու չես հասկանա» բանաստեղծությունը՝ գրված 1908թ. բավական է, որպեսզի ընթերցողը պատկերացնի բանաստեղծի հոգու խռովքն ու սրտի զայրույթը չար աշխարհի դեմ:

Ես՝ զավակ ճնշված ու դժբախտ ազգի,
Որ արյունով է իր ուղին թրջում,
Որ դարեր, դարեր թափը իր բազկի
Շղթան է կրծում ժանգոտ, շառաչում:⁴

Վ. Զվյագինցևայի թարգմանությամբ.

Я угнетенного народа сын!
Идет стезей кровавой мой народ
За веком век, во тьме глухих годин,
Насилья цели ржавые грызет.⁵

Ամբողջ բանաստեղծության մեջ փոփոխության չենք հանդիպում: Թարգմանչուհին պահպանել է Ավ.Իսահակյանի բանաստեղծության առանձնահատուկ նրբերանգները: Ինչ վերաբերում է բանաստեղծական ոտքերին, ապա Զվյագինցևան ենթարկվել է ռուսական տաղաչափության օրենքներին, և այլ կերպ վարվել չէր կարող: Բնագրում տողերը կազմված են 5+5 վանկերից՝ յամբ-անապեստյան սխեմանով: Ուսական օրինակում ևս

տողերը բաղկացած են 10 վանկից: Սակայն պարզ է, որ հայկական շեշտադրության հետ կապված խմբ-անապետյան սիստեմը պետք է փոխարինվեր ռուսական շեշտի թելադրած ուղքերի տեսակներով:

Ավ.Իսահակյանի գրական ժառանգության մի մեծ բաժինը նրա խոհափիլիսոփայական բանաստեղծություններն են, որոնցով լրացվել և ամբողջացվել են բանաստեղծի խոհերի և մտորումների համակարգը: Ամսաի երգչի խոհերը միշտ պատվել են ժողովրդի պատմական լինելության, սոցիալական-հասարակական վերածնության հարցերի շուրջը: Ժողովրդի և հայրենիքի զարկերակի զգացողությունը փոխանցվել է նրա խոհափիլիսոփայական ընդհանրացումներին, որոնք աչքի են ընկնում ասելիքի խորքով և հակիրճությամբ, նման երգերի թարգմանությունը առաջին հայացքից հեշտ է թվում, սակայն դա պահանջում է խորքային խոհի ու մտորումի գերլարվածություն: Այդ երգերի թարգմանությամբ ևս Չվյազինցևան պահպանել է Վարպետի խոսքի շերտերն ու փայլը: Ավ.Իսահակյանի մոտ կարդում ենք.

Հայրենի աղբյուր,
Երգես Վրճիտ
Հյուսել կուգայի
Բյուրեղ կարկաչիդ:
Ես հիմա այնպե՛ս
Հոգնած եմ ու լուռ,-
Դու հավերժ կերգես,
Հայրենի աղբյուր...⁶

Վ.Չվյազինցևայի թարգմանությամբ.

Старый друг, родник,
Прежде каждый миг
В твой живой кристала
Песни я влестал.
А теперь устал,
Молчаливым стал...
Твой же легкий звон
Мчится в даль времен.⁷

Երկու դեպքերում էլ տողերը կառուցված են 5 վանկից, պատկերային հյուսվածքները համարյա նույնն են, բանաստեղծական բնության հավերժության, մարդու կյանքի անցողիկության գաղափարով: Վ.Չվյազինցևան այս հաջողությանը հասել է աշխատասիրության շնորհիվ: Նա առանց փոփոխումների կատարելու հասել է Ավ.Իսահակյանի խոսքի թարգմանության հաջողությանը:

Ավ.Իսահակյանի 1975թ. հրատարակված ռուսերեն ընտրանիում Վ.Չվյազինցևայի տարբեր տարիներին թարգմանած բանաստեղծությունների առկայությունը ապացուցում է, որ նա իր անունը կապել է նաև անմահ Վարպետի հավերժախոս երգերի հետ՝ իր բարձրարվեստ թարգմանությունների շնորհիվ:

1. Լ.Մկրտչյան, Ավ.Իսահակյանը և ռուս գրականությունը, «Հայաստան», 1975, էջ 180
2. Պ.Տիգինյան, Մ.Ռիսկի, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1973, էջ 198
3. Ав.Исаакян, Избранные произведения, т.1, Москва, 1975, стр.54

4. Ավ.Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, Երևան, 1950, էջ 207
5. Ավ.Իսահակյան, Избранные произведения, т.1, Москва, 1975, стр. 183
6. Ավ.Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, Երևան, 1950, էջ 228
7. Ավ.Իսահակյան, Избранные произведения, т.1, Москва, 1975, стр. 202

ХАНИЯН К.С.

ПОЭЗИЯ А.ИСААКЯНА НА РУССКОМ ЯЗЫКЕ

РЕЗЮМЕ

Армянский народ в 2000 году отметил 125-летие со дня рождения великого поэта, одного из гигантов мировой поэзии Ав.Исаакяна.

О связях Ав.Исаакяна с русской литературой писали такие литературоведы как К.Григорян, Г.Овнан, П.Макинцян, Эд.Джрбашян, Г.Ованисян, Авик Исаакян и другие. Отдельно выделяется исследование академика Л.Мкртчяна "Ав.Исаакян и русская литература", где показаны связи Исаакяна с русской действительностью; Исаакян как знаток и пропагандист русской литературы; процесс переводов из Исаакяна на русский язык, как и Исаакян в оценке русской литературной критики.

Впервые стихотворение Исаакяна на русском языке было напечатано в еженедельнике "Россия и Азия" в 1899 году в переводе А.Грена, затем стихотворения Исаакяна печатаются в журналах "Вестник иностранной литературы"(1902), "Детское чтение"(1903), "Нива"(1904). Наконец, под названием "Цветы Араза" в 1907 году издается первый сборник стихов Исаакяна на русском языке.

В 1915 году А.Блок перевел 20 стихотворений Исаакяна, 13 из которых в 1916 году были изданы В.Брюсовым в антологии "Поэзия Армении".

В дальнейшем было издано несколько сборников Исаакяна, где особое место занимает книга "Избранные произведения", изданная в 1975 году к 100-летию юбилею Варпета. Среди выдающихся переводчиков, участвовавших в издании сборника свое особое место занимает русская поэтесса-переводчица В.Звягинцева. После А.Блока В.Звягинцева одна из тех, кто смысл своего творчества видела и в переводах стихотворений Исаакяна.

В данной книге были представлены 22 ее перевода, которые полностью соответствуют требованиям переводческого искусства и не только знакомят русских читателей с поэзией Исаакяна, но и служат взаимообогащению культур обоих народов.

KHANIAN K.S.

THE POETRY OF ISAAKIAN IN THE RUSSIAN LANGUAGE.

SUMMARY.

In 2000 year the Armenian people celebrated the 125-th anniversary of the great poet, one of the giants of world's poetry A.Isaakian.

Such literary critics as K.Grigrorian, G.Ovnan, P.Makintian, Ed.Girbashian, G. Ovanisian, Avik Isaakian and others wrote about A.Isaakian's ties with Russian Literature. The investigations of Academician L.Mkrтчian "A.Isaakian and Russian Literature", where he shows Isaakian's ties with Russian reality, the process of translations of Isaakian's works into Russian, as well as Isaakian's activity in the estimation of Russian literary critics must be marked separately.

Isaakian's first poem was published in Russian in weekly "Russia and Asia" in 1899 in the translation of A.Gren, then his poems were published in the journals "Herald of Foreign Literature"(1902), "Children's Reading"(1903), "Niva"(1904). At last, in 1907 the first collection of Isaakian's poems was published under the name of "Flowers of Araz".

In 1915 A.Blok translated Isaakian's 20 poems, 13 of them were published in the anthology "Poetry of Armenia" by V.Brusov in 1916.

Later, some Isaakian's collections were also published. The book "Selected works", published in 1975 in commemoration of the 100-th anniversary of the Master, takes a special place. Among outstanding translators, who took part in publication of the collection, the Russian poetess-translator V.Zvyagintseva takes a special place.

After A.Blok V.Zvyagintseva is one of those translators who considered the translations of Isaakian's poems to be the sense of their activity.

22 of her translations were included in that collection. They fully meet the requirements of the art of translation and introduce not only Isaakian's poetry to Russian readers, but also serve to mutual enrichment of both people's culture.

Арустамян М.С.
Необычный роман Э.Хильзенрата -
“Сказка о последней мысли”

В последнее столетие, роман, если он еще и касался исторической темы, продолжал оставаться ведущим и ответственным видом литературы.

Литература, тяготея к философскому постижению действительности, совершила вторжение художников - мыслителей в новое идейно-политическое и нравственное осмысление исторических событий.

К таким художникам - мыслителям относится и немецкий писатель, автор романа “Сказка о последней мысли” Эдгар Хильзенрат.

В 1989 году выходит роман Э.Хильзенрата “Сказка о последней мысли”. Книгу о драматических событиях армянского народа 65-летней давности написал человек, сам переживший подобные события. Художник, переживший драматическое время, печальные исторические процессы, больше нуждается в обращении к прошлому, причем каждый писатель выбирает в истории наиболее близкое ему.

Трагическая пора фашистского гнета и приход Гитлера к власти и последствия этой власти заставили многих немецких писателей обратиться к роману, посвященному самому мрачному периоду истории. К числу таких художников немецкого слова, писавший романы на подобные темы, относится и Эдгар Хильзенрат. Он также выбрал эпоху разрушения, мракобесия, анционального гнета. Ужасы и варварство начала XX века, фанатизм религиозной нетерпимости и национальная рознь все использовано Хильзенратом в своем произведении как нарек на фашистские зверства, как аналогия с Гитлеровской Германией.

Судьба автора “Сказки о последней мысли” драматична, потому что в ней пренебрегается судьба целого еврейского народа. Испытав преследование еврейского народа фашистской Германией, писатель глубже осознал ответственность за жизнь своего народа и человечества и понял, что не может стоять в стороне. Противопоставить насилию, нетерпимости и бесчеловечности высокие идеи гуманизма - вот задача этого писателя.

Эдгар Хильзенрат родился в 1926 году когда Германию уже навывали националистической. Поэтому Хильзенрату находится в такой стране было трудно, так как она вела антисемитскую пропаганду.

В 1938 году его отец, опасаясь честного, отправил свою жену и детей в Румынию, где жили бабушка и дедушка по матери. В Румынии, пришедшее к власти фашистское правительство Рудера также начало преследование евреев. В Бухаресте евреи были загнаны в лагеря смерти и повешены.

14 октября 1941 года всех евреев в Румынии стали эвакуировать на восток. Их направляли в разрушенный украинский город Могилев - Подольск в еврейское Гетто. В Гетто оказались Э.Хильзенрат с братом и сестрой. Все ужасы, пережитые в Гетто, будущий писатель описал в своем романе “Ночь”.

Таким образом, пережив преследование и унижение еврейского народа, Хильзенрат посвятил свое произведение народу, который также ощутил последствия геноцида и нес на себе его раны.

Изучив основательно много книг об армянском геноциде, об армянах и о Армении, Хильзенрат написал роман, чтобы подобная история не повторилась и не забылась. Это

эпическое произведение, с философским обобщением. Несмотря на кажущуюся простоту романа "Сказка о последней мысли", принадлежит к сложнейшим явлениям немецкой литературы. "Книга галереи народов, ровным образом книга воскресения - жестокая книга и еще книга жизни, веры и чуда. Повествование романа, которое ведется в стиле восточной сказки, берется из армянской истории с изобилием картин из жизни армянского народа, из сказаний и преданий этой христианской нации".¹

О резне в Турции написано достаточно много, что казалось бы, уже трудно сказать что-то новое. Тем не менее национальная трагедия армянского народа продолжает оставаться одной из самых жгучих и волнующих тем в современной мировой литературе. Турция для писателя страна, где веками складывался фанатизм смерти. Бессмысленная жестокость преступной политики, в которую вовлекло свои народы его правительство, показано в романе с неотразимой конкретностью.

В своей речи по поводу присуждения Хильзенрату премии имени Альфреда Дельблина за этот роман Севилла Крамер сказала: "Какой жуткий мир, в котором мы живем, как тонка покрывающая цивилизации, варвары, которые скрываются под ним - Хильзенрат показывает это особым средствами, стоя одной ногой в глубоком прошлом. Сказка соединяет архаическое вместе, что обычно стремится распасться: примитивность, бессмысленность, жуткость и систематичность, методичность, планомерность ужас и рациональность".²

Жизненный и писательский опыт автора романа, его обостренное гражданское восприятие трагедии эпохи, создают удивительно убедительную, реалистическую картину того грозного времени. Повествуя о геноциде армянского народа, писатель думает не только о трагическом прошлом, но и о времени настоящем, о борьбе со злом, насилием, жестокостью. Эта всеотзывчивость одна из давних традиций словесного искусства, которая с особой силой проявилась и в процессе сознанием гуманистического духа.

"Сказка о последней мысли" - роман, который содержит в себе сказку и состоит из пролога, двух книг и эпилога. Пролог и эпилог окружают сказку с обеих сторон.

Повествование в прологе ведется в настоящем времени (1988 год), из настоящего времени действие переносится в прошлое (1915 год).

Во второй книге события развиваются с 1978 года и

Третья книга продолжает историю 1915 года и ведет ее до 1943 года. Эпилог снова написан в настоящем времени. Нужно отметить, что роман не ограничивается только упомянутыми периодами времени. Роман содержит разные истории о предках Товмы, имеются легенды об армянских королях и принятии христианства армянами.

Создавая свое произведение, Хильзенрат возродил большую литературу, возродил эпос, где в гипербазированной форме передает волнующие проблемы и чувства, передает жестокую историю преследования и и скоренения армянского народа. Поэтому и проявилась такая тяга к эпическому наследию прошлого - к легенде, преданию, мифу, к самым истокам истории.

Другая особенность художественной манеры Хилзенрата - обращение к порнографии и эротике. Внимание к этой стороне жизни объясняется необходимостью создания внутреннего мира этих двух народов и их культура.

Все великие произведения художественной литературы представляют собой нечто настолько своеобразное, что не укладываются полностью в соответствующую литературную классификацию "Сказка о последней мысли" также не укладывается вполне в форму романа,

ибо перед нами произведение новаторское, неповторимое. Было бы неправильно полагать, будто оно выпадает из традиций исторического романа. В творчестве Хильзенрата родился новый тип романа для немецкой литературы - исторический роман в стиле восточной сказки, в которой взят целый период жизни армянского народа в условиях национального угнетения.

Создавая свое произведение художник преследует цель показать неуместность размеров этой трагедии. Автор ведет свое повествование в стиле восточной сказки потому, что ощущает необходимость глубоких обобщений, выходящих за пределы фактов, доступных констатации. В то же время, используя аллегорию, сатиру легенду в повествовании, писатель тесно связывает свою сказку с реальной действительностью, где основную организационную роль играет развитие событий, которые относятся к большому периоду времени и позволяет полно показать целую жизнь народа на определенном этапе истории. Таким образом, события становятся фундаментом произведения и влияют на судьбу людей в романе.

Роман построен таким образом, что действие постоянно переносится из наших дней во времена минувшие. Мир, который он отражает - мир действительный и мир мифический слиты, сплавлены воедино. Мифическое раскрывает себя как сложное художественное иносказание, иносказание не только допустимое, но в ткани этого романа необходимое. Миф - это своеобразное углубление реалистического метода. Он является формулой, ключом к раскрытию загадок национальных судеб.

Мир в сказке о последней мысли объективен. Повествование содержащее в себе сказку движется не в пустоте, эта сказка - была. Она возвращает читателя в несправедливые повороты истории, в страдания, показывает как мир чреват трагедией. Хильзенрат знал, чтобы быть убедительным, художник должен представить достаточно полную, объективную картину событий, в котором зарождались трагедии его сюжетов. Независимо от выбранной формы, это делает его реалистом и образует принципиально реалистическую основу его необыкновенного произведения. Хильзенрат - это тот художник-реалист, который пробивался через своих героев к глубине армянского духа, то есть к народу угнетенному, к его состоянию, к его действительности, к его противоречиям. Герои Хильзенрата живут в несправедливом мире и биография их должна потрясти мир своими чудовищными фактами. Писатель в своеобразной форме показал действительность глубже, вернее. Он показал историю в ее хаосе, в ее противоречиях, в ее муках. И как художник он создал серию великих реалистических эпизодов, посвященных потрясенной, хаотичной действительности.

Для автора романа является не только внешнее движение сюжета, связь событий, но и развитие философской, психологической и этической мысли. Роман строен в форме диалога, который происходит между двумя главными фигурами романа - Меддой и Товмой Хатизяном. Оба выступают в романе как рассказчики. Они изображены Хильзенратом для того, чтобы умудренные жизненным опытом люди, повествующие о тяжелых годах, объективно восстановили историю. Введение таких рассказчиков позволяло Хильзенрату добиться особой достоверности и проникновенности повествования. "Последняя идея человека - так говорится в сказке, пребывает вне времени. Сидя у ворот анатолийского города Бэкир, Товма Хатизян еще мысленно совмещает путешествие в историю своей семьи, последним отпрыском, который он является. Провожая Медду, сказочника, он продолжает жизненный путь своего отца, который из маленькой, идиллической горной деревни провел остаток жизни в застенках турецких правителей. Он был очевидцем великих армянских погромов в 1915 году, когда правительство Константинополя попыталось навсегда уничтожить армянскую проблему".³

В романе нет четкой фабулы, нет традиционного сюжета, избранная автором форма романа позволила создать широкую картину турецкой действительности. Замедленное развитие действия как бы гармонирует с изображаемой в романе застывшей, на первый взгляд, жизнью.

Как и в любой сказке, одновременно с положительными героями произведения одинаково волнуется и читатель. Традиционное изображение зла в сказке ни в коем случае не делает ее некрасивой, а объединяет читателей против зла.

Свое повествование сказочник начинает в прологе, который является фундаментом всей сказки. "Сказка о последней мысли. Я тебе расскажу: жила-была сказка о последней мысли. Она засела в последнем крике страха, да там и спряталась".⁴ Читатель из диалога между Товмой и Медой выясняет, что Товма, выросший сиротой, лежит при смерти и его последней мыслью перед смертью должна стать сказка, которую нам хочет рассказать сказочник. Но об этом читатель узнает не сразу, а разбирается в этом постепенно. Перед ним открывается история рождения Товмы. Продолжая свое повествование, писатель тем временем показывает всю драматичность происходящего: "Я поведал молчанию историю истребления народа. Я обратил внимание молчания на то, что насколько важно, чтобы об этом говорилось чаще. Я сказал: об этом должен знать каждый! Иначе как же в будущем предотвратить народоистребление, если каждый считает, что ему нечего знать и нечего предотвращать, раз ничего такого он и представить не может?".⁵ И чтобы выслушать сказку, читатель на время прощается с Товмой Хатизяном. Сказка разворачивается словами: "Ну, слушай, Товма Хатизян. Расскажу я тебе: бир вермиш, бир екмуш, бир вермиш... Жил да был, жил да...".⁶ И читатель знакомится с Вартаном Хатизяном, отцом Товмы, с заключенным одного из турецких тюрем 1915 года.

Но повествование постепенно ведет читателя в былые времена армянского народа, наполненные обычными человеческими заботами о доме, о детях. Так, перед нами возникает широкая картина жизни армян в Османской империи накануне геноцида: свадьбы, крестин, горести. Читатель знакомится с различными историями из детства Вартана и его сестер и братьев. Писатель воссоздает не только образ жизни взрослых с их обычаями и нравами, трудовыми а также жизнь армянских детей. Но, несмотря на это, такая жизнь проходила в постоянном страхе перед курдами и турками и это бесправное существование держало армянский народ в постоянной психологической готовности к предстоящему геноциду.

В романе центральной становится тема трагического столкновения разума и неразумия, культуры и варварства, гуманистической широты и фанатической национальной нетерпимости. Главный герой, Вартан Хатизян, чистодушный и порядочный, показывает торжество духа над грубой властью. Это

конечное торжество дается ценою бесчисленных унижений, мучительных испытаний.

Изображая личность, воплощающую в своей судьбе судьбу целого народа, писатель становится выразителем народной мысли, философом. Для него Турция олицетворение человеческого неразумия. Ее постоянными спутниками являются глупость, лицемерие, религиозные предрассудки, жестокость и звероподобные порядки. Писатель высмеивает позорную работу прислужников турецкого правительства, в частности, мюдира, который заставляет Хатизяна признаться во всемирном заговоре армян, шпионаже и убийстве австрийского наследника престола. Прислужники идут на все, лишь бы сделать себе имя в Константинополе перед своим начальством.

Хильзенрата занимает мера человеческой низости и ее политического выражения в допросах, унижениях, подлых государственных соображениях. Все виды преследования изощренного и прямого, все формы угнетения, утонченной или звериногрубой показаны в этом романе. Писатель показал несостоятельность любой эгоистической узурпаторской власти и ее представителей, уничтожающих народы для утверждения собственных целей и мощи. Эта неприемлемая, бессмысленная, ничем не оправданная своей жестокостью власть, которая завершая один круг жестокости сменяет ее другим. И каждый этап терзаний человека — законченная трагическая стадия и читателю приходится пережить все зло мира, над которым размышляет сказочник: "Теперь вопли пытаемых звучали иначе, не так как раньше. А может, проходим просто так казалось. Крики пронимали до мозга костей. Порой звучало так, будто какой-то певец на своей пыточной скамье старался петь под такт немзыкального тюремщика, неотесанного, не знающего гамм. Крики там были: захлебывающиеся, протяжные, они могли исходить только от узника, которому чем-то затыкали рот, но не так, чтоб начисто задавить крик, наверно какой-нибудь жандарм зажимал кончик языка своими пальцами и малость царапал его, но не слишком, потому что язык еще нужен был узнику, чтоб выкладывать признания, которые от него ожидали..."⁷ Так перед читателем предстают описания особо ужасных видов пыток, которые применялись в турецкой тюрьме и проглядывает обобщенный образ обреченного на пытки и смерть армянского народа.

Автор, пытаясь раскрыть истинные причины и цели уничтожения армян, утапливает, что целью депортации было не переселение в Месопотамию, а массовая смерть по пути туда, дабы затем иметь возможность объявить озабоченному миру: "В спорных анатолийских провинциях турции нет никакой армянской национальной проблемы, ни армянского вопроса, ни даже армянского большинства. Видите ли, милостивые господа... насколько мне известно, там вообще нет больше ни одного армянина".⁸

Поведав страшную сказку, сказочник интересуется, какое название дадут историки факту уничтожения народов.

Всю глубину и трагичность своих мыслей писатель пытается передать с помощью гротеска, аллегии и сатиры. Яркие гротесковые сцены наглядно выражают сатирическую мысль автора. Задача Хильзенрата заключалась в том, чтобы показать нецелесообразные и неразумные поступки прислужников турецкого правительства.

Всю глубину трагичность своих мыслей писатель пытается передать с помощью гротеска, аллегии и сатиры. Яркие гротесковые сцены наглядно выражают сатирическую мысль автора. Задача Хильзенрата заключалась в том, чтобы показать нецелесообразные и неразумные поступки прислужников турецкого правительства.

- Можешь где-нибудь ложку раздобыть?

- Нет, мудир-бей. Не посреди ночи.

- Можешь засунуть ему палец в рот?

- Это я могу, мудир бей. Да только пальцы у меня короткие. Тут надо что-то длинное всунуть, так, чтоб он поперхнулся.

- Ну, а если ножом?

- Надо чего-нибудь помягче, мудир-бей.

- Или стволом твоего ружья?

- Тоже не мягкий, мудир-бей.⁹

-Тоже не мягкий, мюдир-бей.⁹

Конечно, с точки зрения здравого смысла, все перечисленные поступки мусульман откровенно нелепы, глупы идиотичны. Обращение писателя к сатире было не случайным, а диктовалось серьезными творческими задачами, несло важную идейную нагрузку. "Жандармы прежде всего обыскивали волосы жертв, особенно собранные в узлы волосы женщин. А поскольку золота нашли совсем мало, то раздирали жертвам рты и пытались просунуть пальцы до желудка, потому что полагали - слудок армянину для того, чтоб утаивать золото от государства".¹⁰ Благодаря сатире автору удалось до конца обнажить и сделать предельно наглядными и зримыми глубинные противоречия реальной жизни. Его сатира — не уход от действительности, от ее жгучих проблем, злободневных вопросов, а особая форма сатирического отображения этой действительности. "Грабители взбеленились. Так один сказал: нет, они его унесли. Мы должны догнать их на полевой дороге. Они зашили его в одежду, спрятали в обуви. Но другие говорили: нет.

Армянин хитер. Наверняка, он проглотил золото. Надо им животы вспарывать".¹¹ Эти сцены содержат резкое, безоговорочное осуждение и уничтожающее осмеяние отрицательных явлений, приносящих большой вред, и притом не одному человеку, а целому народу. Показывая зло сатирически, автор преувеличивает его, доводя поведение мусульманских народов до абсурда.

После турецкой сказки начинается еврейская сказка. Стремление сделать роман воинствующе гуманистическим, Хильзенрат использовал принцип исторических параллелей двух народов, армянского и еврейского: "Эти два народа можно почти перепутать. Просто невероятно".¹² Причастность к общему горю двух народов, вынесших все муки геноцида, делают их историю схожими в понимании писателя.

В конце романа, Вартан Хатизян, который много раз находился на грани жизни и смерти и всякий раз избегал гибели, устав бороться со своей судьбой, сдается ей без сопротивления. Прервав жизнь Вартана на земле, писатель развивает другую мысль, обязательную для этого народа. Если не тело, то душа должна найти желанное счастье. И Вартан летит в страну Айастан и попадает к родственникам. И автор заверяет читателя, что к ним придет их сын, который уже не не Товма, а Айк — легендарный герой армянского народа. Сказка завершается многозначно. Хильзенрату чужда философия отчаяния, поэтому он строит философию надежды и возрождения: "На одном цветке неподалеку сидел бывший армянский священник. Тот видел как Анаит, мать армянская, нашла своего утраченного сына. Айк плодит будет и будет иметь большое потомство, думал он. А дети Айка и дети детей их населят землю, которая всегда была предназначена"¹³

1. Edgar Hilsenrath, Das Märchen vom letzten Gedanken, Piper, München 1989, s.3

2, а. а. О., s.3 завершаются в 1899 году, в конце 19 века.

3. а. а. О., s. 3

4. а. а. О., s. 5

5. а. а. О., s. 19

6. а. а. О., s. 23

7. а. а. О., s. 408

8. a. a. O., s. 394
9. a. a. O., s. 16
10. a. a. O., s. 433
11. a. a. O., s. 430
12. a. a. O., s. 39
13. a .a. O., s 503

Առատամյան Մ.Ս.

Է. Խիլզենրատի «Յեքիաթ վերջին մտքի մասին» անսովոր վեպը

Ա մ փ ո ւ լ մ

«Վերջին մտքի հեքիաթը» վեպում գերմանացի դրող Է. Յիլզենրաթը արևելյան հեքիաթի ոճով ներկայացնում էXIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի մեղման ու բռնահամեման պատմությունը:

S u m m a r y

In his novel "The Tale of the Last Thought" the German writer E. Hillzenrat in an oriental tale style shows the history of chasing and eradiction of the Armenian people in the Ottoman Empire which took place at the end of the 19th and the beginning of the 20th centuries.

ԲԱԼԱՅԱՆ Ռ.Ա.

Կանայք Արցախյան պատերազմի հերոսամարտուն

«Հայոց աշխարհի փափկասուն տիկիները, որոնք փափուկ կյանքով և քնքուշ մեծացել էին բազմոցների և գահավորակների մեջ շարունակ բռնիկ ու ոտքով էին գնում աղոթատեղեր, առանց ծանօթանալու ուխտելով ու խնդրելով, որ կարողանան դիմանալ այն մեծ նեղությանը»:

Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989 թ., էջ 405

Հայոց ազգային ազատագրական պատերազմի պատմությունը հարուստ է հայ քաջորդիների, հայրենի հողի փրկության և ազատագրման համար պայքարի հերոսական էջերով, նրանց արյան գնով նվաճված հաղթանակներով:

Արցախի աշխարհաքաղաքական դիրքը ու գոյապահպանման խնդիրը պահանջել են, որպեսզի հայրենիքի ազատության գործին զինվորագրվեն նաև նրա քաջարի դուստրերը և իրենց մարտական խիզախումներով կանխեն արցախահայության դեմ ուղղված բարբարոսությունները:

Դեռևս վաղ ժամանակներում, երբ թաթարական հրոսակների և թուրքական բռնակալների լուծը ծանրացել էր Ղարաբաղի հայության վրա, Արցախի հայրենասեր դուստրերը փրկության ելքը տեսել են իրենց անձնագոհ պայքարի մեջ, վճռելով սուր վերցնել արցախյան հողը ոտք դրած ավեր ու ապականություն սփռող դահիճների դեմ:

Արցախի դուստրերը արժանի ներդրում են ունեցել գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ ճակատագրական մարտերում, ցուցաբերելով հիմնավոր ժամանակներից փառաբանված, արցախուհուն բնորոշ խիզախություն ու մարտունակություն:

1980-1990 թվականներին, երբ արցախահայությունը պայքարի ելավ անկախության և հայության պահպանման համար և բազում հայրենասերներ ընդգրկվեցին արցախյան պատերազմի ժամանակներում, Արցախի խիզախ դուստրերը քաջ գիտակցելով հայ ժողովրդի արցախյան հատվածի վրա կախված վտանգը, առանց վարանելու զենք են վերցրել ու պատրաստակամություն հայտնել ազնիվ փրկության զոհասեղանին իրենց կյանքը զոհաբերելու համար:

Արցախյան պատերազմը ի հայտ է բերել և կոփել խիզախ, նախաձեռնող, պայքարում անմահացող և անձնագոհ, ազատություն տենչող տաղանդավոր հայրենասերների մի սերունդ, որը մարտի նետվեց նենգ թշնամու դեմ, նրան արժանի հակահարված տալու, իր ազատությունը զենքով նվաճելու համար:

Ռազմաճակատում հայ քաջորդիների հետ մեկտեղ վճռական գոտեմարտի ելան հայրենի հողի պաշտպանությամբ զինվորագրված կանայք, որոնք իրենց անապառ եռանդով ու անձնագոհ նվիրվածությամբ կերտեցին Արցախի հերոսական պատմությունը: Նրանց վտանգներով լի մարտական ուղին փառքով պսակվեց:

Արցախի հերոսամարտուն առաջին վաշտի հրամանատար Բեկորի (Աշոտ Դուլյանի) կողքին հայտնվեց ու քաջաբար մարտնչեց Արցախ աշխարհի պարծանքն ու պատիվը մարմնավորող, թատերական բեմահարթակը ռազմադաշտով փոխարինած, ռազմի դաշտում հրաշքներ գործող ժամնա Գալստյանը:

Դեռևս արցախյան շարժման արշալույսին փայլատակեց ժամնայի տաղանդը, որն աչքի ընկավ իր կրակոտ ու խելացի ելույթներով, շիտակ ու սկզբունքային խելքով:

Անպարտելիության գրավակալը համարելով միասնական պայքարը, ժամնա կոչ արեց կանանց, Ռզեշչեց նրանց անսահման հավատ ունենալ զաւիթ հաղթանակների նկատմամբ:

Իսկ այնուհետև դարաբաղյան պատերազմի և ողջ հակամարտության ընթացքում ժամնա Գալստյանը զենքը ցած չդրեց, իր ունակություններն ու կարողություններն ի սպաս դնելով հայրենիքի ազատության վեհ գործին:

Արցախյան գոյամարտի 10-րդ տարեդարձի առթիվ ԼՂՀ նախագահի հրամանագրով ժամնա Գալստյանը պարգևատրել է «Արիության համար», իսկ ՀՀ նախագահի հրամանագրով «Սովսես հուրենացու» մեդալներով: 1998թ. նա արժանացել է Բրիտանական միջազգային կազմակերպության կողմից սահմանված «Ոսկե սիրտ» շքանշանին, որի վկայականի վրա գրված է «Ուրիշի ցավն ու տառապանքը կիսելու կարողության, մարդկանց լույս ու քերմություն տվող սրտի համար»:

Կանայք ամմասն չմնացին հերոսական պայքարից նաև ֆիկուներում:

Ծանր ու դժվարին ուղի է անցել արցախյան բանակի քիվ 46492 զորամասի հրամանատարի ֆիկուների գծով տեղակալ, ղեկարությունները չճանաչող, պատերազմի բովում քծված, զնդապետի զինվորական աստիճանին հասած Էլմիրա Աղայանը: Հերոսաբար դիմակայելով պատերազմական շրջանի զրկանքներին, Էլմիրա Աղայանը իր գործունեության ընթացքում օգնում էր դիրքերում մարտնչող մեր նվաճումները, ստեղծագործող աշխատանքն ու անդորրը պաշտպանող զինվորներին, դրսևորելով հոգատարություն և ուշադիր վերաբերմունք նրանց նկատմամբ:

Կանայք կամավորագրվել էին Արցախում կազմավորված ինքնապաշտպանության կանոնավոր մարտունակ բանակին:

1992թ սեպտեմբերն էր, երբ կապավոր, իսկ հետո կանանց ջոկատի հրամանատար Վարդուհի Գևորգյանը և Գայանե Առստանյանը ներկայացան Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանին կանանց ջոկատ ստեղծելու առաջարկությամբ: Վերջինս ընդառաջեց նրանց և երկու շաբաթվա ընթացքում համալրվեցին ջոկատի շարքերը:

Արցախյան ազատագրական պատերազմը ռազմի դաշտ տարավ շատ հայրենասեր կանանց, որոնք արիաբար մարտնչել են արցախյան պատերազմի հերոսամարտերում: Բերդաձորում, Խաչենում, Խծաբերդում, Ասկերանում, Մարտակերտում, Շուշիում և այլուր:

Բուժքույր Ջուլիա Դայրաբեկյանը դեռ 1988թ դարաբաղյան շարժման սկզբնական փուլում բժշկական օգնություն էր ցույց տալիս ցուցաբերներին հանրահավաքներում և ցուցրում: Իսկ երբ արցախահայությունը բռնության դեմ ընթոստացավ, պարսպվեց ու զենք վերցրեց հայրենի երկրամասը բարբարոս թշնամուց ազատելու համար, նա իր տեղը գտավ ազատամարտիկների շարքում ու իրեն դրսևորեց հերոսական արարքներով:

Ջուլիան իր առաջին մարտական մկրտությունն ստացավ Կրկժանի կրակակետերի վերացման ժամանակ: Հետո մասնակցեց Շուշիի, Ասկերանի և Մարտակերտի շրջանների գյուղերի ազատագրման մարտերին: Նրա մարտական ուղին 1993թ. բերեց Ջուլիային կենտրոնական պաշտպանության շրջանի առաջին գումարտակ, որտեղ նա բուժկետն էր ղեկավարում, ու մնաց գումարտակի հետ մինչև 1994թ վերջը:

Մարտակերտի հերոսատաշտարակի մոտ տեղի ունեցող մարտերում թշնամին չէր ուզում զիջել ռազմավարական նշանակություն ունեցող բարձունքը: Հայ ազատամարտիկները չէին մատնաջում իրենց դիրքերից: Վիրավորներ ու զոհեր շատ կային: Փորձառու բուժքույրը նկատելով, որ թուրք ելուզակները փորձում են օդակի մեջ առնել հայ մարտիկներին, շտապեց ճակատի առաջնագծից հանել զոհվածներին ու վիրավորներին: Ջուլիան իր հոգատար ձեռքերով փրկում էր հարազատ լեռնաշխարհի ազատամարտիկներին, որոնք վստահում էին նրան մի մարտից առաջ նրա հետ կիսում իրենց գաղտնիքները: Ջուլիան գիտեր բոլորին համատեղ մղած մարտերից, գիտեր նրանց յուրաքանչյուրի բնավորության դարաբաղյան հատուկ ինքնատիպ գծերը: Իսկ լեռնաշխարհի քաջերը հող-հայրենին ազատագրելու համար հերոսաբար կռվել, հարթել և զոհվել գիտեին: Ջուլիան մարտնչում էր հայրենիքի պաշտպան մարտիկների կողքին «Գրադի» կրակահերթերի, հեռահար թնդանոթներից, հրասայլերից արձակած արկերի որոտների տակ: Պատահում էր՝ օրվա ընթացքում մի քանի անգամ վիրավորներ էր

հասցնում Ստեփանակերտի զինվորական հիվանդանոց արցախյան հերոսամարտերի թեժ կետերից՝ Մալիբեկլիից, Ասկերանի ու Մարտակերտի գյուղերից:

Հայրենիքի ազատագրական կռիվներին զինվորագրված հերոսուհուն ամենուրեք «փրկարար Ջուլիար» էին կոչում:

Ազերի հրոսակների դեմ կատաղի կռիվներում՝ Դրժբոն, Չլդրան, Պոդոսագոմեր, Վաղուխաս, Գյուլաթաղ, Չափար, Տոնաշեն, Կուսապատ, Կիչան գյուղերի ազատագրման համար, արցախյան սուրբ հողը հրի ու սրի մատնող թշնամու բարբարոսության դեմ մարտնչում էր մյուս արիասիրտ դուստր՝ Մուսլիմա Ասրյանը: Ստալինյան ծնվել էր Բաքվում: Նա եկավ իր նախնիների քնօրրան՝ Ստեփանակերտ 1989 թ., երբ Արցախում թուրք հրոսակախմբերի դեմ անգիջում պայքար էր ծավալվել, երբ մեր երկրամասի քաջասիրտ զավակները ստեղծել էին ինքնապաշտպանական խմբեր ու ջոկատներ թշնամու հարձակումները սանձելու նպատակով: Ստալինյան 16 տարեկան էր: Իմանալով, որ արցախյան գոյամարտին բուժօգույրներ են պետք, սովորեց բուժօւյրական կուրսերում, ապա մեկնեց ռազմաճակատ ու դարձավ քաջ ազատամարտիկ Սամվել Հարությունյանի հրամանատարությամբ կազմավորված երրորդ գումարտակի բուժօւյրը:

1992 թ. հոկտեմբերի 17-ին Կոնոդոտ գյուղի մոտ մղվող մարտերից մեկում վիրավորվեց, բայց իրեն հատուկ վճռականությամբ և անճնազոհ պահվածքով շարունակեց մնալ Արցախի ռազմաճակատում: Նույն թվականի հոկտեմբերի 30-ին 2-րդ անգամ վիրավորվեց: Դրժբոնի զինվորական հիվանդանոցում ապաքինվելուց հետո շարունակեց իր մարտական ուղին, վառ էջեր գրելով հայրենիքի ազատության համար կենաց ու մահու պայքարի պատմության մեջ: Ստալինյան զենքը ձեռքին մարտնչում էր հայրենի երկրամասի ազատագրության համար: Հարկ եղած դեպքում գնում էր նաև հետախուզության:

Վերջին մարտից առաջ, երբ հրամանատարությունը որոշել էր Ստալինային թողնել քիկունքում, նա գերադասեց կանգնել գումարտակի հայրենյաց պաշտպան մարտիկների կողքին, մարտնչել նրանց հետ: 1993 թ. մարտի 20-ին, երբ թուրք ելուզակներից համարյա ազատագրվել էր Մարտակերտի շրջանի գյուղերը, Հակոբ Կամարի գյուղի մոտ նենգ թշնամու դավադրի ակամից զոհվեց Ստալինյան, չհասցնելով տեսնել հայրենի հողը ազատագրված, որը նրա միակ փափագն էր: Հայրենասեր ծնողների երախտապարտ դուստր Ստալինյան քաջատեղյակ էր 1915 թ. հայոց ցեղասպանության և սումգայիթյան եղեռնագործության պատմություններին և արցախցիների հերոսամարտում հավատարիմ մնալով իր նախնիների քաջազնական, ազատաբաղձ ոգուն, «պատերազմի աստվածուհի» անվանման արժանազատ:

Արցախի հերոսամարտերում, զինվորական կանանց շարքերում մաքառում և հրաշքներ էին գործում նաև դիպուկահար կանայք: Նման հերոսուհիներից է Մարտունու շրջանի Հացի գյուղում 1969 թ. ծնված Մարգարիտ Մարգարյանը: Նա սիրեց զենքը դեռևս դպրոցական տարիներին: Հաճախակի էր մասնակցում հրաձգային մրցույթներին ու առաջնային տեղեր գրավում: Նրա կարողությունները բազմապատկվեցին Շուշի քաղաքի ուսումնական գումարտակում և կարճ ժամանակում տիրապետելով հրաձգության գաղտնիքներին, Արցախի քաջասիրտ դուստրը՝ Մարգարիտը, զինվորագրվեց իսրազատ լեռնաշխարհի ինքնապաշտպանական ուժերին: Արցախյան հողի պաշտպանությունը նրա համար դարձավ գերազույց նպատակ ու ամենացորդ նվիրվեց Արցախի փոքրիկվոր գոյապայքարին: Ազատագրական պայքարի բովում փայլատակեցին Մարգարիտի՝ հմուտ նշանառուի ընդունակությունները: Մարգարիտը մասնակցեց Մարիբաբայի օպերացիային (1992 թ. Նոյեմբերին), որով պետք է լուծվեր Շուշվա շրջանն ամբողջովին ազատագրելու խնդիրը: Թշնամին կատաղի գրոհների էր դիմում: Պետք է փշրել թշնամու դիմադրությունը և պատրաստվել նրա նենգ գործողություններին հակահարված տալու համար: Մարգարիտը զուսպ և աներկյուղ նշանի տակ էր առնում թշնամական զրահամեքենան, և երբ հանկարծ մեքենայի միջից զլուխը բարձրացրել էր նշանառու ազերին, Մարգարիտը մեկ ակնթարթում իր դիպուկ և անվերջ հարվածով շարքից հանել է նրան: Նա շարունակեց իր մարտական ուղին և մասնակցեց Լաչինի մարդասիրական միջանցքի բացման համար կռիվներին:

1993 թ. հունվարին թշնամին մեծ ուժեր է կուտակել և շտապում էր ճեղքել ու գրավել Լաչինի միջանցքը: Պայթեցրել էին Գորիս-Ստեփանակերտ մայրուղու կամուրջը: Մարզարիտը գրոհողների շարքում, լեռնային անմատչելի դիրքերում գործում էր վստահ իր ուժերին, ոչնչացնելով թշնամական կրակակետերը: Մարզարիտի օրինակով, Արցախի ինքնապաշտպանական ուժերին զինվորագրված հերոս դուստրերը վտանգելով իրենց կյանքը և կրակում էին թշնամու վրա, և կրակների ու ծյան միջից հանում, անվնաս տեղեր հասցնում վիրավոր մարտիկներին:

Մարտերից մեկի ժամանակ, երբ թուրքական տանկը սպառնում էր հայ ազատամարտիկներին, Մարզարիտը անշեղ ու շեշտակի նշանառությամբ վերջ տվեց մեխանիկ թուրքի կյանքին, որին հետևեց թշնամու խուճապ մարտի դաշտից:

Մեկ անգամ էլ հերթական վիրավորների կյանքը փրկելիս, Մարզարիտի կողքին հանկարծակի հայտնվեցին 3 թուրք: Մինչև նրանք զարմացած հայացքներով շփարած մայում էին, Մարզարիտը հմտորեն, արագությամբ ցատկելով իրեն ձորն է նետել և ու փրկվել թուրք ելուզակներից: Մարզարիտի համբավը, նրա փառավորված անունը թնդում էր մարտադաշտում, Արցախում... Ամենուրեք «հմուտ նշանառու», «սնայպեր Մարզարիտ» էին կոչում նրան: Արցախի հերոս պաշտպանների շարքում Մարզարիտը մարտական խիզախումներով կերտում էր Արցախի հերոսական պատմությունը: Նա երազում ու մաքառում էր վերջնական հաղթանակին հասնելու համար: Սակայն 1993 թ. օգոստոսի 18-ին դարձանակալ թշնամու գնդակից մարեց Մարզարիտի կյանքը խրամատում: Մինչդեռ մարտիկների հիշողության մեջ մնացել էին ամեն մարտից առաջ Մարզարիտի հեգնական ծիծաղով ասած խոսքերը. «Մեռնելն էլ ապրելու մի ձև է: Եթե գոհվեմ գերեզմանիս շատ ծաղիկներ կոնքեմ»:

Ազատագրական պայքարի ուղին ընտրած Արցախի դուստրերը վրիժառությանը լի շարունակեցին սխրանքներ գործել: Նրանք հայրենյաց պաշտպանների շարքերում ու նրանց հետ զինակցած ծառս ելան բռնությունների դեմ, մարտնչեցին, որ բարբարոսությունը մուտք չգործի Արցախ ու հաղթանակի: Հայ մահատակների արյունով շարախված ամեն մի թիգ հողի պաշտպանությունը ծնեց միացյալ ու հզոր բռնուցք թշնամու դավերը փշրելու ու խորտակելու համար:

Անահիտ Պետրոսյանը մասնակցեց Շուշան գյուղի ազատագրման մարտերին և «Գորգում սարի» վրա հակառակորդի դիրքերի գրոհին: Անահիտ թմարազյանը մարտի դաշտում կորցնելով ամուսնուն, վճռեց գնալ նրա հետներով ու հասնել բոլոր անկատար տենչերի իրականացմանը, հայ զենքի վերջին հաղթանակին: Լյուբա Հայրիյանը իրեն նվիրել է հայրենիքի պաշտպանությանը՝ շարունակելով տոկունություն ցուցաբերել հրետանային մարտկոցի կազմում: Արևիկ Սարգսյանը՝ Չլորանից Ալիբաբ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ապահովել է ռազմամթերքների տեղափոխման էարտը գործը: Սվետլանա Աբրահամյանը չնայած իր վերքերին, երբեք չկորցնելով հավատը հաղթանակի նկատմամբ, վճռականությամբ շարունակել է մարտնչել Արցախի պատվի համար կատաղի կռիվներում: Փայանե Մեծուսյանը (Էջմիածնից) հակառակորդի բեռնատար մեքենա է պայթեցրել և փրկել հայ վիրավորներին մարտադաշտում: Հմուտ ռադիստոլիկ Արեգա Սարգսյանը իր տաղանդաշատ ընդունակություններով իրականացրել է տարբեր շրջաններում գործող ռազմաօդկառների միջև անհրաժեշտ կապը, փայլուն կերպով կատարել իր առաջին մարտական առաջադրանքը Աղզամի շրջանի Բոյախենյոյ գյուղի ազատագրման ժամանակ: Երբեք չլքելով մարտադաշտը, նա 1994 թ. ապրիլի սկզբից բուժօրույր էր Մարզարիտ թմարանյանի և Անահիտ Պետրոսյանի հետ թշնամու չղադարող հակազորների պայմաններում: Արկերի, ականների ու զնդակների տարափների տակ, արհամարհելով մահվան սպառնալիքը նա առաջին բուժօգնություններ ցույց տվել վիրավոր ազատամարտիկներին, հաջողությամբ հանելով նրանց կրակազծերից: Մինչև 1995 թ. հրադադարը՝ Արեգա Սարգսյանը ցուցաբերելով համառություն, մնաց ռազմադաշտում, մինչև որ Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի մատուցներում ավարտվեցին արցախյան զնդերի հուժկու գրոհները: Բուժօրույր Լիդա Գրիգորյանը պահ տվեց իր 3 դուստրերին՝ (Լուսինեին, Արկիկին, Արիփեհին) Սեղա-

տատիկին ու մեկնեց ճակատ հերոսանալով Խոջալուի, Շուշիի և Լաչինի ազատագրական մարտերում: Դրսևորելով ազգի քաջազնական ոգու զարթոնքը, կանայք անձնագրի կրիվներ մոեցին և ծանրակշիռ բաժինն ունեցան այնքան քանկ գնով ձեռք բերված հաղթանակում:

Հետևակի մարտական մեքենայի հրամանատար Անուշ Ավագյանը զոհվեց 1993 թ. փետրվարին Վաղուհասում, բուժքույր Քանաքարա Ղարայանը զոհվեց «Գրադ» հրթիռային արկից ազատամարտիկ Արվիդ Բեգլարյանի վերքը կապելիս, Քարազլուխ գյուղում:

Լենա հակոբյանը զոհվեց 1992 թ. հունիսին Կիչանի պաշտպանության համար մղված մարտերում:

Առ այսօր, Եվգենյա Առստամյանը, Արևիկ Սարգսյանը իրենց մարմնի մեջ արկի բեկորներ են կրում, իսկ դիպուկահար Կարինե Դանիելյանը զամված է անկողնում, դեռ չի ապաքինվել պատերազմի հասցրած ծանր վերքերից:

Արցախյան հերոսամարտերի կրակների միջով անցած կանայք, որոնք ուխտել էին ազատության համար զենք մեծ զոհողությունների, իրենց սխրանքներով վեհացրել են մեր լեռնաշխարհի պատմությունը, սրբագործել պապերից ժառանգություն մնացած Արցախի հողը, որի պաշտպանությունը կմնա գերագույն նպատակ գալիք սերունդների համար:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր.1989 թ., գլ.3-րդ:
2. Ս.Նանգյուլյան, Արծիվները բարձունքներ են տննչում, գիրք Ա., Եր.1992թ:
3. Ս.Արզգարյան, Սարտակերտ, Չհայտարարված պատերազմի կիզակետ (փաստագրություն) Ստեփանակերտ, 1999 թ.:
4. В.Б.Арутюнян, События в Нагорном Карабахе, 1990 г.
5. Կ. Ե.Խոջաբեկյան, Արցախյան զոյապայքարը, Եր., 1994 թ.:
6. «Ազատ Արցախ», 1999 թ.
7. «Մարտիկ» թերթ, 1995-2000 թթ.:

Балаян Р.А.

Женщины в героических битвах арцахской войны

Резюме

В 1980 и 1990 годы, в годы тяжелых испытаний армянства Арцаха в борьбе против азеров, вместе с храбрыми сыновьями армянского народа сражались и доблестные дочери Арцаха, чей боевой, полный опасностью путь, увенчался славой.

Данная статья о самоотверженной деятельности женщин, проявленной в сражениях за освобождение Арцаха

Balayan R.A.

"Women in heroic battles of Artsakh war"

Summary

In the 1980's and 1990's, in terrible ordeals years of the Armenians of Artsakh against Azeri, together with the brave sons of the Armenians people fought a battle and the daughters of Artsakh whose fighting dangerous way get crowned' with fame.

The present article is about the selflessness archivity of the women in thur battles of Artsakh liberation.

Բալայան Վ.Ո.
ԱՐՑԱԽԸ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհում ժողովրդակազմավորման գործընթացի ավարտից հետո, մ.թ.ա. 3-1-ին հազարամյակներում համդես եկան առաջին պետական կազմավորումները, որոնց շարքում իր ուրույն տեղն ու դերն ունեն ՌԻարտուն՝ Վանի կամ Արարատի թագավորությունը։ Նախապես դա փոքր պետություն էր՝ փռված Վանա լճի ափամերձ շրջաններում։ Այնուհետև այն հզորացնում է, հակահարված տալիս Ասորեստանին, և, գեներլ ռուժվ խաղախեցնելով հայկական մյուս իշխանություններին, տարածում իր իշխանությունը գրեթե ողջ Հայկական լեռնաշխարհի վրա։ Մենուա արքայի օրոք(810-786թթ.) սկսվում է Վանի թագավորության հզորության ժամանակաշրջանը։

Նախկինում կարծիքներ կային, որ հյուսիսում Մենուան հասել էր մինչև Արաքսի հովիտը։ 1989թ. օգոստոսի 11-ին երկրաբան Վալերի Իզումնովը Այունիքի լեռնոտ հատվածներում հայտնաբերել է մի արձանագրություն։ Այն վկայում է, որ մ.թ.ա. 810-805թթ. միջև ընկած ժամանակահատվածում Մենուան ներխուժել է Այունիք¹։

Հայոց Արևելից զավառների նվաճման հաջորդ փուլը կապված է Վանի թագավորության ամենահզոր արքայի՝ Արգիշտի Ա-ի(786-764թթ.) անվան հետ։ Արգիշտի Ա-ի Կոտայքում գտնված ժայռափոր արձանագրության մեջ խոսվում է Ջառ քաղաքի մասին²։ Այն համընկնում է Արցախի միջնադարյան Ծար մելիքանիստ ավանի և ներկայիս Բարվաճառի Ջառ գյուղի հետ։ Ասածը հիմնավորվում է նաև Հովհաննես Կարազոյզյանի Արգիշտի Ա-ի խոռոհոռեան տարեգրության նոր մեկնությամբ, որտեղ նա հավաստի փաստերով ապացուցում է, որ հաղթող արքան հասել է Ջառ գյուղից ոչ շատ հեռու գտնվող Բաղինք արքունականը, Ջերմաջուրը(Խտիսու)³։ Վերոհիշյալ հեղինակի կարծիքով 1956թ. Սրին Բերդում բացված շինությունը, որ կոչվում է սուսե⁴, համընկնում է Արցախի Մարտունու շրջանի Սուս և Բաշաթաղի շրջանի Սուս գյուղերի հետ։ Շատ հնարավոր է, որ Սուս գյուղի շրջակայքում եղել է ուրարտական շրջանից մնացած որևէ սուսե(տաճար)⁵։

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ Արցախը Արգիշտի Ա-ի կառավարման տարիներին ներառված է եղել հայկական պետականության կազմում։

Միաժամանակ ընդգծենք պատմագիտության մեջ տիրող այն կարծիքը, որ Արցախը նվաճվել է Սարգուրի Բ-ի օրոք⁶, անընդունելի է։ Սարգուրի Բ-ի կառավարման տարիներին (764-735թթ.) մաքրագործվեցին Վանի թագավորության սամանները։ Նա վերանվաճեց իր հոր կողմից նվաճված տարածքները, այդ թվում նաև Արցախը։ Այդ առթիվ Սարգուրի Բ-ն Վարդենիսի Օժվակ գյուղի մոտ հայտնաբերված սեպագիր ժայռափոր արձանագրության մեջ պատմում է, որ ուրարտական զորքը հաղթականորեն անցել էր Սևանա լճի ողջ արևմտյան ափի երկայնքով, նվաճել Ռեւիլիուխի երկիրը և, այնուհետև, լճի հարավ-արևմտյան ափին հաղթանակ տարել Տուլիխու, իսկ հարավային ափին Արկուկինի երկրի նկատմամբ՝ հասնելով մինչև Ռերտեխինի⁷։

Սևանի ափին, Օժվիմար գյուղում հայտնաբերված մեկ այլ արձանագրություն վկայում է, որ Սարգուրին նվաճել է 23 թագավորություններ, որոնց շարքում հիշատակվում են՝ Ադախունի, Ռեւիլիուխին, Լուեռուխին, Արկուկինին։

Բ.Պիատրովսկին գտնում է, որ Ռեւիլիուխի աշխարհն զբաղեցրել է Սևանի արևմտյան ափը, իսկ Ադախունին՝ հարավային ափի արևելյան մասը։ Հետևապես Սարգուրին Սևանի հարավային ափով շարժվել է դեպի արևելք։ »Լճի կողմից բնական ոչ մի արգելք չկա՝ շարժվելու համար դեպի արևելք, ընդհուպ մինչև Լեռնային Դարաբաղը, որը կապված է եղել Հայաստանի հետ»⁸։

Որ «Ռերտեխեն» կամ «Ադախունին» նույն Արցախն է, վկայում են նաև Սարգուրի Բ-ի նույն արձանագրության մեջ հիշատակվող Արցախի զավառների, բնակավայրերի և գետերի՝ Հարճյանք, Պարճկանք, Պիանք, Գիշի, Տրսու, Կուրական անունները⁹։

Սարգուրի Բ-ի կողմից Գանձադառն տարեգրության հատվածներից մեկում մ.թ.ա. 741թ. տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ և Ուուսա Ա-ի՝ Օժվիմարի ժայռափոր արձանագրության մեջ հիշատակված է Ադախունի տեղանունը¹⁰։

Աղախ տեղանունը հիշատակված է նաև հետագա ժամանակների հայկական աղբյուրներում. «...զմաց ի կողմ հաջենոյ, Տանձեաց և Աղախայ կրկին անգամ»¹¹:

Արդախ բնակավայրը գտնվել է Արցախի հաջեն գավառում, որը հանդիպում է միջնադարյան հայ պատմագրության էջերում՝ Անանիա Ա Սոկազի(946-968թթ) կաթողիկոսի մասին եղած վկայության մեջ. «Եւ հասեալ ի գաւառն հաջենոյ ընդ առաջ ելանէր մնա իշխանն Գրիգոր եւ տարեալ իջուցանէ ի տան իւրում: Եւ ժողովէ զամենայն իշխանս աշխարհիս եւ զեպիսկոպոսունս եւ զվանականս ի տեղին, որ Արդախն կոչի...»¹²:

Արդախը հիշատակվում է նաև Գանձաարի՝ 1467թ. վիմագիր արձանագրություններից մեկի մեջ¹³: Ամենայն հավանականությամբ, Աղախ-Արցախ մեկ բնակավայրի անունը հետագայում տարածվել է ողջ մահանգի վրա:

Սարգուրի Ա-ից հետո Ռուսա Ա-ն (մ.թ.ա.735-713թթ.) իշխանության գլուխ անցավ քաղաքական բարդ իրադրության պայմաններում: Ասորեստանը գտնվում էր իր հզորության գագաթնակետին: Նման իրավիճակում Ռուսա Ա-ն, խելամտորեն զստահատելով ստեղծված կացությունը, ձեռնպահ մնաց Ասորեստանի արմատական շահերը հարավում շոշափելուց:

Մյուս կողմից, Ռուսա Ա-ն նվաճողական գործողություններ ձեռնարկեց հյուսիսում: Նա կրկին հնազանդեցնում է Սևանա լճի արևմտյան և հարավային ափերին ընկած երկրները, որոնք Սարգուրի Ա-ի մահվանից հետո ապստամբել էին Ռիրարտուի դեմ: Այնուհետև, հպատակեցնում է «լճից այն կողմ», այսինքն՝ նրա արևելյան ափերի երկարությամբ ձգված բարձրադիր լեռներում ընկած 19 այլ երկրներ¹⁴, այդ թվում Արցախը: Ռուսա Ա-ի Ծովինարի ժայռափոր արձանագրության մեջ նշված 19 երկրների 3-րդ շարքի 1-ին տեղում հիշատակված է Ծամա տեղանունը¹⁵: Սեպագիր Ծամա երկրանունը պահպանված է Արցախի Չաղորթի շրջանի այժմյան Ծամձոր գյուղանվան մեջ¹⁶:

Ծովինար գյուղի մոտակայքում Ռուսա Ա-ն թելչեբա աստծո անունով նաև քաղաք է կառուցել¹⁷:

Ստեփանակերտի ու Խոջալուի դամբարանաբլուրներից պեղված նյութերի մեջ տիրապետող են նաև այն նյութերը, որոնք գիտության մեջ կապվում են Ռիրարտական թագավորության հետ: Այսպիսի նյութերից մեկը՝ սարդիոնե գարդանախշը, ունի նաև սեպագիր արձանագրություն՝ Ռուսա թագավորի անվան հիշատակությամբ: Սա էլ մի վկայություն է, որ հայկական այդ թագավորության մեջ առկա է նաև Աղախ-Արցախի պարզ հիշատակությունը¹⁸:

Նույն Խոջալուի դամբարանադաշտի թաղումները և հարակից այլ նյութեր, հնագետ Վ.Բելկի կարծիքով, պատկանում են հայերին և աղերս ունեն Չայկական բարձրավանդակի համաժամանակյա հուշարձանների հետ¹⁹:

Ռիրարտուի վերջին շրջանի՝ Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերված Ռուսա Դ-ի (600-590) թագաժառանգ եղած ժամանակի կնիքով կնքված կավե սալիկներից մեկի արձանագրությունը²⁰ վկայում է, որ Ռիրարտուի հյուսիս-արևելյան սահմանը եղել է Կուր գետը:

Փաստորեն վերոհիշյալ ժամանակաընթացքում Ռւրարտուն հիմնավորապես հաստատվում է այս հեռավոր լեռնային շրջանում:

1. *Յովհաննէս Կարազնոզեան, Սեպագիր տեղանուններ Այրարատում և հարակից նահանգներում, Եր., 1998, էջ 85:*

2. *Կ.Ղաֆադարյան, Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Ելուրիկյան իշխանության մասին, ՄԱԼԱ ԳԱ հայկական ֆիլիալի «Տնօնագիր», 1940, հմ. 4-5, էջ 179:*

3. *Յ.Կարազնոզեան, նշվ. աշխ., էջ 121-123:*

4. *ԷԲԶ, էջ 38:*

5. *Յ.Կարազնոզեան, նշվ. աշխ., էջ 117-118:*

6. ՀԺՊ, ԳԱ հրատ., հ.1, Նր., 1971, էջ 313-314: Բ.Ուրտաթրայան, Դրվագներ Հայոց արևելյան նահանգի պատմության, Նր., 1981: Գր.Ղափանցյան, Ուրտաթրայի պատմությունը, Նր., 1940: Գ.Ա. Меликшвили, Урартские клинообразные надписи, М., 1960.
7. Գր.Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 186:
8. Б. Плотровский, Вавское царство, М., 1954, стр. 92.
9. Յ.Լյարագնոզյան, նշվ. աշխ., էջ 40-41:
10. М.В. Никольский, Клинообразные надписи Закавказья („Материалы по археологии Кавказа“, V, М., 1896, стр. XXXI, Գ.Ա. Меликшвили, Урартские клинообразные надписи, М., 1960, стр. 180:
11. Մոսկվա Կադանկատուացի, Պատմություն Արտանից աշխարհի, Նր., 1983, էջ 353:
12. Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Միսական, Թիֆլիս, 1910, էջ 278:
13. Բ.Ուրտաթրայան, Գանձապար, Նր., 1981, էջ 98:
14. Б. Плотровский, նշվ. աշխ., էջ 32:
15. Տիս' Ռուսա Ա-ի Նոր Բայագնոնի(Կանոն) և Մոսկինարի արձանագրությունները (, 265,266):
16. Յ.Լյարագնոզյան, նշվ. աշխ., էջ 139:
17. Գ.Ա. Меликшвили, նշվ. աշխ. էջ 50:
18. Բ. Ուրտաթրայան, Արցախի պատմություն, Նր., 1994, էջ 18:

В. Балаян **Арцах в период Ванского царства**

Резюме

После образования Ванского царства восточные области Армении — Арцах и Утик были включены в состав армянского государства. Источники свидетельствуют, что Арцах был завоеван не при Сардури II, а при правлении Менау, и, особенно, Аргисити I (786-764 до н. э.).

В летописях Сардури II (Гандзадур), повествующей о событиях, имевших место в 741 году до н. э., и Цовинарской наскальной надписи, упоминается топоним Адахуни, который созвучен с наименованием Арцах.

Археологические материалы из раскопок курганов Степанакерта и Ходжалу еще раз свидетельствуют о том, что Арцах являлся частью Ванского царства.

Balaian V.R **Artsakh in the period of the Van Kingdom**

Summary

After formation of the Van kingdom eastern Armenian regions Artsakh and Utik became parts of the Armenian State. Sources testify that Artsakh was conquered not under Sardury II, but during the reign of Menua, and especially Argishti I (786-764 B.G.)

The annals of Sardury II (Gandzadur) as well as the annals of Russa I (Tsovinar), describing the events taken place in 741 B.G., mention the toponym Adakhuny which sounds like the appellation Artsakh.

The date of archeological excavations of burial-mounds in Stepanakert and Khodzally witness once more that artsakh was a part of the Kingdom of Van.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս.Ս.
ՍԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

1992 թ. ամառային պատերազմաշրջանի ժամանակավոր անհաջողություններից համապատասխան հետևություններ կատարելով, մի շարք անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկվեցին պետական իշխանության ու կառավարման մարմինների, ինչպես նաև ինքնապաշտպանության համակարգի և հրամանատարության կենտրոնացման, ուժերի ու միջոցների համախմբման ուղղությամբ, ինչը տվեց իր դրական արդյունքները: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) նոր կազմակերպական-հաստիքային կառուցվածքի անցնելուց, այսինքն՝ բանակային ինֆրակառույցների, պաշտպանական շրջանների ձևավորման աշխատանքներ ձեռնարկելուց ինչու, հնարավորություն ստեղծվեց դիմագրավել հակառակորդի աշնանային լայնածավալ հարձակումներին, համառ պաշտպանական մարտերում հյուժել նրա ուժերը և դրանով՝ նախադրյալներ ստեղծել օկուպացված բնակավայրերն ազատագրելու, ԼՂՀ տարածքային ամբողջականությունը վերականգնելու համար: Սեպտեմբերը դարձավ նախորդ ամսվա կարևոր ձեռնարկումների մի յուրօրինակ փորձաշրջանը:

Մարտակերտի ռազմաճակատի առանձին հատվածներում շարունակվեցին մարտական գործողությունները: Արրբեջանական կանոնավոր բանակի ստորաբաժանումները, խնդիր ունենալով զավթել նոր բնակավայրեր, սեպտեմբերի 2-ի առավոտյան, հրետանային ակտիվ նախապատրաստությունից հետո, հարձակվեցին Չլդրան գյուղի վրա: Կասեցնելով գրոհները, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը բշմամուն ստիպեցին նահանջել նախկին դիրքերը: Մարտում չարքից հանվեցին հակառակորդի 2 տանկ եւ ավելի քան 30 զինվոր: Անհաջողության մատմվելով Չլդրանի հատվածում, սեպտեմբերի 3-ին արրբեջանական զորաջոկատները մարտական տեխնիկայի աջակցությամբ շարժվեցին Կիչան-Սիխավենդ ուղղությամբ և ներխուժեցին Փոքր Սիխավենդ, սակայն ինքնապաշտպանության ուժերը հետ չպարտեցին նրանց: Դեռ ավելին, ճակատագրի ծախսերում անցնելով հակահարձակման, ԻՊՈՒ ստորաբաժանումները վերագրավեցին Հարությունագոմերի բարձունքները եւ ընդհուպ մոտեցան Վաղուխաս ու Վերին Հոռաթաղ գյուղերին: Մարտերի ընթացքում թշնամին կրեց կենդանի ուժի եւ տեխնիկայի կորուստներ:

Սեպտեմբերի 7-ի երեկոյան ԻՊՈՒ մարտիկները հակահարձակում ձեռնարկեցին Մարտակերտի ճակատում: Առաջխաղացումը շարունակվեց նաեւ հաջորդ օրը: Արրբեջանական զավթիչներից ազատագրվեցին Կոծողոտ ու Պողոսագոմեր բնակավայրերը: Միաժամանակ բռնազավթված Վաղուխաս եւ Սեհմանա գյուղերի շրջանում վերահսկողության տակ առնվեցին ռազմավարական կարևոր բարձունքներ: Ոչնչացվեցին արրբեջանական տասնյակ զինյալներ, շարքից հանվեցին «Գրադ» կայանը եւ երեք տանկ: Մարտերը շարունակվեցին Դրբոն, Վաղուխաս, Սեհմանա գյուղերի մատույցներում: Սեպտեմբերի 9-ին ԻՊՈՒ ստորաբաժանումները դիրքեր զբաղեցրին Նարեշտարից 6 կմ, Վաղուխասից եւ Հարությունագոմերից 4-ական կմ հեռավորության վրա, մարտերը շարունակվեցին Դրբոնի մերձակայքում:

Սեպտեմբերի 12-ին ԻՊՈՒ ստորաբաժանումներն ազատագրեցին Պողոսագոմեր գյուղը, մարտեր ծավալվեցին Փոքր Պողոսագոմերի համար: 2 տանկի շարքից դուրս գալը, կենդանի ուժի եւ տեխնիկայի, ինչպես նաեւ վառելանյութի ու ռազմամթերքի պակասը դժվարացնում էին հայ մարտիկների գործողությունները: Այդուհանդերձ, վերահսկողության տակ առնվեցին նաեւ Վաղուխասի եւ Սեհմանայի մոտակա որոշ բարձունքներ: Մարտակերտի ճակատում շարունակվող մարտերում թշնամին նորանոր կորուստներ էր կրում: Սեպտեմբերի 16-ին ԻՊՈՒ մի ջոկատ հանկարծակի մտավ Սեհմանա

գյուղը, խուճապի մատնեց թշնամուն՝ ոչնչացնելով 10 ասկյար, եւ դիրքավորվեց գյուղի վրա գերիշխող բարձունքում: Հաջորդ օրը թշնամին հարձակման անցավ, սակայն հայ մարտիկները ոչ միայն պահեցին բարձունքը, այլեւ արժանի հակահարված հասցրին ոչնչացնելով հակառակորդի 2 ՌՍԲ եւ շուրջ 70 զինվոր: Սեպտեմբերի 19-ի զիջերը կատարող մարտերի արդյունքում, հայ մարտիկներին հաջողվեց ազատագրել Վաղուհաս գյուղը: Թշնամին ճողոպրեց Գետական գյուղի ուղղությամբ, մարտադաշտում թողնելով 2 S-72 տանկ, 50 սպանված: Վերահսկողության տակ առնվեց Միր-Ֆաշիր - Քելբաջար խճուղու Վաղուհասի հատվածը, որով դժվարացավ Լեռնային Ղարաբաղի դեմ օգտագործելու նպատակով մահաբեր զենք եւ զինամթերք փոխադրելը:

...Սեպտեմբերի 22-ին հաջողությամբ հետ մղվեցին ադրբեջանական զինված կազմավորումների հերթական գրոհները Վաղուհասի բարձունքների եւ Չլդրան գյուղի վրա: Մարտերում սպանվեցին հակառակորդի տասնյակ զինվորներ: Հեզոք գոտում հայտնված Վաղուհաս գյուղի շրջակա բարձունքներից հայ մարտիկները կրակի տակ էին պահում Քելբաջար-Մարտակերտ ավտոճանապարհի մոտակա հատվածները: Սեպտեմբերի 25-ին մարտերը շարունակվում էին Չլդրանի մատույցներում: Այն թշնամին զավթեց սեպտեմբերի 26-ին:

Սեպտեմբերի 26-ի 00 ժամից ուժի մեջ պետք է մտներ Սոչիում ՀՀ եւ ԱՀ պաշտպանության նախարարների ստորագրած զինադադարի պայմանագիրը, սակայն մարտական գործողություններն ավելի սաստկացան: Ադրբեջանի համար այդ պայմանագիրը սոսկ ագրեսիվ ձգտումների բողոքական միջոց էր...

Սեպտեմբերի 27-ի առավոտյան, խախտելով զինադադարի պայմանագիրը, հակառակորդը հարձակվեց Ասկերանի շրջանի Փառուխ գյուղի վրա : Հայ մարտիկները հետ չարտեցին թշնամուն, որը մարտադաշտում թողնելով երկու տասնյակ դիակ, նահանջեց ելման դիրքեր: Կատաղի մարտեր ծավալվեցին ռազմաճակատի Չլդրանի հատվածում: Թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ հայ մարտիկները նահանջեցին, թողնելով Չլդրանի բարձունքները:

Սեպտեմբերի 28-ին հրթիռակոծվեցին ու օդից ռմբակոծվեցին ԼՂՀ խաղաղ բնակավայրերը: Այնուհետեւ հարձակում ձեռնարկվեց Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բարձունքների ուղղությամբ: Ինքնապաշտպանության ուժերը, դիմակայելով հակառակորդին, ոչնչացրին 25 ասկյար եւ հետ մղեցին հարձակումը: Նույն օրը հրետանային ուժեղ նախապատրաստությունից հետո, ադրբեջանական կազմավորումները շարժվեցին Կիչան գյուղի ուղղությամբ: Հայկական ստորաբաժանումները կասեցրին թշնամու առաջխաղացումը: Մարտադաշտում թողնելով 50 դիակ, թշնամին նահանջեց ելման դիրքերը: Սեպտեմբերի 29-ի առավոտյան հետ մղելով թշնամուն Կիչան գյուղի մատույցներից, ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները կեսօրին հակահարձակման անցան Չլդրանի ուղղությամբ: Մարտերն ընթացան ռազմավարական կարևոր հանգույց հանդիսացող այդ գյուղում: Շարքից հանվեց հակառակորդի երեք

միավոր՝ զոհահատվեցին եւ 25 զինվոր : Սեպտեմբերի 29-30-ի կատաղի մարտերում չարքից հանելով հակառակորդի 2 S-72 տանկ եւ 2 ՌՍԲ, ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները ազատագրեցին Չլդրանի մի քանի կարևոր բարձունքներ: Այսպիսով, Մարտակերտի ռազմաճակատում, հայ մարտիկների համառ դիմադրությամբ և համարձակ հակագրոհներով հանդերձ, դեռևս չէր հաջողվում կանգնեցնել կենդանի ուժով ու միջոցներով խիստ գերակշռող հակառակորդի առաջխաղացումը: Հիմնականում Չլդրան-Վաղուհաս բնագծում էլ հակառակորդը կանգնեցվեց:

Հակառակորդի թիկունքում պարտիզանական պայքար ծավալվեց, ինչը բռնազավթված տարածքներն ազատագրելու և Մարտակերտի ռազմաճակատին օժանդակելու նպատակ էր հետապնդում:

Սեպտեմբերի 2-ին Շահումյանի շրջանում (Նուբար տեղամասում) հայ պարտիզանների խումբը ոչնչացրեց ադրբեջանցի զավթիչների 11 ավտոմեքենա եւ 2 զրահավոխադրիչ: Թշնամուց մաքրվեց շրջանի հարավ-արևմտյան մասը:

... Պայթյունի հետեւանքով ոչնչացվեց հինգ տասնյակ ասկար: Ավելի վաղ հայ պարտիզանները հարձականում էին գործել Գյուլիստանի վրա եւ ոչնչացրել թշնամու պահակակետը, իսկ Վերի-շեն-Բուզլուխ հատվածում պայթեցրել էին հետեւակի մարտական մեքենա՝ իր ամենակազմով :

Ամսվա սկզբին ԻՊՈՒ ստորաբաժանումները համարձակ հակահարձակումներով տիրեցին նպաստավոր բնագծերի, ստիպելով հակառակորդին թուլացնել ճնշումը Մարտակերտի, Մարտունու եւ Լաչինի միջանցքի ուղղություներում: Սեպտեմբերի 4-ի ռազմագործողությամբ ազատագրվեցին Ասկերանի շրջանի՝ դեռևս հունիսի 12-ին ռմբակավթված Դահրազ, Սառնաղբյուր, Արանգամին, Փրջամալ, Նախիջևանիկ, Խրամորթ, Ինչպես նաև Ավդալ եւ Գյուլափիլու գյուղերը, ինչն ամրապնդեց ԻՊՈՒ դիրքերը Ասկերանի եւ Մարտունու պաշտպանական շրջանների հարակից ճակատում: Չավթված այդ գյուղերից եւ հատկապես Աղդամից, Գյուլափիլուից, Ավդալից, Շելիից, Մարգիլից ու աղբրեջանական մյուս կրակակետերից անընդհանր հրթիռահրետակոծվում էին Ասկերան, Մարտունի շրջկենտրոնները, սահմանամերձ մյուս խաղաղ բնակավայրերը, ամգամ Ստեփանակերտն ու հարակից տարածքները: Ինքնապաշտպանության ուժերը, առաջադրանք ստանալով ազատագրել հայկական գյուղերը եւ վերացնել թշնամական ռազմականությունները, սեպտեմբերի 4-ի առավոտյան, հիմնականում երկու՝ Մարտունու եւ Ասկերանի

ճակատներով անցան լայնածավալ հակահարձակման : Ռազմագործողությունը մշակվել էր ամենայն մանրամասնությամբ, ստորաբաժանումների հրամանատարներին պարզաբանվել էր մարտական խնդիրը, ուստի՝ թշնամու դիմադրությունը հաջողվեց կոտրել 4 ժամվա ընթացքում: Դրությունը փրկելու համար աղբրեջանական հրամանատարությունը ռազմական ուղղաթիռներ օդ հանեց եւ, հրթիռային հարվածներ հասցնելով ռազմաճակատի գրեթե ամբողջ երկայնքով, փորձեց խոչընդոտել հայ մարտիկների առաջխաղացմանը: Հայ մարտիկներին հաջողվեց ոչնչացնել ռազմական 2 ուղղաթիռ: Ասկերանի ՊՇ ստորաբաժանումները հարձակման անցան 3 ենթաուղղություններով. Դահրազ-Դազի-Խութ (1018) ուղղությամբ առաջացան Ավետարանոցի մարտիկները, Դահրազ-Ազարա խութ (963,8)-Սառնաղբյուր-Բյազուն Բյառիդ (Գյուլափիլուի մատույցներում) ուղղությամբ՝ Շոշի, Ազնեքի, Սառնաղբյուրի, Կարմիր գյուղի տղաները՝ Ալբերտ Մարգարյանի հրամանատարությամբ, Դահրազ-Դուսար լեռ (118,5)- Ավդալ-Գյուլափիլու ուղղությամբ՝ Հարավի, Քարաշենի, Քառսնու մարտիկները՝ Կամո Մելքունյանի հրամանատարությամբ: Ազարա խութի գրավումից հետո, հայ մարտիկները ինքնացս մտան Սառնաղբյուր, թույլ չտալով թշնամուն ամրանալ ու դիմադրություն ցույց տալ: Նախիջևանիկ, Փրջամալ, Արանգամին ուղղություններով գրոհեցին Ուրբերտ Համբարձումյանի եւ Արթուր Հարությունյանի հրամանատարությամբ գործող գումարտակները, իսկ Խրամորթի ուղղությամբ՝ Խանաբաղի մարտիկները եւ 4-րդ գումարտակը: Արդյունքում ազատագրվեցին Դահրազ, Սառնաղբյուր, Արանգամին, Փրջամալ, Նախիջևանիկ եւ Խրամորթ գյուղերը: Հատկապես կատաղի մարտեր բորբոքվեցին «Ղափաթեկ» բարձունքի ստորոտում: Հակառակորդը, չդիմանալով հայ մարտիկների ճնշմանը, հարկադրված թողեց դիրքերը եւ մահանջեց: Ռազմավարական այդ բարձունքն անցավ ԻՊՈՒ մարտիկների վերահսկողության տակ: Դրանից հետո ԻՊՈՒ ստորաբաժանումները մտան Ավդալ եւ Գյուլափիլի ու ոչնչացրին թշնամական կրակակետերը: Մարտերում Մարտունու ԻՊՈՒ մարտիկների կողմից խիվեց հակառակորդի 3 Տ-72 տանկ, 2 ՀՄՄ: Խուճապահար փախչող աղբրեջանցի բանակայինները մարտադաշտում թողեցին տանկեր, թնդանոթներ, ավտոմեքենաներ, ավտոմատներ եւ մեծ քանակությամբ զինամթերք: Հաղթանակը ձեռք բերվեց նվազագույն կորուստներով (զոհվեց 4, վիրավորվեց 17 մարտիկ՝ թշնամու մի քանի տասնյակ զոհերի ու վիրավորների դիմաց): Ռազմագործողության հաջող ելքը լուծեց մի շարք խնդիրներ. վնասագրծվեցին ԼՂՀ սահմանամերձ թշնամական կրակակետերը, ազատագրվեցին Ասկերանի շրջանի գյուղերը, թշնամու հաշվին լրացվեց ԻՊՈՒ զինանոցը,

վերահսկողության տակ առնվեցին մարտավարական կարեւոր նշանակութաւ թարծուները ու ամրապնդվեցին ԻՊՈՒ ստորաբաժանումների դիրքերը, իսկ թշնամի զգաց արցախցիների վերականգնվող ուժը: Ամրապնդվեց հավատը սեփական ուժերի նկատմամբ: Սեպտեմբերի 4-ի ռազմագործողությունը, հատկապես Ավդուլ-Գյուլափիլովմասազերծումը, արդրեջանական հրամանատարության ուշադրությունը գրավեց Մարտունու շրջանի վրա: Համառորեն ձգտելով ճեղքում կատարել այս ուղղությունում, հակառակորդը սին հուլիսեր էր փայփայում տեղի մարտունակ ուժերը ջախջախելու վերաբերյալ: Ռազմագործողությունը կարևորվում էր նաև նրանով, որ կանխվեց Ասկերանը ասել է թե Ստեփանակերտի դարպասը գրոհելու հակառակորդի հերթական փորձը: Սեպտեմբերի 5-ին հակառակորդը գրոհ ձեռնարկեց Ավդա-Գյուլափիլուի ռազմական հենակետերը հետ գրավելու մտադրությամբ: Հայկական դիրքերը հրթիռակոծվեցին ռազմական 5 ուղղաթիռներից: Թշնամին մարտի հանց 16 միավոր գրահատեխնիկա: Անընդհատ խփում էր հրետանին: Մ.Սելքոնյանի, գնդապետ Հմայակ Հարոյանի, Վիտալի Բալասանյանի հրամանատարությամբ, հայ մարտիկները իսկական ջարդ տվեցին թշնամուն: Զրահատեխնիկայի հարվածային ուժի շնորհիվ արդրեջանցներին հաջողվել էր հասնել մինչև Արանգամին, սակայն հայ մարտիկները ընդամենը երկու ժամում ստիպեցին նրանց դիմել փախուստի, մարտադաշտում թողնելով տանկեր (շարքից հանվեց ու առգրավվեց 9 միավոր ռազմական տեխնիկա, այդ թվում 6 տանկ, 2 ՀԱՄ, 1 տանկային ջարշակ), գեներ ու զինամթերը, տասնյակ դիակներ: Սեպտեմբերի 6-ի կեսօրին հակառակորդը հարձակվեց ճարտարի ու Մաճկալաշենի ուղղություններով, միաժամանակ կատարել հրթիռահրետակոծության ենթարկելով Գյուլափիլուի հայկական պաշտպանական դիրքերը: Հայ մարտիկները հետ մղեցին թշնամու բոլոր գրոհներն ու անասան մնացին իրենց դիրքերում: Մաճկալաշենի ու ճարտարի մատույցներում թողնելով 30 դիակ եւ ռազմական տեխնիկա, թշնամին նահանջեց: Սեպտեմբերի 7-ին Ֆիզուլու շրջանի Ներքին Դիվանալար գյուղում տեղաբաշխված հակառակորդը հրետանային նախապատրաստությունից հետո, նոր հարձակում ձեռնարկեց Մաճկալաշեն, Սու եւ ճարտար գյուղերի ուղղությամբ: Մարտադաշտ նետելով 8 միավոր գրահատեխնիկա եւ մի քանի հարյուր զինվոր: Առաջանալով Մաճկալաշենի տեղամասում թշնամին մխրձվեց հայկական ստորաբաժանումների պաշտպանության խորքը եւ գրավեց կարեւոր թարծուներէից մեկը: ԻՊՈՒ մարտիկները կասեցրին հակառակորդի առաջխաղացումը եւ, ապա, ստիպեցին նրան հետ քաշվել՝ մարտադաշտում թողնելով տասնյակ դիակներ:

ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊՀ) նախագահ Սերժ Սարգսյանին հասցեագրված մարտական զեկուցագրում, որը ստորագրել էին գնդապետ Հ.Հարոյանն ու Մարտունու ՊՇ հրամանատար Մ.Սելքոնյանը, մասնավորապես կարդում ենք «Մարտական խնդիրը լիովին կատարված է: Մարտերի ընթացքում հակառակորդից առգրավվել է 2 տանկ, 3 թնդանոթ, մեծ քանակությամբ զինամթերը (ավտոմատների, զնդացիրների փամփուշտ, տանկի արկ): Ոչնչացվել է մոտ 50 հետեւակային, երկու տանկ, մեկ գրահամեքենա: Մեր կողմից տեխնիկայի կորուստներ չեն եղել, մեկ ազատամարտիկ զոհվել է, 14-ը՝ վիրավորվել: Մարտական գործողությունների ժամանակ արիությանը աչքի ընկած սպաներին ու զինվորներին ներկայացնում են պարգևատրման: Մարտի ժամանակ տանկեր են ոչնչացրել կապիտան Սերգեյ Լիտվինովը, կապիտան Ալեքսանդր Կոշելը: Մաճկալաշենի վրա կատարված հարձակման ժամանակ (սեպտեմբերի 6-7-ին) Մաճկալաշենի եւ Սուփի հրամանատարները՝ Արմեն Մելքոնյանը եւ Մովսէս Մելտոյանը, ինչպես նաեւ Մաճկալաշենի գումարտակի անդամները ընդհանրապես, շատ քաջ եւ հերոսաբար կռվեցին »:

Սեպտեմբերի 9-ին հակառակորդը հարձակում ձեռնարկեց Կարադաղլը-Այգեստան-Տոր-Շիղդաղ լեռ գծի երկայնքով: Մի քանի դիակ թողնելով մարտադաշտում՝ թշնամին ստիպված հետ քաշվեց: Տոր գյուղի մատույցներում թշնամին կորցրեց 7 զինվոր ու նահանջեց եւման դիրքեր: Սեպտեմբերի 17-ին հակառակորդի մի մեծ խմբավորում, 8

միավոր տանկերի ու զրահամեքենաների աջակցությամբ, Մարզիլիի ռազմական հենակետից հարձակման անցավ Բերդաշեն գյուղի ուղղությամբ: Երեք ժամ տեսած մարտից հետո թշնամին հետ չպարտվեց, մարտադաշտում թողնելով 2 տանկ եւ 30 զինվոր: Չախողված թշնամին անգոր կատաղությամբ հրետակոծում էր Նոր-շեն, Աշան, Կարմիր-շուկա եւ ճարտար գյուղերը:

Գիշերվա ընթացքում հրթիռահրետակոծելով Մարտունի, ճարտար բնակավայրերը եւ Ղուրուչուխի հայկական պաշտպանական դիրքերը, Ադրբեջանի ազգային բանակի ստորաբաժանումները հարձակվեցին Մարտունի քաղաքի ուղղությամբ: Մարտունու ՊՇ ստորաբաժանումները հետ մղեցին հարձակումը, խփելով հակառակորդի 2 տանկ եւ 1 ՅՍՄ-1: Փոխելով առաջխաղացման ուղղությունը, հակառակորդը գրոհեց Բերդաշեն եւ

ճարտար գյուղերը: Կենդանի ուժի ու տեխնիկայի մեծաթիվ կորուստներով հանդերձ, թշնամին ցանկացած գնով ուզում էր ծեղրել Մարտունու ՊՇ բնագիծը, բայց, ապարդյուն... Սեպտեմբերի 19-ի առավոտյան հրետանային նախապատրաստությունից հետո, հակառակորդը հարձակվեց ճարտարի ուղղությամբ: Դետ մղելով հարձակումը, Մարտունու ՊՇ ստորաբաժանումները հետապնդեցին թշնամուն եւ տիրեցին երկու պահակակետի

(թիվ 40, թիվ 50): Մարտերը շարունակվեցին Ուրյանասարի ուղղությամբ: Ժամը 18³⁰-ին հակառակորդը հարձակում սկսեց Սաճկալաշենի դիրքերի ուղղությամբ: Թշնամական տանկերը հասան հայ մարտիկների խրամատները, սակայն հայերն, առանց խուճապի, շարունակեցին կռվել եւ հանդուգն տանկերը խփել արդեն հետեւից: Իսկ մարտում, ընդհանուր առմամբ, խփվեց 3 տանկ եւ 2 ՅՍՄ, ոչնչացվեցին մեծ թվով հետեւապայիններ:

Սեպտեմբերի 20-ին հակառակորդը տանկերից արկակոծեց հայկական պաշտպանական դիրքերը: Հայ մարտիկները ֆագոտահարեցին 2 տանկ, իսկ երրորդը ճողկարեց: Ադրբեջանական հրամանատարությանը չէր հաջողվում գրոհի հանել հետեւակը: Մի գումարտակ, ՅՍՄ-2-ի աջակցությամբ, բայց մեծ ղվարությամբ գրոհի հանվեց, սակայն հենց որ հայ մարտիկները սկսեցին կրակել, հակառակորդը նահանջեց: Գերազանց աշխատեցին հրետանավորները, խափանարար կրակով թույլ չտալով թշնամուն առաջանալ¹²:

Սեպտեմբերի 19-20-ին մարտեր ընթացան նաեւ Ասկերանի պաշտպանական շրջանում: Թշնամին, տասնյակ դիակներ թողնելով մարտադաշտում, հետ քաշվեց: Այդ ընթացքում ադրբեջանական զինված կազմավորումները երկու անգամ փորձեցին գրավել Լաչինի միջանցքը, սակայն մոտավորապես 12 կմ հեռավորության վրա կանգնեցվեցին: Սարիքաբա ռազմավարական բարձունքից թշնամին փորձեց առաջանալ Լիսազորի ուղղությամբ, բայց հետ չպարտվեց:

Մարտական գործողություններին զուգահեռ, հակառակորդը օդային հարձակումներ էր գործում Ստեփանակերտի եւ համրապետության մյուս խաղաղ բնակավայրերի վրա:

Սեպտեմբերի 23-ին հակառակորդը գրոհ ձեռնարկեց Մարտունի քաղաքից 2-3 կմ հյուսիս-արեւելքում գտնվող Պլատապա (642,2) բարձունքի ուղղությամբ: Թշնամին գրոհի էր հանել 1 գումարտակ եւ 2 ՅՍՄ-2: Ադրբեջանական հրամանատարությունը զինվորներին խաբել էր, թե իբր հայերը փախել են դիրքերից եւ կարելի է դրանց տիրել առանց մարտի: Այդ համոզմունքով էլ հակառակորդի հետեւակը հասավ պաշտպանական դիրքերին: Հակահարված տառնալով եւ մարտադաշտում թողնելով 15 դիակ, մառախուղի քողի տակ եւ հրետանու չդարարող կրակի աջակցությամբ հակառակորդը նահանջեց: Նա չհասցրեց մարտի մեջ մտցնել տանկերը, որ 6-7 կմ հեռավորությունից խփում էին դիրքերին: Անուիտետե տանկային գրոհի ձեռնարկվեց Գետրգավանի կողմից՝ Ղուրուչուխ կոչվող բարձունքի ուղղությամբ: Գրոհի էր հանվել 6 տանկ եւ մոտ 100 հետեւապային: Հակառակորդին հաջողվեց սղընթաց մոտենալ հայկական պաշտպանական դիրքերին մինչեւ 100 մետր: Երկու տանկ վնասվեցին ականների վրա, որ նախկինում տեղադրել էին Կարեն Ուլուբաբյանը, Սեյրան Հարությունյանը, ականապատող դասակի հրամանատար Շիրազ Ասրյանը: Մի այլ տանկ, նոնակածիզ Ֆելիքս Առստամյանի դիպուկ կրակոցից

հետո, ուղին շեղել ու ընկել էր գաղթափի տակ՝ հայկական դիրքերի մոտակայքում Թշնամու հետեւակը, հայ մարտիկների տեղատարափ կրակի տակ, արագ ճողպրեց. մարտադաշտում թողնելով 10 դիակ եւ գրոհային խմբի տանկեր:

Երեկոյան հետեւակային զրոհ ձեռնարկվեց Բերդաշենի Երկար-քար կոչվող դիրքերի վրա: Դարձյալ թշնամու տանկերը չէին առաջանում եւ կրակով ներգործում էին հեռվից: Բերդաշենցի մարտիկները, կասեցնելով զրոհը, հետ շարտեցին թշնամուն: Միայն վերահաս խավարը Աղոմի գրոհայիններին փրկեց կոկնակի ջարդից:

Հակառակորդը տանկային զրոհ ձեռնարկեց Աղբուլաղ տեղամասի (Չեխլ բարձունքի մոտակա բլուրը, ուր կա համանուն աղբյուր) ուղղությամբ: Թշնամին հարձակման հանցն 6 տանկ, 2 ՀՄՄ, հայրուրավոր հետեւակայիններ: Փիչեղվա ընթացքում հետեւակն աննկատ մոտեցել էր հայկական դիրքերին եւ մոտ 1 կմ հեռավորության վրա կանգ առել: Լուսաբացին տանկերը սրընթաց առաջ էին շարժվել այգիներով ձգվող ուղիներով: Հակառակորդի մտահղացման այս տարբերակը Մարտունու ՊՇ հրամանատարության կողմից հաշվի էր առնվել եւ նախօրոք ծուղակ պատրաստվել: Մարտունու ՊՇ տանկերը 1-3 կմ հեռավորությունից, հարմարեցված դիրքերից կրակ բացեցին եւ շարքից հանեցին 4 տանկ, 3 զրահամեքենա: Հակառակորդի հետեւակը փախուստի դիմեց, մարտադաշտում թողնելով եւս 2 տանկ: Այս մարտերի մասին գեկույցելով ԼՂՀ ԻՊԿ նախագահ Ս.Սարգսյանին, Մարտունու ՊՇ հրամանատար Ս.Մելքոնյանը մասնավորապես գրել էր. «Հակառակորդի հետեւակը ջարդից փրկվեց միայն ու միայն մեր հրետանու անգործության պատճառով: Կռվում եղավ միջադեպ, երբ հակառակորդի հրամանատարական կետը մեր կողմից հայտնաբերվեց եւ մեր տանկը խփեց այդ կետին: Ներկայացվում է մեր տանկիստների ցուցակը. հ. 5 տանկ - Կարո Հարությունյան, Ռազմիկ Յախշիբեկյան, Վարդան Բաղդասարյան, հ.6 տանկ - Լեւոն Ստեփանյան, Վարդան Բալայան, Գագիկ Խաչատրյան, հ.7 տանկ - Անդրանիկ Մեծյունյան, Լեւոնիկ Բաբայան, Արթուր Հակոբյան»¹⁵:

Սեպտեմբերի 23-24-ի (եւ նախորդ օրերի) մարտական գործողությունները վկայում են, թե ինչպես է հակառակորդն ամեն գնով ձգտել մի որեւէ դիրք պաշտել Մարտունու շրջանում, քանի որ Աղբեջանի պետական լրատվամիջոցները նախօրոք հայտարարել էին Մարտունու գրավման կեղծ լուրը: Սակայն Մարտունու ՊՇ մարտիկները Ս.Մելքոնյանի գլխավորությամբ, ծախողեցին հակառակորդի գավթողական պլանները:

Աղբեջանական հրամանատարության գլխավոր նպատակակետը Լաչինի միջանցքն էր: Ձգտելով փակել այն, նա հույս ուներ կտրել ԼՂՀ ԻՊՈՒ-ի թիկունքը և Մարտակերտի ու Մարտունու օպերատիվ ուղղություններով դուրս գալ Ստեփանակերտի վրա: Սակայն Լաչինի միջանցքը պաշտպանող հայկական կազմավորումները, աննկուն դիմադրությամբ, չգիջեցին ռազմավարական մայրուղին¹⁶:

Սեպտեմբերի 12-ին Ղուբաթլուի շրջանի Մուարաբ գյուղի տարածքից աղբեջանական բանակային մի կազմավորում, մեծ ուժերով ու զրահատեխնիկայով, գրոհեց Լաչինի միջանցքի ուղղության հայկական պաշտպանական դիրքերը: Հարձակումն ուղեկցվում էր պաշտպանական ընդգծերի ու ընակավայրերի հրթրեահրետակայաններով: Մասնավորապես ԲՄ-21 կայանքից հրթրահակոծվեց Բերդաձորի ենթաշրջանի Հին-չեն գյուղը: Գրեթե յոթ ժամ տեւած մարտերի ընթացքում ԻՊՈՒ մարտիկները ոչնչացրին 50 աղբեջանցի զինոյալներ եւ խփեցին 3 միավոր ռազմական տեխնիկա: Չռիկվեցին 8 եւ

վիրավորվեցին 5 հայ մարտիկներ : Երեկոյան կողմ կատաղի մարտեր մղվեցին Լաչինի միջանցքի գոտում: «Գրադ» կայանքներից ու թնդանոթներից հայկական պաշտպանական դիրքերը հրետանովեւուց հետո, հակառակորդը զրահատեխնիկայի ուղեկցությամբ զրոհ ձեռնարկեց մի քանի ուղղություններով: Հատկապես լարվել էր դրուսյունը միջանցքի հյուսիսային հատվածում: Հայ մարտիկները հաջողությամբ կասեցրին թշնամու առաջխաղացումը: Սակայն, Աղբեջանի լրատվամիջոցները շտապեցին ի լուր աշխարհի հայտարարել, թե Լաչինի միջանցքը գրավվել է, իսկ այսպես կոչված՝ հայկական 20 հազարանոց արշավախումբը շրջապատվել է Դարաբաղում: Ըստ Աղբեջանի ՊՆ

վերլուծական-տեղեկատվական կենտրոնի հաղորդագրության, 2-րդ բանակային կորպուսի հետևակային զույգը, հատուկ նշանակության ջոկատների հետ համատեղ, գրոհ էր ձեռնարկել Լաչինի շրջանի հյուսիսային հատվածի ուղղությամբ, ազատագրելով Նուրադի, Սառաջ, Չաչախալ, Շիրազ, Այրազար, Ֆախրալը, Իփսը 1, Իփսը 2 եւ խրժանկար գյուղերը: «Հակառակորդի համար անսպասելի շրջանցելով Ղարաբաղյան լեռնաշղթան, ասված էր հաղորդագրության մեջ, - աղբյուրական ստորաբաժանումները գրավել են մի քանի կարեւոր բարձունքներ: Շուշիի շրջանում ազատագրվել են Խանալը-փայա, Իման-Գուլուար, Ալաի-Գուլուար գյուղերը: Լաչինի շրջանի Փեյխան գյուղի մոտակայքում ոչնչացվել է թշնամու մեկ զինված կազմավորում: Ներկայումս Լաչինի միջանցքն

ամբողջությամբ գտնվում է մեր բանակի վերահսկողության տակ» :

Ահա այսպես էր ուռճացվում ամենափոքր իսկ հաջողությունը... Իրականում, թշնամու արժանի հակահարված էր տրվել, իսկ Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը վերահսկվում էր ԻՊՈՒ ստորաբաժանումների կողմից: Աղբյուրների քարոզչական մեքենան ստահող լուրեր էր տարածում արցախյան այս կամ այն բնակավայրը գրավելու, աղբյուրական բանակի ուռճացված հաղթանակների մասին: Մարտունիքն զրավել ու Լաչինի միջանցքը փակելը այդպես էլ անհասանելի երազանք մնացին հակառակորդի համար:

Նպատակին հասնելու ճանապարհին հակառակորդը միջոցների ընտրության առաջ կանգ չէր առնում: Նա ավելի շատ պատերազմում էր խաղաղ բնակչության դեմ, մշտապես հրթիռահրետակոծելով ու ռմբակոծելով ռազմաճակատից շատ հեռու գտնվող բնակավայրերը: Այդուհանդերձ, արցախահայությունը չէր ընկճվում ու չէր կորցնում իր ոգու արիությունը, տոկոս ու տանում էր բոլոր դժվարությունները, դրանով իսկ մնալով ռազմաճակատներում մարտնչող ԻՊՈՒ ռազմիկների հուսալի նեցուկը...

Թեւեւ չշարունակվում էր Ստեփանակերտ - Գորիս ավտոմայրուղու հրետակոծությունը, այստեղ երթևեկությունը չէր դադարում: Սեպտեմբերի 29-ի լույսը չբացված հակառակորդի զինակները գրոհ ձեռնարկեցին Սուսալը լեռան ուղղությամբ: Հայ մարտիկները հետ չափոսեցին թշնամուն: Քելբաջարի շրջանից հրետակոծելով Լաչինի մարդասիրական միջանցքը, հակառակորդը շարունակում էր այն գրավելու փորձերը, սակայն ամեն անգամ արժանի հակահարված էր ստանում: Սեպտեմբերի 29-ի գիշերը եւ 30-ի առավոտյան հակառակորդի ռազմական ինքնաթիռները ռմբակոծվածներ հասցրին Գորիս-Լաչին ուղեհատվածի պաշտպանական դիրքերին:

Սեպտեմբերի 30-ի առավոտյան հակառակորդը լայնածավալ հարձակողական գործողություններ սկսեց Լաչինի միջանցքի ուղղությամբ: Կեսօրին Սուսալը գյուղի կողմից թշնամու զորաջոկատները գրոհեցին հայկական դիրքերը: Քելբաջարի շրջանից թշնամին հարձակումներ գործեց նաեւ միջանցքի հյուսիսային հատվածի ուղղությամբ: Ծանր մարտեր ծավալվեցին Ղոչազ եւ Տիգիկ գյուղերում: Հայկական կազմավորումները հետ մղեցին թշնամու հարձակումները:

Փոփոխական հաջողություններով ընթացած մարտական գործողությունների բնույթից, ծավալից ու սաստկությունից դատելով, կարելի է միանշանակորեն պնդել, որ Աղբյուրների ռազմական դեկավարության ձեռնարկված լայնածավալ ագրեսիային հնարավոր եղավ դիմակայել միմիայն օգոստոսի 14-ին կազմավորման նոր փուլ թեւակոխած ԼՂՀ ԻՊՈՒ-ի, բանակային ինֆրակառույցների ու ծառայությունների ձեւակործան, կենտրոնացված հրամանատարության ու շտաբների համակարգված աշխատանքի, ինչպես նաեւ հայ զինվորների համընդհանուր հերոսության ու տոկունության, հայրենի հողը պաշտպանելու վճռականության շնորհիվ¹⁷: Սակայն, քանի դեռ բանակի կազմավորման գործընթացը նոր էր թափ առնում, ապա նրա արդյունքները շղափափվորեն տեսանելի է ընկալելի եղան միայն մի քանի ամիս անց, երբ համառ պաշտպանական մարտերում հյուծելով թվապես ու տեխնիկապես, սպառազինությամբ ու նյութական ռեսուրսներով մի քանի անգամ գերակշռող թշնամական ուժերը, ԻՊՈՒ հրամանատարությունը հող նախապատրաստեց հաջորդ տարվա փետրվարի 5-ի

հակահարձակման եւ հակառակորդի մարտակերտյան, Լաչին-քելբաջարյան խմբավորումները ջախջախելու համար:

1. «Արցախ», ԼՂՀ Գլխ պաշտոնաթերթ, N37, 1992 թ.:
2. «Արցախ», N39, 1992 թ.:
3. Պաշտպանության բանակի կենտրոնական արխիվ (ՊԲԿԱ), օպերատիվ հերթապահի աշխատանքային տետր (ՕՀ ԱՏ), N 147, էջ 1:
4. «Արցախ», N45, 1992 թ.:
5. ՊԲԿԱ, ՕՀ ԱՏ, N 147, էջ 30:
6. «Արցախ», N47, 1992 թ.:
7. Арутюнян В.Б. События в Нагорном Карабахе. Хроника, ч.4, Ереван, 1994, с.170.
8. «Արցախ», N 38, 1992թ., Ս.Քանալյան, Ավոն մեր աչքերով, Երևան, 1994, էջ 153-155, «Մարտիկ», ՊԲ պաշտոնաթերթ, թ. 36, 1999 թ.:
9. «Արցախ», N39, 1992 թ.:
10. 14.09.1992թ. թվակիր մարտական գեկուցագիրը պահվում է ՊԲ թիվ 35383 զորամասի օպերատիվ բաժնում:
11. ՊԲԿԱ, ՕՀ ԱՏ, N 147, էջ 20:
12. Նույն տեղում, էջ 24-25:
13. Չեկուցագիրը պահվում է ՊԲ թիվ 35383 զորամասի օպերատիվ բաժնում:
14. «Արցախ», N 45, 1992թ.:
15. «Արցախ», N41, 1992 թ.:
16. «Անիս» լրատվ. գործակալ. արխիվ, N L-027, Աղդր. ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումների ամենամսյա ամփոփաթերթիկ, 20 սեպտեմբերի 1992թ
17. «Մարտիկ», թ. 37, 1999 թ.:

Арутюнян М.А.

Боевые действия в сентябре 1992г.

Резюме

На основе выводов, сделанных в результате анализа причин временных неудач летней кампании 1992г., был предпринят ряд неотложных мер по централизации и укреплению органов государственной власти и управления, а также объединению системы командования, сил и средств самообороны, что вскоре и дало свои положительные результаты. После перехода на новую организационно-штатную структуру ССО, т.е. проведения работ по формированию армейских инфраструктур и оборонительных районов, была создана возможность для отражения широкомасштабных осенних наступательных действий противника, обескровления его сил в упорных оборонительных боях и, тем самым создания предпосылок для освобождения оккупированных населенных пунктов, восстановления территориальной целостности НКР.

Судя по характеру, масштабам и интенсивности прошедших с переменными успехами боевых действий, можно однозначно утверждать, что противостоять широкомасштабной агрессии, предпринятой руководством Азербайджана против НКР, стало возможным в

результате вступления 14 августа ССО НКР в новый этап преобразования и благодаря формированию армейских инфраструктур и служб, координированной работы централизованного командования и штабов, а так же массового героизма и выдержки армянских солдат, их решимости отстоять родную землю. Однако, ввиду того, что процесс формирования армии только-только набирал темпы, ощутимые результаты его стали зримыми лишь через несколько месяцев, когда, изнуряя в упорных оборонительных боях вражеские силы, многократно превосходящие численностью личного состава, техникой, вооружением и материальными средствами, командованием ССО была создана почва для перехода 5 февраля следующего года в контрнаступление и разгрома мартакертской, лачинско-кельбаджарской группировок противника.

M. A. Harutunian
Combat Actions in September 1992

Summary

After thorough analyses and conclusions of what caused the temporary setbacks in the 1992 summer campaign there were taken some urgent measures for centralizing and invigorating of the state power organs rule and authority. There also took place merging of command system, equipment and ammunition in the self-defense forces (SDF) which factors soon brought about positive results. With the introduction of the new organizational structure in the SDF, i. e. after formation of army infrastructures and creation of defense areas, there appeared opportunities for beating back autumnal major offensives of the enemy, destroying enemy forces in stubborn defense fights and thus creating footholds for liberation of the occupied settlements and restoration of territorial integrity of the RMK (Republic of Mountainous Karabakh).

Taking in account intensity, dimensions and character of the combat actions going on with fluctuating successfulness it may be unequivocally stated that only as the result of RMK SDF entering new stage in reforming army services and infrastructures, dating from September 14, 1992, and also coordinated work of the centralized command and head-quarters as well as mass heroism and high morale of the Armenian soldiers ready to do their best in defending the native land, it became possible to withstand the wide range aggression undertaken by Azerbaijan authorities against the RMK. Still and yet because it was just the beginning of the army organizing process, its more tangible results became obvious only a few months later, when after wearying out in stubborn defensive fights the enemy troops incomparably more numerous and better equipped with arms and ammunition, the SDF supreme command created the grounds for counterattacking on February 5, 1993, and routing the Mardakert and Lachin-Kelbajar groups of the enemy.

Մարումյան Ն. Պ.
**ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ**

Այսօր, վեր հանելով արխիվային փաստաթղթերը, ազատ մամուլի գոյության պայմաններում ուսումնասիրելով հրատարակված աշխատանքները¹ և վիճակագրական տեղեկությունները², մենք կարող ենք ճշգրիտ պատկերացում կազմել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ինչպես ժողովրդագրական պրոցեսների, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնագավառի մյուս ոլորտների և քաղաքական իրավիճակի մասին, պարզել այն նախադրյալները, որոնք հասունանալով անխուսափելի դարձրին 1988 թվականից Ղարաբաղում ծնունդ առած քաղաքական իրադարձությունները:

Դեռևս մինչև արցախյան շարժումը Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական կառավարությունը, հիմք ընդունելով 1921թվականի հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից ընդունված որոշումը³ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին տալու մասին, շարունակում էր հայ բնակչության նկատմամբ կիրառել ազգային իրավունքները ուսման հարելու և խտրական քաղաքականություն, որի իմաստն էր հայաթափ անել Լեռնային Ղարաբաղը և մարզիկն էթնիկական առումով գուտ ադրբեջանական տեսք տալ, աստիճանաբար ճանապարհ հարթելու պանթուրքիստական գաղափարների իրականացման, թուրանական տերության ստեղծման համար: Այդ նպատակները քողարկելով հանդերձ, Ադրբեջանի պատմաբան Իգրայր Ալիևը փորձում էր իր «Լեռնային Ղարաբաղ» գրքում համոզմունք ստեղծել, թե իբր 1923 թվականի հուլիսի 7-ին Ադրբեջանի Կենտգործկոմի կողմից հրապարակված «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմակերպման մասին»⁴ դեկրետը կարևոր նշանակություն ուներ Լեռնային Ղարաբաղի հետագա զարգացման համար: «... Ադրբեջանի աշխատավորների և ողջ սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում Լեռնային Ղարաբաղի աշխատավորները Սովետական կառավարության տարիների ընթացքում զգալի հաջողություններ ձեռք բերեցին տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառներում»⁵: Այսինքն անեն ինչ արվել էր բարեկեցիկ կյանք ստեղծելու և խաղաղությամբ ապրելու համար, որ ժողովրդագրական իրավիճակը պետք է խոսեր հոգուտ տեղի հայ բնակչության: Այնինչ նույն «սովետական տարիների» ընթացքում կուտակված փաստերն ու թվերը վկայում են այլ բանի մասին:

Մինչև Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելը, 1918-1920թթ. ազգամիջյան ընդհարումների հետևանքով բնակչության ընդհանուր թվաքանակը զգալիորեն պակասեց: Այսպես, եթե Լեռնային Ղարաբաղի տարածքում 1913թ. ապրում էր շուրջ 176 հազար մարդ, ապա 1926թ. այն զգալիորեն նվազեց՝ կազմելով 125,3 հազար մարդ⁶: Դրա հետ մեկտեղ Լեռնային Ղարաբաղի ընդհանուր բնակչության թվաքանակը զգալիորեն բարձրացել էր հայ բնակչության տեսակարար կշիռը և 1921 թ. դրությամբ կազմեց 94,4 տոկոս: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Չնայած Ադրբեջանի մուսավաթական ուժերը հարձակումներ էին գործում, բայց 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղը մնաց անկախ: Այնուհետև, տիրելով Լեռնային Ղարաբաղի հարևանությանը բնիկ հայ բնակչությամբ բնակեցված մի շարք շրջանների Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը կազմակերպեց հայ բնակչության քաղող, որից փրկվածների մի մասը ապաստան գտավ Լեռնային Ղարաբաղում:

Ընդհանուր առմամբ Լեռնային Ղարաբաղը, ինչպես նաև ամբողջ Հայաստանը, այդ տարիներին տվեց մեծաթիվ կորուստներ⁷:

Սակայն Ադրբեջանի մի խումբ աշխարհագրագետներ, առանց որևէ ստույգ վիճակագրական արդյուր վկայակոչելու, «Բակինսկի ուսքոչի» թերթի էջերում գրում էին, որ իբր թե 1921թ., Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու պահին, այնտեղի բնակչության թվաքանակը 90 տոկոսը ադրբեջանցիներ էին⁸: Դրանով նրանք փորձում են «բացատրել», «պատճառաբանել» ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 4-ի որոշումը՝ հուլիսի 5-ի որոշմամբ փոխարինելու անհրաժեշտությունը: Այսինքն, 10

տուկոս հայերով բնակեցված տարածքին շնորհիվ է ինքնավար մարզի կարգավիճակ՝ Ադրբեջանական խՍՀ կազմում:

Եթե խորհրդային կարգերի հաստատումով Լեռնային Ղարաբաղում բնական աճի շնորհիվ նկատվեց բնակչության ընդհանուր թվաքանակի կայունացում և նրա ավելացում, ապա Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական խՍՀ-ի կազմի մեջ մտնելուց հետո սկիզբ է առնում նրա հայ բնակչության արտագաղթը:

Այն հիմնականում հանգեցրել է մարզի հայ բնակչության տեսակարար կշռի անընդհատ նվազմանը: Ընդ որում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության մեծ արտահոսքը մինչև երկրորդ աշխարհամարտը ուղեկցվում էր բնական բավականին բարձր աճով: Վերջինիս շնորհիվ այդ ընթացքում դրսևորվեց հայ բնակչության բացարձակ աճի որոշ միտում, թեև այն մեծ մասշտաբ չընդունեց: 1926-1939թթ. մարդահամարների ընթացքում, Ադրբեջանում հրապարակված վիճակագրական տվյալներով, մարզում հայ բնակչությունը ավելացավ 18.9 տոկոսով, այսինքն՝ 1926թ. 111,7 հազարից 1939 թ. հասավ 132,8 հազար⁸: Նույն տարիներին մարզի բնակչության ընդհանուր թիվը 125,3 հազարից հասավ 159,8 հազարի⁹ կամ ավելացավ 20,4 տոկոսով: Պրա հետևանքով հայերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր բնակչության թվակազմում կրճատվեց և 1930 թ. իջավ 83,1 տոկոսի: Մինչդեռ այդ տարիներին ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև խորհրդային Չայաստանը բնութագրվում էին ծնելիության և բնական աճի բավականին բարձր մակարդակով: Բավական է ասել, որ 1940 թ. Չայկական խՍՀ բնակչության ծնելիության և բնական աճի մակարդակով Միությունում առաջին տեղը էր գրավում և Ադրբեջանական խՍՀ-ին գերեզանցում էր համապատասխանաբար 11,8 և 12,7 մարդով (բնակչության 1000 շնչի հաշվով)¹⁰: Գրեթե համանման տարբերություն էր նկատվում Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանական խՍՀ-ի բնակչության բնական աճի մակարդակների միջև: Սյունամենայնիվ այդ տարիները Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության վերարտադրությունը բնութագրող «ամենաչափավոր» տարիներն էին, երբ արտագաղթը թեև կար, բայց մարզում մնալու հնարավորություն ուներ ծնված յուրաքանչյուր երկրորդ հայը:

Չայրենական պատերազմը իր խոր հետքը թողեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայ բնակչության վերարտադրության ընթացքի վրա: Չայրենիքի պաշտպանության համար զորակոչված 45 հազար¹¹ երիտասարդների մոտ կեսը 22 հազար¹² զոհվեց պատերազմի դաշտում: Պատերազմի թատերաբեմից հեռու գտնվող ոչ մի ժողովուրդը այդքան մեծաքանակ զոհեր չի տվել¹³: Պրա, ինչպես նաև անընդհատ ավելացող արտահոսքի հետևանքով մարզի հայ բնակչությունը զգալիորեն կրճատվեց և 1959 թվականին կազմեց 110,1 հազար(ավելի քիչ, քան 1926թ.): Ադրբեջանցի բնակչությունը չարունակում էր ավելանալ ինչպես բնական աճի, այնպես էլ դեպի Լեռնային Ղարաբաղ կատարվող ներհոսքի շնորհիվ, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բաժինը զգալիորեն նվազեց և 1959 թվականին իջավ 84,4 տոկոսի: Հետագա տարիներին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության արտահոսքը ավելի ուժեղացավ: Այսպես, 1965 թվականի հունիսի դրությամբ ԼՂԻՄ-ի բնակչության բնական աճը կազմում էր՝ 320 ծնունդ, 2 ծնունդ մահացած, 74 մահ, այդ թվում 1 մահ մինչև մեկ տարեկան երեխայի, 246 հոգի բնական աճ¹⁴, իսկ բնակչության շարժը նույն թվականի երկրորդ եռամսյակում (ապրիլ, մայիս, հունիս) կազմում էր հետևյալ պատկերը. մուտքը 439 մարդ, ելքը 480 մարդ, մեխանիկական աճը՝ 41 մարդ¹⁵:

1965 թվականի դեկտեմբերին ԼՂԻՄ-ից բնակչության արտահոսքը կազմեց 180 մարդ, մարդ մտավ 203 մարդ և բնակչության մեխանիկական աճը կազմեց +23 մա¹⁶: Այսինքն բնակչության մեխանիկական աճի տեղաշարժ նկատվեց նույն տարվա վերջի դրությամբ, բայց դա չէր նշանակում, թե ընդհանուր առմամբ 1965 թվականին բնակչության շարժը ԼՂԻՄ-ում կարելի է դրական համարել՝ հօգուտ բնակչության: Այսպես, (տես աղյուսակ 1)

ԼՂԻՄ-ի բնակչության շարժը 1965-75թթ.

Աղյուսակ 1

		մուտքը	ելքը	մեխանիկական աճը
գյուղական տարածք	1965թ. ¹⁷ 1975թ. ¹⁸	521 296	1044 911	-523 -615
քաղաքային տարածք	1965թ. ¹⁹ 1975թ. ²⁰	1659 2163	1640 1782	+19 381

1959թ. և 1989թ. մարդահամարների ընթացքում հայ բնակչությունն ավելացավ ընդամենը 35,4 հազար մարդով, այսինքն, 1959թ-ին այն կազմում էր 84,4 տոկոս, իսկ 1989թ-ականին 76,9 տոկոս: Նկատվում է հայ բնակչության թվի նվազում: Իսկ աղյուսակների բացարձակ աճը ավելի մեծ թիվ էր, այն դեպքում, երբ աղյուսակները մարզի ընդհանուր բնակչության մեջ 1959 թ. կազմում էին ընդամենը 13,8 տոկոս: 1959թ թվականին աղյուսակների թիվը 18,0 հազար մարդ էր, այսինքն՝ 13,8 տոկոս, 1989 թվականին 40,6 հազար, որը կազմում է 21,5 տոկոս: Այսինքն, գրեթե կրկնակի անգամ ավելացել էր աղյուսակների թիվը²¹: Այդ տարիներին ևս այստեղ բնական աճի մակարդակը բավականին բարձր էր: Այսպես, 1960 թվականին մարդում 1000 շնչի հաշվով ծնվում էր 40,5 երեխա, իսկ բնական աճը 33,3 մարդ էր²²: Ըստ որում Լեռնային Ղարաբաղը այդ ցուցանիշներով փոքր ինչ զիջում էր Աղյուսակների համայնքին:

Չետազա տարիների ընթացքում ԼՂԻՄ-ի բնակչության բնական աճը դրսևորվում է խիստ նվազման միտումով, որը բացատրվում է նրանով, որ մի կողմից իջնում էր ծնունդը, իսկ մյուս կողմից՝ բարձրանում էր մահացությունը: Այդ մասին վկայում են թվերը (տես աղյուսակ 2):

ԼՂԻՄ-ի բնակչության ծնելիությունը, մահը, բնական աճը 1951-1987թթ.
(բնակչության 1000 շնչի հաշվով)²³

Աղյուսակ 2

Տարեթվերը	Ծնվածների թիվը	Մահացածների թիվը	Բնական աճը
1951	31,4	9,4	22,0
1960	38,0	7,2	30,1
1961	40,5	7,2	33,3
1965	34,6	6,6	28,0
1970	27,6	6,9	20,7
1975	23,5	8,0	15,5
1980	25,1	7,9	17,2
1985	24,1	7,7	16,4
1987	25,2	7,4	17,8

ԼՂԻՄ-ի բնակչության բնական աճի նման նվազումը բացատրվում է ոչ միայն սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությամբ (թեև քիչ նկատելի), այլև առաջին հերթին, երիտասարդության սրընթաց արտահոսքով: Դա հանգեցրել է մարզի հայ բնակչության «ծերացման», որը մի կողմից իջեցրել է ծնելիությունը և մյուս կողմից բարձրացրել մահացությունը: Ըստ որում առանձնապես արտահայտիչ է մահացությունը: Օրինակ, եթե 1970-1986թթ. Աղյուսակների համայնքում բնակչության 1000 շնչի հաշվով մահացել է 6-7 մարդ, ապա ԼՂԻՄ-ում այդ ընթացքում այն կազմել է 7,5-8 մարդ՝ հանրապետությունում ծնելիության բավականին բարձր մակարդակի պայմաններում: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության աճի ընդհանուր վիճակը շատ վատացավ 1970 և 1979թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում, երբ մարզի աղյուսակների բնակչության 36,3 տոկոս աճի պայմաններում հայ բնակչությունն ավելացավ միայն 1,7

տոկոսով,կամ ընդամենը 2 հազարով: Այդ տարիներին մարզում մնում էր այստեղ ծնված

10 հայ բնակչից միսն մեկը, իսկ մնացած 9-ը հեռանում էր երկրի այլ շրջաններ: 1979թ. մարդահամարի տվյալներով այստեղ բնակվում էր 162,2 հազար մարդ, որից 123,1 հազարը կամ 75,9 տոկոսը հայեր էին:

Բավական է ասել, որ զգալիորեն բարձր աճի պայմաններում մարզի հայ բնակչությունը 1939-1979 թթ. պակասել էր շուրջ 10 հազարով: Ընդ որում 1923-1979թթ. ընթացքում մարզի գյուղական բնակչությունը կրճատվեց 61,3 հազարով²⁴: Այդ տարիների ընթացքում ամայացան մի քանի տասնյակ հայկական գյուղեր, իսկ աղյուսակային գյուղական բնակչությունը, ընդհանրապես, անընդհատ աճում էր: Ստեղծված իրավիճակի մասին վկայում են վիճակագրական տվյալները(տես աղյուսակներ 3 և 4):

ԼՂԻՄ-ի բնակչության թիվը վարչական շրջաններում ըստ խորհրդային մարդահամարների տվյալների²⁵

Աղյուսակ 3

	01.01 1959թ.	01.01. 1960թ.	01.01. 1961թ.	01.01. 1962թ.	01.01. 1963թ.	01.07. 1963թ.
Ստեփանակերտ քաղաքը և շրջանը	41333	42555	42243	45894	47048	48106
Շուշի քաղաքը և շրջանը	10617	10825	11050	11337	11608	11740
Մարդակերտ քաղաքը և շրջանը	37900	39258	40463	41426	42202	42702
Կարմիր շուկա ավանը,Մարտունի քաղաքը և Մարտունու շրջանը	25000	25772	26573	27387	28131	28446
Ջաղրուքի շրջանը	16791	17226	17319	17532	17734	17955
քաղաքային տարածք	35236	36215	37737	39739	41190	42212
գյուղական տարածք	95355	98670	101161	103837	105533	106737
Ընդ. ԼՂԻՄ-ում	131641	134636	137648	143576	146723	148949

Այսպիսով, Աղբյուրում հրատարակված պաշտոնական վիճակագրական տվյալներով 1926-1979 թթ. Ղարաբաղի հայ բնակչությունը ավելացել էր 33,8 հազարով՝10,2 տոկոսով, իսկ աղբյուրային բնակչությունը՝ շուրջ 3 անգամ²⁶, այսինքն 38 հազարով:

Պարզվում է, որ հայ բնակչության բացարձակ աճը շատ ավելի փոքր էր, քան աղբյուրային չափերը,թեև 1926թ հայեր իրենց թվաքանակով շուրջ 10 անգամ գերազանցում էին աղբյուրային չափերին: Դա հայ բնակչության մշտապես տեղի ունեցող կայուն արտահոսքի և աղբյուրային բնակչության ներհույս արտահայտություն էր:՝ Հենց այդ պատճառով էլ, եթե 1926 թ. ԼՂԻՄ-ում բնակչությունը կազմում էր Աղբյուրային իսկ ընդհանուր բնակչության 5,4 տոկոսը, ապա 1989թ. մարդահամարի տվյալներով իջավ մոտ 2,7 տոկոսի²⁷, այդ այն

ԼՂԻՄ-ի բնակչության թիվը և ազգային կազմը մարդահամարների տարիներին (հազար մարդ)²⁹

Միավորակ 4

	1926 թ	1939 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1989 թ.
Ամբողջ բնակչությունը	125,3	150,8	130,4	150,3	1622	189,1
այդ թվում՝						
հայեր	111,7	132,8	110,1	121,1	123,1	145,5
տուրքմեններ	89,1	88,1	84,4	80,6	75,9	76,9
ադրբեջանցիներ	12,6	14,1	18,0	27,2	37,3	40,6
տուրքմեններ	10,1	9,3	13,8	18,1	22,9	21,5
ռուսներ	0,6	3,2	1,8	1,3	1,9	1,9
տուրքմեններ	0,5	2,1	1,4	0,9	0,8	1,0

դեպքում, երբ չպետք է անտեսել, որ 1988 թ. սումգայիթյան և մյրան հաջորդած դեպքերի հետևանքով Ադրբեջանի հայաշատ վայրերից փախստական հայերի որոշ խումբ բնակություն հաստատեց ԼՂԻՄ-ում՝ նախկին բնակավայրերում:

Այդ պատճառով էլ 1989 թ. մարդահամարի տվյալներով մարզի հայ բնակչության տեսակարար կշիռը փոքր-ինչ բարձրացավ, իսկ մարդահամարից հետո այդ տոկոսը իջավ մարզում ադրբեջանցիներով բնակեցված շրջաններում ինտենսիվ բնակարանաշինարարությունն իրականացնելու և ադրբեջանցիներով բնակեցնելու հետևանքով:

Զմայած արտադրության բնույթով Լեռնային Ղարաբաղը շարունակում էր մնալ գերազանցապես ագրարային (1979 թ. քաղաքներում ապրում էր բնակչության 44 տոկոսը)³⁰ և Ադրբեջանի հումքային կցորդը, այդուհանդերձ մարզը բնութագրվում է գյուղական հայ բնակչության էական նվազմամբ: 1923-1979 թթ. մարզի գյուղական բնակչությունը պակասել էր 61,3 տոկոսով³¹: Հասկանալի է, որ հայ գյուղական բնակչության բացարձակ նվազող թիվը գերակշռում է հիշատակվող 61,3 հազարին, քանի որ դրա մեջ են մտնում նաև ադրբեջանցիներով բնակեցված գյուղերի բնակիչները, որոնց թիվն անընդհատ աճելանում էր: Այսպես, օրինակ, ԼՂԻՄ-ի վիճակագրական վարչության տեղեկությունների համաձայն 1962 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԼՂԻՄ-ի գյուղական բնակչությունը կազմում էր 98525 մարդ կամ 443 մարդով պակաս 1961 թվականի հունվարի 1-ի տվյալների համեմատությամբ: Գյուղական բնակչության նվազումը տեղի է ունեցել Ստեփանակերտի շրջանի հաշվին 310 մարդով, Մարդակերտի շրջանի հաշվին 165 մարդով, Շուշիի շրջանի հաշվին 9 մարդով, իսկ մյուս շրջանների հաշվին կա ամ Մարտունու շրջանում 19 մարդով, Հադրուքի շրջանում 22 մարդով³²:

Նշանակալից է Ադրբեջանի կառավարության կողմից դեռևս 1930-ական թվականների սկզբներին մշակած ԼՂԻՄ-ի հայ երիտասարդությանը հայրենի օջախից արտաքսելու խորամանկ ու դիվային միջոցը: Դա գյուղական երիտասարդության մասսայական բռնի հավաքել էր Ադրբեջանի նավթահանքերը սևագործ բանվորական աշխատանքի և Բաքվի արվարձաններում ստեղծված, այսպես կոչված, ֆաբրիկա-գործարանային ուսուցման ծամբարներում նույնպես աշխատանքի անցնելու համար: Այսպիսի բռնի հավաքագրումները շարունակվեցին մինչև 1950-ական թվականների վերջերը: Ղարաբաղի հայ երիտասարդության մասսայական հավաքը կատարվում էր տեղերում սովորական ապրանքի պես: Հավաքագրված երիտասարդությունը ապրանքային զնաքներով ուղարկվում էր Բաքու³³: Այդ կապակցությամբ 1933 թ. «Սովետական Ղարաբաղ» թերթում գրված էր, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը պարտավորվել է Ազնեֆտին կազմակերպված ծնով տալ 1300 բանվոր, որը պետք է հավաքագրվեր 3 օրվա ընթացքում (օգոստոսի 12-15-ը)³⁴: Բացի այդ 1300 հոգուց, Ղարաբաղից 100 երիտասարդներ պետք է ուղարկվել Բաքվի ֆաբրիկա-գործարանները: Փաստորեն երևում է, որ սոցիալիզմ կառուցող Ադրբեջանում ԼՂԻՄ-ի երիտասարդությունը դիտվում էր որպես ապրանք, առանց

ամորաքի, որի հետ վարվում էին այնպես, որպես կվարվեին յուրաքանչյուր մթերատեսակի կամ իրի հետ:

Բարձրացնելով ԼՂՀ պետարխիվի փաստաթղթերը հանդիպում ենք այդ գործընթացի վնասակար ազդեցությունն ու հետևանքները բնութագրող վկայությունների: Դեռևս 1963 թ. արդեն քանիեորոշ անգամ, Ադրբեջանի ԿԿ ԼՂ մարզկոմի քարտուղար Գ.Մելքունյանը և Աշխատավորների ղեկավարության ԼՂՀՄ Սովետի գործկոմի նախագահ Մ.Օհանջանյանը դիմել էին Ադրբեջանի ՍՍՀ մինիստրների Սովետի նախագահ Է.Ն.Ալիխանովին վերանայելու 30-ական թվականներին Ադրբեջանի կառավարության կողմից մշակած ԼՂՀՄ-ի հայ երիտասարդության հավաքագրման վերաբերյալ ծրագիր-պլանը: Այսինքն մարզի պաշտոնական գրադրության մեջ այդ ծրագիր-պլանի վերացմանը մեծ տեղ էր հատկացվում: Այնտեղ ասվում էր՝ «16 տարիների ընթացքում կազմակերպված ճանապարհով մարզի շրջաններից հավաքագրվեցին և հանրապետության արդյունաբերական ու շինարարական կետեր ուղարկվեցին տասնյակ հազարավոր բանվորական ձեռքեր(ուժ): Նշված կոնսիդեցնտը աշխատանքային պայմանագրերի ժամկետի ավարտումից հետո մնացին նոր աշխատանքային վայրերում, դառնալով քաղաքների մշտական բնակիչներ:

Երիտասարդության մի մասը Սովետական բանակում զինվորական ծառայությունն ավարտելուց հետո նույնպես աշխատանքի անցավ տարբեր քաղաքներում: Այդ պատճառով մարզում սուր կերպով զգացվում է բանվորական ուժի պակաս, հատկապես լեռնային գոտիների կոլտնտեսություններում, որտեղ գյուղատնտեսական աշխատանքների հիմնական տեսակները մեքենայացման հնարավորություն չունեն և իրականացվում են ձեռքով:

Այսպիսի իրավիճակից և իրական հնարավորությունից ելնելով Ադրբեջանի ԿԿ-ի ԼՂ մարզկոմը և Աշխատավորների ԼՂՀՄ Սովետի գործկոմը խնդրեց Ադրբեջանի ՍՍՀ մինիստրների Սովետի նախագահ Է.Ն.Ալիխանովին կարգազրեղի բաշխման ժամանակ մարզից բանվորական ուժի կազմակերպված հավաքագրման պլանը նախատեսված տարեկան պլանից նվազեցնել 50 տոկոսով:

Այսինքն, հետևությունը մեկն է. ադրբեջանական կառավարության կողմից ընդունված օրենքով կազմակերպված ձևով իրականացվում էր Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության երիտասարդ ուժի արտահոսքը, քողարկելով այն կատարելագործվելու և մասնագիտություն ձեռք բերելու հանգամանքով:

Ադրբեջանի ղեկավարությունը լույ մի հոգս էր ունեցել՝ որքան կարելի է խոր ու անհուսալի փակուղի մղել մարզը, նրա հայ բնակչությանը քաշել զարդաքարաբանական (ծի տակ՝ մոռանալով, որ այդ հայությունը երբեք չի հանդուրժեւ օտարի լուծը և իր ազգային ինքնությունն ու վարչական ինքնավարությունը միշտ էլ պահպանել է արյան գնով:

1. Нагорный Карабах, Историческая справка, Е., 198; Перестройка и национальные отношения (О событиях в Нагорном Карабахе и вокруг него), Е., 1989; А.А.Хуршудян, Истина — единственный критерий исторической науки, Е., 1989; Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах, Степанакерт, 1989; Правда о Нагорном Карабахе, Степанакерт, 1989; Հր.Արախանյան, Արցախյան գոյամարտ, Ե., 1991, Բ.Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, Ե., 1994, Վ.Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Ե., 1991 և այլն:
2. Нагорный Карабах за 50 лет (1923-1973 гг.), (Стат.сб.), Степанакерт, 1974; Нагорно-Карабахская Автономная область Азербайджанской ССР за 60 лет. Юбилейный статистический сборник, Баку, 1983; Народное хозяйство СССР за 70 лет, М., 1987; Статистический ежегодник, Баку, 1987 и 1989 гг.; Վիճակագրական ժողովածու 1985-1996ԴԴ., Ստեփանակերտ, 1997 և այլն:

3. «Ելնելով մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր.ԽՍՀ սահմաններում, նրան տալով մարզային լայն ինքնավարություն, վարչական կենտրոն ունենալով ինքնավար մարզի կազմի մեջ մտնող Շուշի քաղաքը»: Տես՝ Զր.Արքահանյան, Արցախյան գոյամարտ, Ե., 1991, էջ 56-57
4. Алиев: Нагорный Карабах. История: Факты: События. Баку. 1989. с.88
5. «Нагорный Карабах за 50 лет» статистический сборник (1923-1973 гг.). Степанакерт. 1974. г ст. 17
6. Վ.Ե.Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Ե., Հայաստան, 1991թ., էջ 62:.
7. "Бакинский рабочий", 1989, 7 июня.
8. Всесоюзная перепись населения 1959 г. Азербайджанской ССР, М., 1963, с.140. Численность и состав населения СССР, М., 1924, с.126.
9. Нагорный Карабах за 50 лет \1923-1973 гг.\ \Статистический сборник\ Степанакерт, 1974, ст. 17.
10. Народное хозяйство СССР за 70 лет, М., 1987, с.406-407.
11. «Եղբայրական ընտանիքում», խմբկղեգիմ՝ Զ.Մ.Բաբայան, Ն.Հ.Վոլոդին, Ս.Ա. Գասպարյան, Ջ.Բ.Գուլին, Բ.Ս.Վերկով, Ազրնեշր.Բաքու, 1973, էջ 27.
12. Եղբայրական ընտանիքում, Ազրնեշր.Բաքու, 1973թ., էջ 31:
13. Հ.Չմայած մեծաթիվ կորուստներին, մարզը տվել է խորհրդային բանակի 23 զեներալ, խորհրդային Միության ծովակալ. Լեռնային Ղարաբաղի ծնունդ են խորհրդային Միության 21 հերոսներ, որոնցից մեկը Նելսոն Ստեփանյանը, խորհրդային Միության կրկնակի հերոս է:(ԼՂԻՄ-ը ՄԱՅՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում (ԼՂԻՄ-ի 60-ամյակի առթիվ), Ստեփանակերտ, 1983թ., էջ 5):
14. ԼՂՀ պետարխիվ, ֆ.142, ց.5, գ.29, ք.123:
15. Նույն տեղը, ք.126:
16. Նույն տեղը, ք. 69:
17. ԼՂՀ պետարխիվ, ֆ.142, ց.5, գ.29, ք.55:
18. Նույն տեղը, գ. 54, ք.18:
19. Նույն տեղը, գ.29, ք.57
20. Նույն տեղը, գ.54, ք.16:
21. Народное хозяйство СССР за 70 лет, М., 87, с.406-407. Численность и состав населения СССР, с.126, м.е.խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Ե., 1991, էջ 66:
22. Նույն տեղը, Վ.Ե.Խոջաբեկյան, էջ 64:
23. Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах. Статистический сборник, Степанакерт, 1963, с.39. НКАО 50 лет в дружной советской семье, Степанакерт, 1973, с.36. Нагорный Карабах за 50 лет, Стат.сборник, Степанакерт, 1974, с.23. м.е.խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Ե., 1991, էջ 65:
24. НКАО в дружной советской семье, Степанакерт, 1973, с.31, Численность и состав населения СССР, с.126, м.е.խոջաբեկյան, էջ 68:
25. ԼՂՀ պետարխիվ, ֆ.142, ց.5, գ.1, ք.50:
26. НКАО 50 лет в дружной Советской семье, с.33. Численность и состав населения СССР, с.126.
27. Մինչդեռ որոշ արտահոսքի պայմաններում անգամ մարզի հայ բնակչության բիվը հնարավոր էր այդպիսի մեծ տարբերություն չէր տա, եթե մարզում ստեղծված

լինեին բնակչության վերարտադրության համար համապատասխանաբար նորմալ պայմաններ, չոտնահարվեր հայ բնակչության ազգային արժանապատվությունը, ապա նրա թվական աճը ոչ թե կնվազեր, այլ կավելանար:

28. ЗСФСР в цифрах, с. 4-5, 1989Г. մարդահամարի նյութերը:
29. НКАО 50 лет в дружной Советской семье, с. 33. Численность и состав населения СССР, с. 126. Нагорный Карабах за 50 лет, Стат. сборник, Степанакерт, 1974, с. 19-20, м. е. խորհրդային, Արցախը փորձության ժամին, Ե, 1991, էջ 66, НКАО Азербайджанской ССР за 60 лет, Юбилейный статистический сборник, Баку, 1983, с. 6.
30. Численность и состав населения СССР, М., 1924, с. 14.
31. НКАО 50 лет в дружной советской семье, Степанакерт, 1973, с. 31. Численность и состав населения СССР, м., 1924, с. 126.
32. ԼՂՀ պետարխիվ, ֆ. 142, ց. 5, գ. 1, ք. 1:
33. Արցախ, Ստեփանակերտ, 1989թ., N. 2-3, էջ 106:
34. Խորհրդային Ղարաբաղ, 1933, օգոստոսի 12, N. 180:
35. ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 20, ք. 208:

Сарумян Н.П.

**Демографические миграции в Нагорном Карабахе в
преддверии Арцахского движения**

РЕЗЮМЕ

Архивные материалы НКР, статистические показания и опубликованные работы показывают ту целенаправленную политику, которую вели азербайджанские власти в Нагорном Карабахе для этнического изменения Нагорно-Карабахской автономной области в пользу азербайджанцев, для претворения пантюркской идеологии к пути создания Туранской империи.

По пути претворения этих целей Азербайджанское правительство в первую очередь внесла демографическое изменение области. Это одна из тех социально-экономических и политических предпосылок, которые возраждали политические события в НКАО возникшие в начале 1988 года.

Sarumian N.P.

SUMMARY

Materials of archives of NKР, statistikal evidenced and some published work shou the purposeful policed carried out by Azerbaijanian authorities in Nagorny Karabakh so that they could change the inhabitants' ethnic arrangement in the region lavourt of the Azerbaijanians, in lavourt of panrurk's ideology on the way of creating Turan Empire. On the way of realizing these purposes Azerbaijanian Government brought in some changes of demography in the region. It is one of those socil a political preconditions which rgenerated political events at the beginning of 1988.

Սաֆարյան Վ.Վ.
**ՆՈՐԱՅԱՅՑ ՅԱՍՈՒՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՍԵՅՏՆՈՇԵՆ
ԳՅՈՒՂԻ ԲԱՐԱԲԼՈՒՐ ՎԱՅՐԻՑ**

1996 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Արցախի պետական համալսարանի և Հայաստանի հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը դաշտային-հետազոտական աշխատանքներ է կատարել Լեռնային Ղարաբաղի Մեհոխեն գյուղի Զարաբլուր վայրում: Հետազոտությունը թույլ տվեց ի հայտ բերել նրանից դեպի արևմուտք և արևելք որոշ հեռավորության վրա գտնվող երկու դամբարանադաշտ: Արևմտյան դամբարանադաշտն իրենից ներկայացնում է մի ոչ բարձր, զառիվայր բլրակ մեկ տասնյակ հոդափոր թաղումներով, որոնց արտաքին նշաններն են համդիսանում գերեզմանագրերի միջին չափսերով քարերը:

Արևելյան դամբարանադաշտը գտնվում է Զարաբլուրից 250 մետր դեպի արևելք և բաղկացած է դամբարանաբլուրների, կրոնիխների և քարաբլուրային տիպի բազմաթիվ թաղումներից, որոնք մի քանի շարքերով հարավից-հյուսիս ձգվում են կաթնապարանքային ֆերմայից մինչև Բաղարա գետը: Ծայրամասային խոշոր հողաթմբերը սկիզբ են առնում վարելահողի եզրից և ձգվելով արևելքից դեպի արևմուտք, գտնվում են խոջալուի դամբարանադաշտի հետ մի գծի վրա, որոնց միջև հեռավորությունը 500-600 մետր է: Միայն հերկադաշտն է իրարից բաժանում այդ երկու դամբարանադաշտերը: Հնարավոր է պատմական ինչ-որ կապ կա այդ երկու հուշարձանների միջև, առավել ևս, որ դրանք ունեն ոչ քիչ ընդհանուր արտաքին նշաններ՝ մանր և խոշոր հողաթմբեր, քարածածկ դամբարանաբլուրներ, սովորական գլաքարե ու կրաքարե կրոնիխներ: Սակայն այդ հարցը պարզել հնարավոր կլինի միայն նորահայտ դամբարանադաշտի մանրագնին ուսումնասիրությունից հետո:

Մեր կողմից պեղվել է երկու դամբարան, մեկը՝ արևմտյան, մյուսը՝ արևելյան դամբարանադաշտում, որոնց պայմանականորեն նշագրել ենք, համապատասխանաբար, թիվ 1 և թիվ 2:

Թ.1 դամբարան. Տեղակայված է Զարաբլուրից դեպի հյուսիս-արևելք՝ ոչ մեծ բլրակի հյուսիսային լանջին, որը տեղաբնակների կողմից անվանվում է «Եխաայի խութ»: Երկաշերտը հանելուց հետո պարզվել է, որ դամբարանն իրենից ներկայացնում է մի հողափոր գերեզման առանց ծածկույթի, որի եզրերը նշագատվում են գերեզմանի պարագծով շարված միջին չափսերի յոթ քարեր: Դամբարանն ունի ուղանկյան ձև և ուղղված է հյուսիսից հարավ: Նրա ներքին չափսերն են 155x74x60սմ (նկ.1): Սակերևույթից 60 սմ խորության վրա, համարյա գերեզմանի կենտրոնում գտնվում էր քայքայված կմախքը՝ ծախ կողքի վրա խիստ կծկված դիրքով, գլուխը դեպի հարավ-արևմուտք, դեմքը դեպի հյուսիս-արևմուտք, ձեռքերը գտնվում էին դեմքի մոտ: Զեռքի մատների ոսկորների մեջ գտնվել է իլիկի ոսկրե գլխիկը: Կմախքից դեպի հյուսիս-արևմուտք 20-30 սմ հեռավորության վրա հայտնաբերվել են երեք կավածոթների մնացորդներ, որոնց բեկորները դիպչելիս փշրվում են: Գերեզմանի հյուսիսային պատի մոտ, որը շարված է հինգ ոչ մեծ գլխաքարերից, առաջին կմախքի համարյա ոտքերի մոտ, գտնվել են ստորին ծնոտի աջակողմային մասը՝ երեք ատամներով, և զանգուսկրի մնացորդները:

Թ.1 դամբարանի իրերի համալիր են կազմել իլիկի ոսկրե գլխիկը, մածուկից պատրաստված 50, երկու բրոնզե և մեկ սարդիոնե ուլունքները, սև օբսիդիանից պատրաստված կախազարդ-հուռուքը և սև ողորկված ու դարչնագույն խեցեղենի բեկորները:

Իլիկի գլխիկը կոնաձև է, պատրաստված է խոշոր եղջերավոր անասունի վերջույթի կողոսկրից, տրամագիծը՝ 4 սմ: Ոսկրե իլիկները լավ հայտնի են Ռեդկին-Լազերի, Ստեփանակերտի, Ջարխեջի, Գուլիկոյի, Խրտանոցի և Հայաստանի մ.թ.ա. 1-ին հազարամյակի մյուս հուշարձանների գտածոներից՝:

Ուլունքների հիմնական զանգվածը պատրաստված է սպիտակ մածուկից: Դրանք ունեն կոճանձան, երկկոնուս, գլանային, եռանկյունի, տակառանման և պրիզմայի ձևեր՝

լայնակի և երկայնակի փորագիր նախշերով: Նրանց մեջ առանձնապես աչքի է ընկնում համեմատաբար մեծ, սնկաձև ուլունքը, որի «զլխարկը» նախշազարդված է զուգահեռ հորիզոնական գծերի երկու: զուտիով, որոնց միջև գտնվող տարածությունը լցված է ուղղահայաց գծերով: Նմանատիպ ուլունքներ են հայտնաբերվել Նորադուզում², Թեյշեբախիում³, Արթիկում⁴, Օշականում⁵, Թրիպլեթյում⁶, Մինգեշաուրում⁷, Հայաստանի ու Անդրկովկասի այլ հուշարձաններում, որոնք վերաբերվում են երկաթե վաղ և լայն տարածման դարաշրջանին:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սև օբսիդիանից պատրաստված մրճիկաձև կախազարդ-հուռուքը, որի նման օրինակները մեզ հայտնի չեն: Երկարությունը 2,5 սմ է, լայնությունը՝ 1 սմ մի կողմից, 0,5 սմ՝ մյուս կողմից:

Խեցեղենը ներկայացնում են առանց զարդանախշերի խոշոր գավաթի բեկորները, որն ունի թրծված սև գույնով մակերես հետ ծավաժ բոլորապսակ, անցքեր ունեցող թեղրի կանթեր: Մյուս գավաթը դարչնագույն է ստորին մասում մրի հետքերով: Նման գավաթները բնորոշ են Հայաստանի մ.թ.ա. IX-VIII-րդ դարերի հուշարձաններին⁸:

Թ. 2. Պամբարան: Քարաքուրդից դեպի հարավ-արևելք, «Չնգլան» կոչվող վայրում է գտնվում, ինչպես վերը նշվեց, արևելյան դամբարանադաշտը: Մեր պեղած դամբարանը գտնվում է երկու մեծ դամբարանաբլուրների արևելքում: Այն իրենից ներկայացնում է մի քարե արկը, որը կողմնորոշված է հյուսիսից դեպի հարավ: Նրա շուրջը խառնիխուռն թափված են խոշոր զլխաքարեր, որոնք հավանաբար յուր ժամանակին լցված են եղել նրա վրա (նկ. 2): Հետաքրքիր է, որ խոջալուի դամբարանադաշտի քարածածկ դամբարանաբլուրները նույնպես գտնվում են հողե մեծ դամբարանաբլուրների արևելքում:

Քարե արկի արևելյան և արևմտյան պատերը կառուցված են յուրաքանչյուրը մեկ խոշոր կրաքարային բեկորից, հյուսիսային պատը՝ մեկ խոշոր մենաքարից՝ ծածկի մի մասը կազմող «քիվով», իսկ հարավայինը՝ միջին չափսերի հինգ գետնաքարից: Ներքին չափսերն են. 180x100x100 սմ: Քարե արկը համարյա կիսով չափ լցված էր երկու ու քարերով: Պատերի վերին եզրից 1 մ խորությամբ վրա հայտնաբերվել են մարդկային առանձին ոսկորներ խեցեղենի բեկորներ, մածուկի և սարդիոնի ուլունքներ, ամսի կտորատանքներ մարդու ատամների հետ խառնված: Խցիկի ներսում հողը փոփրված էր, բոլոր ոսկորները վնասված, ինչը հնարավորություն չի տալիս որոշել կմախքի դիրքը: Պրա հետ միասին, դամբարանում գտնված 115 ատամները ցույց են տալիս, որ դա կոլեկտիվ թաղում է:

Դամբարանային գտածոն կազմված էր զարդարանքի իրերից, երկաթե դաշույնից և խեցեղենի բեկորներից:

Դամբարանի թվագրման համար առանձնահատուկ հետաքրքրություն ունի երկաթե դաշույնը: Այն իրենից ներկայացնում է մի տափակ, կոփածո շեղք, որի վերին մասն ավարտվում է շրջանակն ամրացնելու համար երեք անցք ունեցող կոթա: Դաշույնն ուղիղ է, միասայր: Շեղքի երկարությունն է 15 սմ, կոթառի՝ 6,5 սմ, շեղքի առավելագույն լայնությունը՝ 1,6 սմ: Կոթառավոր երկաթե դաշույնները լայնորեն տարածված են եղել Հայաստանում սկսած վաղ երկաթե դարից, և պահպանվել են մինչև երկաթի լայն տարածման ժամանակաշրջանը: Դրանք հայտնի են Արթիկի, Անի-Պեմզայի⁹, Լենինականի¹⁰ (Գյումրի), Աստղածորի¹¹, Նորադուզի, Մուվսանի, Գուլվինոյի¹², հուշարձանների գտածոներից: Երկաթե դաշույնի բեկորների հետ միասին հայտնաբերվել է մեջտեղում արտահայտված կող, մեղ մասում անցք ունեցող մի բրոնզե սեղանաձև թիթեղիկ, ինչպես նաև մի ոչ մեծ բրոնզե պահումակ:

Թիթեղի ներսի կողմում հստակորեն նշմարվում է ժանգը, որը հուշում է, թե թիթեղիկն ըստ երևույթին, ծառայել է որպես դաշույնի կոթառի շրջանակ: Տարբեր մետաղների այդպիսի զուգակցումը բնորոշ է Հայաստանի վաղ երկաթե դարի հուշարձաններին¹³:

Չարդարանքի առարկաները կազմում են Հայաստանի մ.թ.ա. IX-VI-րդ դդ դամբարանային տվողական հավաքածուները: Գերեզմանում գտնվել է հեռացվող ծայրերով բունքային օղ և կլոր հատույթով բրոնզե բարակ լարից պատրաստված ականջօղ, վարդագույն և կարմիր սարդիոնից, երկնագույն և սպիտակ մածուկից, բրոնզե

թիբեղից ու ապակենման զանգվածից պատրաստված բազմազան գլխածև, երկկոն և կլոր ձևի բազմաթիվ ուլունքներ: Դրանք բոլորն էլ լավ հայտնի են Հայաստանի ու Անդրկովկասի ուշ բրոնզե դարից մինչև երկաթի լայն տարածման դարաշրջանին պատկանող զանազան հուշարձաններից: Ուլունքների մեջ առանձնապես իր նրբագեղությամբ աչքի է ընկնում կապույտ մածուկից պատրաստված տակառածև ուլունքը, որը դրվագված է կապույտ ակներ ունեցող սպիտակ ոլորակներով: Երևան գալով երկաթե դարի սկզբներին, այդպիսի ուլունքները երկար ժամանակ գործածվել են առանց նական փոփոխությունների¹⁴:

Ուշագրավ են վերին մասում հանգույցով ավարտվող երկար կանոն ունեցող բրոնզածուլ տանձածև կախազարդերը: Համանման կախազարդերը հայտնի են Լեռնային Ղարաբաղի Դաշրուլաղ գյուղի դամբարաններից և թվագրվում են մ.թ.ա. XII-XI-րդ դդ¹⁵:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում երկաթե փղորիկ գոտկակալը, որն ունի քառաթև աստղի ձև: Նման գոտկակալներ նույնպես տարածված են Հայաստանի և Անդրկովկասի վաղ երկաթե դարի հուշարձաններում և արձանագրվել են Լոռի-Բերդում¹⁶, Օշականում¹⁷, Արթիկում¹⁸:

Խեցեղենը ներկայացված է զանազան անոթների բեկորներով: Նրանց թվում կա դեպի ներս թեթևակի բեկված եզրապսակով, սև ոլողված, հարթահատակ զավաթի կտորներ: Պնակի եզրապսակից ցցված է սեղանածև խուլ ելունը: Կան մուգ-դարչնագույն կավից պատրաստված պնակներ հետ բեկված ձևավոր եզրապսակով, գորշ կավից պատրաստված զավաթի մաս՝ կոչակային կրկնատակով ու կլոր հատույթով բռնակ, լայն ու հարթ հատակ ունեցող, անբռնակ մեծ կճուճի բեկորները, որն ունի լայն փոր և խիստ հետ բեկված եզրապսակով ավարտվող երկար վիզ: Նշված խեցեղենը իր զուգահեռներն ունի Հայաստանի վաղ երկաթե դարի հուշարձաններում:

Հայտնաբերված նյութի փոքրաքանակ և հատվածական լինելը հնարավորություն չի տալիս լրիվ ծավալով բնութագրել նորահայտ դամբարանադաշտերը: Դրա հետ միասին, երկու դամբարանի հնագիտական համալիրների նախնական վերլուծությունը թույլ է տալիս Քարաբլուրի արևելյան դամբարանադաշտը թվագրել մ.թ.ա. XI-X-րդ դդ, իսկ արևմտյանը՝ մ.թ.ա. IX-VIII-րդ դդ:

1. С.А.Есаян. Древняя культура племен северо-восточной Армении (III-I тыс. до н.э.). Ереван 1976г. с. 203
2. А.А.Мартirosян. Раскопки в Головино. Ереван 1954г. с. 84-85
3. А.А.Мартirosян. Город Тейшебани. Ереван 1961г. с.64-65
4. Т.С.Хачатрян. Древняя культура Ширака. Ереван 1975г. с. 242-243
5. С.А.Есаян, А.А.Калантарян. Ошакан I. Ереван 1988г. Табл. I.XXXV, 7
6. Б.А.Куфтин. Археологические раскопки в Триалети, Тбилиси 1941г. с.55-57
7. Ш.Г.Садыкжаде. Древние украшения Азербайджана. Баку 1971г. табл. XXVIII и след.
8. С.А.Есаян, А.А.Калантарян. Ошакан I с. 99-100, Т.С.Хачатрян. Древняя культура Ширака с. 244-245
9. Т.С.Хачатрян. Древняя культура Ширака с. 233-234
10. А.А.Мартirosян. Армения в эпоху бронзы и раннего железа.Ереван, 1964 113, 132, 196
11. А.О.Мнацаканян. Раскопки на осушенной территории оз. Севан. СА вып. XXIII, 1955 с. 186-187
12. А.О.Мнацаканян. Археологические раскопки могильников в селении Головино, Труды ГИМА, вып. У, 1959г., с. 18, 19
13. М.Н.Погребова. Иран и Закавказье в раннем железном веке. М., 1977г., с. 78, 147; А.А.Мартirosян. Армения в эпоху ..., с. 289;



Դամբարան 1



Դամբարան 2

14. Т.С.Хачатрян. Древняя культура... с. 242-244; А.А.Мартirosян. Рас. в Головино. с. 84-85, его же Армения в эпоху бронзы... с. 210, Б.А.Куфтин. Археологические раскопки в Тriaлети с. 56-57
15. Յոս.Ա.Ասրյան, Հնագիտական նորահայտ նյութեր Էնոնային Ղարաբաղից. «ԼՀԳ», 1982թ., էջ., 96:
16. С.Г.Деведжян. Лори-Берд Ереван 1981г, с. 63, табл. XXV, II
17. С.А.Есаян, А.А.Калантарян. Ошакан 1 Табл. ХСУII, 5
18. Б.А.Куфтин. Археологические раскопки в Тriaлети, табл. XXIV

Сафарян В.А.

**Новонайденные археологические материалы из местечка
Караблур села Мектишен.**

Резюме

В июле- августе 1996 г. в местечке Караблур села Мектишен Аскеранского района, были выявлены два некрополя. Раскопки двух погребений на восточном и западном некрополях дали археологический материал, позволяющий сделать вывод о том, что эти погребения относятся к XI-IX и IX-VII вв. до н.э. и имеют историческую связь с культурой ходжалинского могильника.

Safarian V.A.

**New-found archeological materials from the village
Mektishen, the place Karablour.**

SUMMARY

In July-August of 1996 two tombs were unearthed in the place Karablour, village Mektishen of Askeran region. The diggings of these two interments on eastern and western tombs have given archeological material, which helps us to draw a conclusion, that the interments concern to XI-IX and IX-VIII centuries B.C. and have historical connection with the culture of Hodjalous tomb.

Ազգ.
արդյունա-
տնտեսութե-
հատվածի
փոփոխու-
պատասխ-
Նման ան-
ընձեռնելն
լուծելու ս-
որոշելը,
Հետեւաբ-
մասնավ-
բազմազ-
անանձի-
նեղաշն-
օգտագո-
ենթակա-
Յուրաքս-
գործընթ-
ռազմա-
արտաք-
իտոանկ-
տեղակ-
կայուն

միջոցու-
հանրայ-
էական
որտեղ-
ուն-
սերտի-
քաղաք-
մեխան

ել-
ապա-
հասա-
տարա-
ապա-
ծեւա-
ապա-
«Փոք-
ծրագ-
ապա-

ՄԻՆԱՅԱՆ Մ.Մ.

ՍԵՓԱԿԱՆԱՆՈՐՀԱՆ ԱՌԱՋԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂԴ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՎԱԳՐՈՒՄ

Ազատ շուկայական տնտեսության անցման գլխավոր արդյունքը ինքնուրույն եւ արդյունավետ գործող տնտեսական համակարգի ձեւավորումն է, իսկ շուկայական տնտեսության անցման հիմնական ուղղություններից մեկը՝ արդյունավետ ոչ պետական հատվածի ստեղծումը: Մասնավորեցումը ոչ թե սեփականության ձեւի մեխանիկական փոփոխություն է, այլ ամենից առաջ՝ տնտեսավարող սուբյեկտների վարչաքաղաքական պատասխանատվությունից տնտեսական պատասխանատվության անցման գործընթաց: Նման անցման գլխավոր նպատակը ոչ միայն ազատ ձեռնբեղեցների հնարավորությունը ընձեռել է շուկայական օրենքների շրջանակներում ընթացիկ տնտեսական խնդիրները լուծելու առումով, այլեւ իրենց գործելակերպի ռազմավարությունն ու մարտավարությունը որոշելը, կուտակման եւ սպառման քաղաքականությունը ինքնուրույն վարելը: Հետեւաբար, ԼՂԴ-ում շուկայական հարաբերությունների անցնելու գործընթացում մասնավորեցման ամբողջ աշխատանքները պետք է տարվեն համակարգված, բազմագործոն վերլուծության հիման վրա տարբերակված մոտեցում ցուցաբերելով առանձին ոլորտների ու ճյուղերի նկատմամբ, հստակեցնելով անցման փուլերը, ներդաշնակելով սեփականության ձեւի, դրա տիրապետման, տնօրինման եւ օգտագործման բնույթի փոփոխությունը տնտեսավարման համապատասխան ենթակառուցվածքային միջավայրի եւ մրցակցային հիմքերի ստեղծման հետ: Յուրաքանչյուր հանրապետություն յուրովի է իրականացնում սեփականաշնորհման գործընթացը ելնելով ազգային տնտեսության իրավիճակից, երկրի զարգացման ռազմավարությունից, տնտեսության ճյուղային եւ սոցիալական կառուցվածքներից, երկրի արտաքին եւ ներքին պայտքի մեծությունից, դրսից կատարվող ներդրումների չափից ու հեռանկարներից, պետությունից եկամուտների եւ ծախսերի հարաբերակցությունից, տեղական շուկայի տարողունակությունից, դրամավարկային քաղաքականության կայունությունից, երկրի աշխարհաքաղաքական դիրքից:

ԼՂԴ-ում սեփականաշնորհումը իրականացվել է երեք խոշոր ծրագրերի միջոցով՝ պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարական օբյեկտների, հանրային եւ պետական բնակելի ֆոնդի եւ հողի սեփականաշնորհման միջոցով: Սա նախնորեն տարբերվում է ՀՀ պետական գույքի սեփականաշնորհման գործընթացից, որտեղ սեփականաշնորհման սկիզբը հողային բարեփոխումներն էին: Բացի դրանից, ՀՀ-ում սեփականաշնորհման գործընթացը իրականացվեց սեփականաշնորհման սերտիֆիկատների միջոցով, որոնք որպես վճարման միջոց էին հանդիսանում ՀՀ քաղաքացիներին սեփականաշնորհվող պետական գույքի անվճար փոխանցման մեխանիզմի իրականացման համար:

1995թ. ընդունվեցին «Սեփականության մասին», «Պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման մասին» ԼՂՀ օրենքները, որոնց հիման վրա էլ՝ ԼՂՀ առեւտրի, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման վարձակալված տարածքների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման 1995-1996թթ. ծրագիրը: Ծրագրի իրականացման համար ձեւավորվել է կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման եւ ապապետականացման վարչություն եւ համապատասխան նորմատիվային բազա: «Փոքր» օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման 1995-1996թթ. ծրագրում ընդգրկված ձեռնարկությունների համար լայնորեն կիրառվեցին ապապետականացման ձեւերը (վարձակալություն, լիազորագրային կառավարում):

1996թ. ընդունվեցին «Պետական եւ հանրային ֆոնդի սեփականաշնորհման

մասին» ԼՂՀ օրենքը եւ նրա կիրարկումն ապահովող մի շարք ենթաօրենսդրական փաստաթղթեր: Բնակարանային տնտեսության հետագա գործունեությունը պայմանավորվեց բնակֆոնդի սեփականաշնորհման գործընթացով եւ դրան զուգահեռ «Համատիրությունների մասին» ԼՂՀ օրենքի հիման վրա ստեղծված համատիրություններով: Ապապետականացման գործընթացը կարգավորելու նպատակով սահմանվեց վարձակալությամբ համեմվող գույքի վարձակալական վճարի չափի որոշման կարգը: 1997թ. ապապետականացման եւ սեփականաշնորհման գործընթացը նպատակադրվեց ԼՂՀ պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման 1997թ. ծրագրի իրագործմանը: Այս ծրագիրը, ի տարբերություն նախորդի, ուներ ավելի որոշակի նպատակներ, հիմնախնդիրներ եւ ծրագրում ընդգրկված ձեռնարկությունների ու օբյեկտների ընտրության սկզբունքներ:

Ապապետականացման գործընթացը 1997թ. հիմնականում կիրառվեց խոշոր եւ միջին ձեռնարկություններում դրանց ապամեմաշնորհացման, կառավարման ընդունվածքային փոփոխման նպատակով եւ որպես սեփականաշնորհման նախապատրաստական փուլ:

1998թ. ԼՂՀ-ում շարունակվել են պետական գույքի մասնավորեցումը կանոնակարգող օրենսդրական դաշտի ընդլայնման եւ կատարելագործման աշխատանքները: Այս տարում ընդունվել են «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» եւ «ԼՂՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000թթ. ծրագրի մասին» ԼՂՀ օրենքներն ու այդ օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտեր: Ելելով սեփականաշնորհման ընթացքում ձեռք բերված փորձից, օրենքում մշակվել են պետական գույքի մասնավորեցման եւ գնահատման մեթոդների նոր մոտեցումներ ու ձևեր:

ԼՂՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000թթ. ծրագրում ընդգրկվել են էներգետիկայի, արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, կապի, կոմունալ տնտեսության եւ այլ ճյուղերի պետական 105 ձեռնարկություններ, որից 48-ը նախատեսվում է մասնավորեցնել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևով, իսկ մնացած ձեռնարկությունները ԼՂՀ կառավարության կողմից սահմանված ձևերով: Սեփականաշնորհման եւ ապապետականացման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերություններ, «փոքր» եւ անավարտ շինարարության օբյեկտները համարվում են 1998-2000 թվականների ծրագրի մաս եւ ենթակա են առաջնաերթ մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ձևերով:

1998թ. ԼՂՀ-ում ընդունվեցին «Հողային օրենսգիրքը» եւ «Հողի սեփականաշնորհման մասին» ԼՂՀ օրենքները, որոնց կիրարկումը նպաստեց հողերի գիտազանրեքն հիմնավորված արդյունավետ օգտագործմանը, սեփականության բազմաձևության հիման վրա տնտեսական բոլոր ձևերի իրավահավասար զարգացմանը, քաղաքացիների, ձեռնարկությունների եւ կազմակերպությունների իրավունքների պահպանմանը, հողային հարաբերությունների բնագավառում օրինակալության ամրապնդմանը:

Հողի սեփականաշնորհումը ԼՂՀ-ում համարում ենք ուշացած: Մինչեւ սեփականաշնորհման գործընթացը, տնտեսական բարեփոխումների ընթացքում ձեւավորված գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեությունը էլ ավելի քայքայեց արցախյան գյուղը՝ չնայած նրան որ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, վերջնականորեն քայքայեց այդ տնտեսությունների տնօրինությանը թողնված մեքենատրակտորային պարկը եւ ժառանգություն թողեց պետական բյուջեի ու կենսաթոշակային ֆոնդի հանդեպ կուտակած ահագին պարտքը:

Հողի սեփականաշնորհման արդյունքում այն գտավ իր տիրույթը. գյուղացու մոտ ձեւավորվեց սեփականատիրական մտածելակերպ, բարձրացավ պատասխանատվությունը հողի բերրության, բերքի պահպանման եւ վերջնական

արդյունքի նկատմամբ, աճեց գյուղատնտեսության բնագավառում զբաղվածների թիվը: Մակայն պետության կողմից չեն մշակվել եւ չեն ձեւավորվել գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության մանրէջական քաղաքականությունն ու դրա բաղադրիչները, ներառյալ գյուղացիական տնտեսությունների մատակարարման, արտադրանքի իրացման, պետական ոլորտում մնացող ենթակառուցների (ջրանցքներ, ջրատարներ, պոմպակայաններ) գործունեության, դրանց պահպանման ու զարգացման մոտեցումները: 2 ձեւավորվեցին հողի ազատ առք ու վաճառքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ՝ սեփականության իրավունքի ազատ շրջանառության բացակայության պատճառով:

2000թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մասնավորեցման ծրագրերում ընդգրկված է 721 «փոքր» օբյեկտ, որից 142-ը՝ առետրի, 14-ը՝ հասարակական սննդի, 99-ը՝ կենցաղային սպասարկման, 279-ը՝ վարձակալված տարածքներ, 44-ը՝ կիսավեր: Սեփականաշնորհված 578 «փոքր» օբյեկտներից եւ վարձակալված տարածքներից 168-ը սեփականաշնորհվել են աշխատավորական կոլեկտիվներին՝ անդամներին, 146-ը՝ աճուրդով, 264-ը՝ վարձակալներին, 2-ը՝ ուղղակի վաճառքի ձեւով, 4-ը՝ անհատույց տրամադրման ձեւով: Ըստ 1995-1996թթ. եւ 1998-2000թթ. ծրագրերում ընդգրկված «փոքր» օբյեկտների ծրագրային մասնավորեցման ցուցանիշների եւ դրանց կատարողականի վերլուծությանը ամենաբարձր կատարողականը արձանագրվեց վարձակալված տարածքների (99,3 %), կենցաղսպասարկման (87,6%) եւ առետրի օբյեկտների (83,0 %) գծով: 2000թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 56 «փոքր» օբյեկտներ ներկայացված են աճուրդային վաճառքի, իսկ 34-ը գտնվում է մասնավորեցման ընթացքում: Նույն ժամանակաշրջանում «փոքր» օբյեկտների մասնավորեցումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 266,2 մլն դրամ, այդ թվում՝ 1995թ.՝ 8,3 մլն դրամ, 1996թ.՝ 49,7 մլն դրամ, 1997թ.՝ 54,3 մլն դրամ, 1998թ.՝ 53,1 մլն դրամ, 1999թ.՝ 49,6 մլն դրամ, 2000թ.՝ 51,2 մլն դրամ: Ուղղակի անհատույց տրամադրման ձեւով մասնավորեցվել է 4 «փոքր» օբյեկտ, որից մեկը հանդիսանում է համայնքի սեփականություն: Նշված օբյեկտները մասնավորեցվել են ԼՂՀ օրենսդրությանը համապատասխան հաշվի առնելով գնորդների կողմից կատարվելիք ներդրումների ծավալները եւ ստեղծվող աշխատատեղերի քանակը, ըստ որի եւ նախատեսված ներդրումների ծավալի ու աշխատատեղերի քանակի գծով ցուցանիշները կատարվել են բացառությամբ Շուշիի «կիսավեր շենքերի», որը դեռեւս ընթացքի մեջ է:

**1995-1996 եւ 1998-2000 թթ. ծրագրերում ընդգրկված
«փոքր» օբյեկտների ծրագրային մասնավորեցման
ցուցանիշները եւ դրանց կատարողականը**

«Փոքր» օբյեկտները ըստ ձյուղերի	Ծրագրով սահմանված օբյեկտների քանակը	Ենթակա են համան ծրագրից	Ծրագրում մնացող օբյեկտներ ի քանակը	ճանաչված մասնավորեցված օբյեկտների քանակը	Կատարողականը (տոկոսներով)
Առետուր	206	35	171	142	83.0
Հասարակական սնունդ	19	-	19	14	73.7
Կենցաղսպասարկո ւմ	128	15	113	99	87.6
Վարձակալված տարածք	281	-	281	279	99.3
Կիսավեր	87	3	84	44	52.4
ԸՆԴԱՄԵՆԸ	721	53	668	578	86.5

Ծրագրերից հանվել են մի շարք «փոքր» անավարտ շինարարության եւ կիսավեր օբյեկտներ՝ դրանց կարգավիճակը փոխվելու եւ հետեւյալ պատճառներով.

- չեն հանդիսանում պետական սեփականություն,
- ԼՂՀ կառավարության որոշումներով հանձնվել են բյուջետային հիմնարկներ կամ համայնքներին՝ նպատակային օգտագործման համար,
- տարրեր պատճառներով քանդվել են եւ ներկայումս գոյություն չունեն,
- անավարտ շինարարության օբյեկտները կառուցվել են հանձնվել եւ չահագործման:

Ըստ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման ծրագրում ընդգրկված 27 անավարտ շինարարության օբյեկտներից հաշվետու ժամանակաշրջանում հանձն ենթակա է 12-ը, մնացած 15 օբյեկտներից 6-ը մասնավորեցվել է, իսկ 9 օբյեկտ գտնվում է մասնավորեցման ընթացքում: Մասնավորեցված օբյեկտներից պետական բյուջե է մտցվել 7,8 մլն դրամ:

Այսպիսով, իրականացված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել,

- ձեւավորված են «փոքր» օբյեկտների եւ ընկերությունների մասնավորեցման իրականացման համար անհրաժեշտ իրավական մեթոդական եւ կազմակերպատական դաշտերը,

- մասնավորեցման տեմպերը թույլ են տալիս կանխատեսել, որ «փոքր» օբյեկտների սեփականաշնորհումը կավարտվի 2001թ. ընթացքում,

- անավարտ շինարարության օբյեկտների եւ ընկերությունների մասնավորեցումը դանդաղում է բնակչության ցածր գնողունակության, պահանջարկի սակավության, ընկերությունների խոշոր պարտքերի առկայության, հիմնական միջոցների մաշվածության օբյեկտների գործարկման համար խոշոր ներդրումների անհրաժեշտության պատճառով:

Այսօր ԼՂՀ տնտեսությունը կարելի է բնութագրել որպես բազմակցությամբ տնտեսություն, որտեղ առկա են սեփականության գրեթե բոլոր՝ անհատական, մասնավոր, խմբայինից մինչեւ խառն եւ բաժնետիրական ձևերը: Ըստ որում, տնտեսության յուրաքանչյուր ճյուղում գերիշխում են այդ ճյուղին բնորոշ ձևերը (գյուղատնտեսության մեջ՝ խմբային, կոլեկտիվ, արդյունաբերության մեջ՝ բաժնետիրական, խառն եւ այլն): Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ ԼՂՀ-ում սեփականաշնորհման գործընթացը ընթանում է տարբերայնորեն, որոշ փուլերում՝ անհրաժեշտ հսկողությունից զուրկ: Ավելին, մինչեւ այսօր գոյություն չունի սեփականաշնորհման գործընթացի լավ կամ վատ մշակված ռազմավարական, ամփոփ ծրագիր, որեւէ կերպ չի նախանշված սեփականաշնորհված կամ դրան ենթակա այս կամ այն միջին կամ խոշոր ներդրողության դերը ազգային տնտեսության զարգացման գործում: Արդյունքում անհաս են մնում ի սկզբանե հռչակված այն գաղափարները, համաձայն որոնց սեփականաշնորհման գործընթացը պետք է նպաստի տնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, թողարկվող ապրանքների որակի բարելավման եւ քանակի ավելացման գործում սեփականատիրոջ անմիջական շահագրգռվածության մեծացմանը, սոցիալական արդարության հաստատմանը, բանիմաց մասնագետներով արտադրության գործընթացի լավագույն կազմակերպմանը, տեղական արտադրության եւ արտահանման կարողության խթանմանը:

Սեփականաշնորհման գործընթացը, մասնավոր եւ կորպորատիվ սեփականության կայացման համար անհրաժեշտ օրենքների ընդունումը, ի վերջո, գործնականորեն չապահովեց սեփականության իրավունքի կիրառումն ապահովող համարժեք պայմանների ձեւավորումը, այն է՝ սեփականության իրավունքի հաշվառումը, պահպանումը, օտարումը եւ փոխանցումը: Սեփականության իրավունքը չստացավ շուկայական իմստիտուտների միջոցով արագ փոխանցվող արժեթղթավորված ձև, ըստ որի՝ անշարժ գույքի, այդ թվում՝ հողի սեփականության իրավունքը պետք է ձեւակերպվի սեփականությունը հավաստող իր բնութքով փոխանցելի, հավաստագրի կամ արժեթղթի տեսքով, որի կառուցմամբ կոնկրետ անձի սեփականության իրավունքը օրինական ուժ է ստանալու: Կարատեսի մարմիններում անշարժ գույքի (հողի) սեփականության վերաբերյալ համապատասխան գրանցում կատարելու պահից:

Ըստ էության, նոտարական վավերացմամբ կնքված գործադրի հիման վրա

կադաստրի մարմինը հավաստագրի վրա պետք է հնարավորին կարճ ժամկետում գրանցի սեփականատիրոջ անվանափոխությունը: Նշված մեխանիզմի կիրառումը պահանջում է ամբողջ անշարժ գույքի համապատասխան անձնագրավորում, ինչպես նաև կադաստրի մարմինների անհրաժեշտ գործելակարգերի մշակում, հողի սեփականության անհրաժեշտ բաղադրամասը կազմող գյուղատնտեսական եւ գյուղատնտեսական հողատարածքների կադաստրային գնահատման իրականացում:

Ծագող մյուս հիմնահարցը այն է, որ որել է լծակով չի խթանվում կամ ժամանակային առումով չի հստակեցվում ապապետականացված ձեռնարկության գործարկումը, անգամ պարտադիր պայման չի դրվում որոշակի ժամկետներում ապապետականացված ձեռնարկության բաժնետոմսերի թողարկման ու վաճառքի համար: Այլ կերպ, ներկայումս ստեղծված են սեփականաշնորհման օրենսդրական, տեսական հիմքերը, բայց չկա արդյունավետ ու նպատակային գործող մեխանիզմ, չի ձեւավորվել տնտեսական եւ մասնավորապես սեփականաշնորհման գործընթացի զարկերակը կազմող արժեթղթերի շուկան:

Այս պարագայում, բնական է, որ վերագործարկման ժամկետների եւ անհրաժեշտ հսկողության սահմանման բացակայության պայմաններում իրենց արժեքից ցածր գնահատված արտադրական կարողությունների մոր տերերին ավելի ձեռնտու է մտաւորով եւ ոչ այնքան ոչնչով չպարտադրված վերագործարկման ու արդյունքի ստեղծման, որքան ձեռնարկության եւ նրա առանձին մասերի ավելի ձեռնտու պայմաններով վերավաճառքի մասին: Սա առավել մեծ հնարավորություններ է ընձեռում հատկապես խորհրդանշական զներով, «ներքին կարգով» ոչ մրցութային սեփականաշնորհման ժամանակ, երբ ձեռնարկության մասնագիտացման պահպանումը ընդհանրապես անհրաժեշտ պայման չի հանդիսանում, իսկ բաժնետոմսերը կենտրոնացված են մեկ անձի կամ առավել շահագրգիռ խմբի ձեռքին: Որոշակի մեկուսացում ստեղծվեց նյութական բարքների արտադրության մեջ կենսականորեն շահագրգռված սոցիալական շերտերի, պետության կողմից մշակվող եւ իրականացվող տնտեսական քաղաքականության եւ դրա իրականացման անհրաժեշտ պայմաններից ապապետականացված արտադրական կարողությունների միջեւ: Մի շարք թերություններ կարելի է մշել նաև ներկայումս գործող սեփականաշնորհման ենթակա օբյեկտների գնահատման մեխանիզմում ու մեթոդներում: Չնայած օրենքով նախատեսված պատժամիջոցներին՝ սեփականաշնորհման գործընթացի ողջ ընթացքում սեփականաշնորհման գործարքների անվավեր ծանաչման ոչ մի դեպք չի գրանցվել, ինչը կասկածի տեղիք է տալիս: Բազմաթիվ թերություններ են գրանցվել նաև հողի սեփականաշնորհման գործընթացում:

Սեփականաշնորհման գործընթացում ԼՂՀ-ում տեղ գտած թերությունները շտկելու եւ այդ պրոցեսի հետագա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք.

- մեծացնել պետության կարգավորիչ, վերահսկիչ դերը՝ մշակելով ազգային տնտեսության առաջնաթերություններից բխող սեփականաշնորհման ծրագիր,
- սեփականաշնորհվող օբյեկտի նախնական գնահատումն իրականացնել անկախ փորձագետների օգնությամբ,
- ապահովել գործարքների առավել թափանցիկություն, ինչպես նաև դրանց մասին բավարար տեղեկատվություն,
- լակյան աջակցություն ցուցաբերել արժեթղթերի շուկայի ձեւավորմանը,
- պահպանել ձեռնարկությունների մասնագիտացումը՝ այն ամրագրելով պայմանագրում,
- ապահովել աշխատողների առավել մասնակցությունը գործերի կառավարմանը,
- սեփականաշնորհումից ստացվող միջոցներով ձեւավորել պետական ներդրումային ֆոնդ՝ ռազմավարական նշանակության այս կամ այն ծյուղի արտոնյալ զարգացման, նպատակային արտադրական ծրագրերի իրականացման, մոր տեխնոլոգիաների ձեռքբերման նպատակով.

- արտոնություններ սահմանել աշխատող ձեռնարկությունների համար մասնավորապես, կիրառելով արտադրության հիմնական միջոցներից եւ անշարժ գույքից զանձվող հարկերի գոյական դրույքաչափ գործունեության առաջին, որոշ դեպքերում էլ՝ առաջին երեք տարում,

- սահմանել ժամանակային պրոգրեսիվ սանդղակով զանձվող գույքահարկ չաշխատող ձեռնարկությունների արտադրության հիմնական միջոցներից եւ անշարժ գույքից:

ԼՂՀ-ում մասնավորեցման գործընթացի հետագա ընթացքում առաջնություն պետք է տրվեն ներքին եւ արտաքին մասնավոր ներդրումների ներգրավմանը, նոր աշխատատեղերի բացման հեռանկարով սեփականաշնորհման հայտերին: Միաժամանակ, հաշվի առնելով բնակչության ցածր գնողունակությունը՝ նախատեսվում է կիրառել մասնավորեցման այն ձեւերը, որոնք կապահովեն ներդրումների խթանումը, նպաստավոր պայմաններ կստեղծեն ձեռնարկությունների ֆինանսական առողջացման համար:

Миясия М.М.

**Особенности приватизации в системе
экономических реформ в НКР**

Резюме

Автор в статье изложил процесс приватизации и ее особенности в Арцахе. Анализировались недостатки объективного и субъективного характеров процесса приватизации, предлагались пути повышения эффективности дальнейших реформ в данной сфере.

Summary

In his article the author has shown the process of privatization and its peculiarities in Artsakh. She analysed the shortcomings of objective and subjective characters of the process of privatization, she also has suggested the ways of increasing the efficiency of further reforms in the given sphere.

Աղաբեկյան Ռ.Զ.

ՌԻՍՈՒԳԶԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՐԱՆՁՆԱԶԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հասարակական զարգացման արդի փուլում սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքի վերակառուցման կենտրոնական դեմքը ուսուցիչ դաստիարակն է, մանկավարժը: Ուստի պատահական չէ, որ այժմ շեշտվում է հասարակական կյանքի բոլոր օղակների մանկավարժայնացման գաղափարը: Այդ երևույթը նոր առավել լուրջ պահանջներ է առաջադրում ժամանակակից մանկավարժին, կյանքի կոչում նոր տիպի ուսուցիչ դաստիարակ պատրաստելու անհրաժեշտությունը, որն օժտված լինի ոչ միայն նոր մանկավարժական մտածողությամբ, բարձր ընդհանուր կուլտուրայով, լայն էրուդիցիայով, մանկավարժական վարպետությամբ, բարձր պրոֆեսիոնալիզմով, քաղաքացիական ակտիվությամբ, այլև ազգային գիտակցությամբ, մտածելակերպով և վարքագծով: Նման ուսուցչի պատրաստումը բարդ, դժվարին, տարողունակ և տևական գործընթաց է: Այն պահանջում է անընդմեջ մանկավարժական կրթության գեղակերտ համակարգ, որի կենտրոնական օղակը բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Գաղտնիք չէ, որ կրթական համակարգը, այդ թվում նաև բարձրագույն կրթությունը ապրում է խոր ճգնաժամ:

Մանկավարժական կրթության բնագավառն ընդհանրապես և ուսուցիչ դաստիարակների պատրաստման և վերապատրաստման բովանդակությունը, կազմակերպման ձևերն ու մեթոդները մասնավորապես կրում են այն մեթոդները, հակասությունների ողջ բեռը, որը կուտակվել է կրթադաստիարակչական համակարգում տասնյակ տարիների ընթացքում:

Մանկավարժական կադրեր պատրաստող բուհերը (համալսարանները, ինստիտուտները) չեն ապահովում բարձրակիթ, հոգեպես հարուստ, պրոֆեսիոնալ բարձր կուլտուրայի տեր ազգահոգեբանությամբ օժտված, մանկավարժի բարդ բայց պատվաբեր առաքելությանը պատրաստ, համակողմանիորեն ու ներդաշնակորեն զարգացած ուսուցիչ դաստիարակի անձի ձևավորումը: Մանկավարժական բուհերը չեն կատարում իրենց առաջանցիկ դերը:

Մանկավարժական կադրերի ստաժավորման (փորձառության), որակավորման բարձրացման գործող համակարգը չի ստեղծում անհրաժեշտ պայմաններ ուսուցչի ստեղծագործական լինելիության, նրա մասնագիտական ինքնագարգացման համար:

Առաջացել է խոր, սկզբունքային հակասություն ուսուցիչների պատրաստման տիպային համակարգի և մանկավարժի գործունեության անհատական-ստեղծագործական բնույթի մեջ: Մեր երկրում (մաիկին ԽՍՀՄ-ում) տարիների ընթացքում կրթության «զերտաեչալան» համակարգը, որտեղ ուսանողը համղես է գալիս իբրև վիչակագրական միավոր կտրված իր ինքնատիպ, անկրկնելի անհատականությունից, իբրև մանկավարժական ներգործությունների օբյեկտ: Այլ կերպ ասած մանկավարժ մասնագետի ձևավորման գործընթացի հիմքում դրվել է ոչ թե ապագա մասնագետի անձը, այլ սոսկ նրա ուսումնական գործունեությունը, ուսանողը դիտվել է որպես մանկավարժական վերարտադրության զանգվածային գործընթացի անդեմ օբյեկտ: Չի բացահայտվել և չի ձևավորվել նրա ստեղծագործական մանկավարժական անհատականությունը:

Այնչափ է կրթադաստիարակչական համակարգի բոլոր օղակների կառավարման համակարգի և կրթատարելությունը: Շիշտ է, հռչակվել է կրթական համակարգի կառավարման ապակենտրոնացման իրավունքը, սակայն դեռևս իրականություն չի

դարձել, քանի դեռ մենք չենք ստեղծել անընդմեջ կրթադաստիրակչական ամբողջական, հոգեբանորեն և մանկավարժորեն հիմնավորված համակարգ, որ հնարավոր լինի այսօր հաջողությամբ կիրառել համարապետության տարածքում: Այդ ուղղությամբ կատարված փորձերը հեռու են բավարար լինելուց, ցանկալի արդյունք տալուց:

Ուսուցչության զգալի մասը, չհաշված առանձին էստուգիաստ ուսուցիչների, անհատ նորարարների, ստեղծագործաբար աշխատող տնօրենների պատրաստ չէ կրթադաստիրակչական համակարգի արմատական վերակառուցմանը, ազգային դպրոցի ստեղծմանը, հայեցի դաստիարակության իրագործմանը ո՛չ հոգեբանորեն, ո՛չ գործնականորեն, ո՛չ էլ արժեքային կողմնորոշումների առումով:

Ժամանակակից մանկավարժական կրթությանը բնորոշ են նրա շատ բաղադրամասերի, ապագա ուսուցչի դաստիարակի տեսական և գործնական պատրաստության, հասարակական-քաղաքական, հոգեբանա-մանկավարժական, առարկայական-մասնագիտական, ընդհանուր կրթական համակարգի միջև գիտականորեն հիմնավորված կապերի բացակայությունը, որը հանգեցնում է բուհական ուսուցման մի շարք կարևոր միջգիտական կապերի ստեղծման խախտմանը:

Մենք նշեցինք մանկավարժական կրթության բնագավառի որոշ ընդհանուր թերություններ միայն: Ինքնին հասկանալի է, որ դրանք ավելի շատ ու բազմաբնույթ են: Դրանք առանձնապես արտահայտվում են համալսարանական կրթությամբ մանկավարժների պատրաստման գործընթացում:

Չետագոտության ընթացքում մենք կատարել ենք համեմատական վերլուծական աշխատանք մանկավարժական ինստիտուտների և համալսարանների շրջանավարտների մանկավարժական աշխատանքում եղած տարբերությունների բացահայտման և դրանց յուրահատուկ թերությունների բնութագրման առումով: Այդ առումով մեր կուտակած նյութերը հիմք են հանդիսանում որոշակի եզրահանգումների համար: Պարզվում է, որ համալսարանական կրթությամբ ուսուցիչների զգալի մասը դրսևորում է առարկայական-մասնագիտական բարձր մակարդակ ընտրած մասնագիտության գծով և գիտահետազոտական աշխատանքին մեթոդներ կիրառած ընդունակություն, սակայն չի ստանում բավարար մեթոդական, հոգեբանա-մանկավարժական պատրաստություն: Համալսարանի շրջանավարտները դժվարանում են դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, դասերին նախապատրաստվելու և դրանք վարելու, արտաուսումնական միջոցառումների կազմակերպման մեջ, չեն կարողանում աշխատել ծնողների հետ:

Իրեն զգացնել է տալիս ուսանողների գործնական պատրաստվածության պակասությունը, մանկավարժական զանազան իրավիճակներում ժամանակին և ճիշտ կողմնորոշվելու անկարողությունը, տարբեր տարիքի երեխաների հետ միջանձնային հարաբերություններ հաստատելու ձևերին չտիրապետելը, դասի գործընթացում մանկավարժական օպտիմալ հաղորդակցման միջոցներ կիրառելու անկարողությունը:

Ուսանողների համամանկավարժական պատրաստումը համալսարանում մենք դիտում ենք որպես ապագա ուսուցիչ դաստիարակի անձի լինելիության գործընթաց հատուկ կազմակերպված, ընդհանուր, առարկայական-մասնագիտական և հոգեբանա-մանկավարժական կրթության ազդեցությամբ իրականացվող բարդ համակարգ: Այն պահանջում է ամբողջական, համակարգային և համալիր մոտեցումների զուգակցված կիրառում բարձրագույն կրթության պայմաններում:

Քանի որ մանկավարժներ հիմնականում պատրաստում են մանկավարժական ինստիտուտները, ապա առաջանում է ուսուցչի համալսարանական մանկավարժական կրթության հասկացությունը տարբերակման անհրաժեշտությունը: Այդ տարբերությունը շեշտված է «Մանկավարժական հանրագիտարանում», «Տարբերությունը համալսարանական կրթության և մանկավարժական կրթության միջև այն է, որ համալսարանների ուսանողներն ստանում են մեծ ծավալի գիտական պատրաստություն, իսկ մանկավարժական ինստիտուտների ուսանողները մանկավարժական»: Իհարկե կա որոշակի տարբերություն ուսուցչի համալսարանական և մանկավարժական

ինստիտուտում ստացած կրթության միջև: Սակայն ժամանակակից ուսուցիչ դաստիարակը կարիք է զգում ինչպես խորը գիտատեսական, այնպես էլ համակողմանի մանկավարժական պատրաստության: Այսօրվա ազգային դպրոցը սպասում է մտածող ուսուցչի, հետազոտող մանկավարժի, որը տիրապետում է գիտական որոնման ժամանակակից մեթոդներին ակտիվ ուսուցման և դաստիարակության նորագույն հնարքներին, ծնողների վրա ներգործելու, նրանց հետ համագործակցելու մեթոդներին: Բնական է, որ մանկավարժական կադրերի պատրաստման ուժեղացումը համալսարանում չպետք է իրագործվի ի վնաս ֆունդամենտալ (հիմնարար) կրթությանը:

Այն իրողությունը, որ համալսարանական կրթությամբ ֆունդամենտալությունը անհրաժեշտ է պահպանել, նույնքան ակնհայտ է, որքան էլ այն պահանջումները, որ հարկ է կատարելագործել համամանկավարժական և հոգեբանական պատրաստման համակարգը, քանի որ հենց համալսարանի շրջանավարտներն են բուհերի մասնագիտական ամբիոնների կադրերը համալրող հուսալի ռեզերվը:

Բարձրագույն մանկավարժական կրթությունը ունի լուրջ թերություններ, ինչպես նկատեցինք վերևում, թե մանկավարժական ինստիտուտներում և թե համալսարաններում: Մանկավարժական կրթությունը կարիք է զգում արմատական փոփոխման բարեփոխման և կատարելագործման: Այդ հիմնախնդիրը բարձրացվում է լայն հասարակայնության, ծնողների և առանձնապես ինստիտուտների ու համալսարանների շրջանավարտների կողմից:

Արցախի նախկին մանկավարժական ինստիտուտի և այսօրվա համալսարանի շրջանավարտներին առաջարկվել է պատասխանել հետևյալ հարցին. ինչպիսի դժվարությունների է հանդիպել երիտասարդ մասնագետը դպրոցում աշխատելու առաջին տարիներին և ինչպիսի քայլեր է առաջարկում ձեռնարկել բուհում, որպեսզի հետագայի շրջանավարտները ձեռքագտավեն այդպիսի դժվարություններից: Բոլոր պատասխանները բաժանվեցին երկու խմբի՝ մանկավարժական ինստիտուտի շրջանավարտների և համալսարանավարտների: Առավել հանգամանակից և հիմնավոր էին համալսարանավարտների «ճանապարհը»: Համալսարանի նախկին ուսանողները, գրեթե առանց բացառության, իրենց գոհունակությունն են արտահայտում ստացած ֆունդամենտալ (հիմնարար) կրթության համար մասնագիտական առարկայից և նշում են իրենց հոգեբանա-մանկավարժական անբավարար պատրաստվածությունը: Դա առանձնապես վերաբերվում է հոգեբանական գիտելիքներին: Իսկ մանկավարժական ինստիտուտի շրջանավարտները առաջարկում են ուժեղացնել առարկայական-մասնագիտական պատրաստումը և հոգեբանա-մանկավարժական պատրաստման գործնական ուղղվածությունը:

Պարզվեց, որ ընդհանուր ցանկությունը վերաբերվում է մանկավարժական փորձուսուցմանը (պրակտիկային) մեծացնել փորձուսուցման (պրակտիկայի) ժամկետները և բարելավել նրա ղեկավարումը: Համալսարանական կրթությամբ ուսուցիչ դաստիարակները այդ կապակցությամբ արտահայտվեցին բավականին կատեգորիկ և պահանջեցին.

- մտցնել «մանկավարժների» տարանջատ ընդունելություն
- մանկավարժական փորձուսուցումը (պրակտիկան) վարել առաջին կուրսից ընդհուպ ավարտական կուրսը,
- կորուսլ ավելացնել հոգեբանության, մանկավարժության տեսության առարկաների դասավանդման մեթոդիկայի, գործնական պարապմունքների ծավալը,
- մանկավարժության դասավանդումը, դեմքով շրջել դեպի փորձուսուցումը:

Նեգ գրած շրջանավարտների մի մասը խորհուրդ է տալիս ուսումնական պլաններում մտցնել տարիքային ֆիզիոլոգիա և հիգիենա, մանկավարժության պատմության, դաստիարակչական աշխատանքի մեթոդիկա, մանկավարժական հատուկ դասընթացներ:

Հարկ է հատուկ նշել, որ գրեթե բոլոր հարցվածները ընդգծել են ապագա ուսուցչի պրակտիկ մանկավարժական պատրաստման կատարելագործման անհրաժեշտությունը շարունակական մանկավարժական փորձուսուցում մտցնելու միջոցով:

Այժմ դիմենք այն ուսանողների կարծիքների, որոնք դեռևս սովորում են համալսարանում, բայց անցել են մանկավարժական փորձուսուցման բոլոր հնարավոր տեսակները հին պլանների համաժայն: Անկետավորման ընտրվել են 300 ուսանող (հումանիտար և բնագիտական ֆակուլտետների): Նրանց առաջադրվել է 7 հարց, որոնցից վերջին հարցը պահանջվել է ազատ կերպով շարադրել իրենց կարծիքները և առաջարկները մանկավարժական փորձուսուցման կատարելագործման, նրա անցկացման ժամկետների վերաբերյալ: Տիպական կարելի է համարել հետևյալ բովանդակությամբ պատասխանները. «ցանկալի է, որ փորձուսուցումը տևի ոչ թե մեկ, երկու ամիս, այլ ավելի», «Գտնում եմ, որ մեր փորձուսուցումը դպրոցում շատ կարճատև է: Շատ քիչ ժամանակ է լինում դասարանի յուրաքանչյուր աշակերտին ծանոթանալու համար», «հիմ թվում է, որ դիպլոմային աշխատանքները պետք է լինեն մեթոդական (մանկավարժական), իսկ դրա համար լավ կլիներ, եթե 4-րդ, 5-րդ ավարտական կուրսերում մանկավարժական փորձուսուցումը շարունակվեր 2-3 ամիս: Դա կօգներ դիպլոմային աշխատանքը գիտականորեն գրելուն»:

Ոչ մի ուսանող չմոռացավ ընդգծել մանկավարժական փորձուսուցման կարևորությունը, նրա տևողությունը մեծացնելու և ավելի շատ ինքնուրույն տալու անհրաժեշտությունը: Հարցվածների 80-90 տոկոսը առաջարկում է մտցնել շարունակական փորձուսուցում 1-ին կուրսից մինչև 5-րդ կուրսը (ընդհուպ). «Կարծում եմ, գրում է չորրորդ կուրսեցին, որ մանկավարժական փորձուսուցման ընթացքում լավ է ոչ միայն առանձին դասեր տալը, այլև զուգահեռաբար տեսական նյութեր ուսումնասիրելը»:

Հետաքրքիր պատասխաններ տվեցին ԼՂ հանրապետության դպրոցների տնօրենները որակավորման և ատեստավորման ինստիտուտում անցկացվող սեմինար խորհրդակցության ժամանակ: Մանկավարժական ինստիտուտների շրջանավարտները, իրենց դասավանդած առարկայի փաստական գիտելիքները, ինչպես նաև մանկավարժական պատրաստվածությունը գնահատեցին «միջակ»: Երևանի պետական համալսարանի շրջանավարտներին, նրանց կարծիքով բնորոշ է տեսական բարձր պատրաստվածությունը, առարկայի իմացությունը, բայց անբավարար հոգեբանամանկավարժական գիմվածություն: Դա առանձնապես զգալի է սկզբնական շրջանում: Նրանք ովքեր դիմանում են այդ դժվարությանը 2-3 տարի, ապագա հետազայում նրանք հասնում են մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ իր գործընկերներին:

Այսպիսով, համալսարանի նախորդ շրջանավարտների, դիպլոմնիկ-ուսանողների, դպրոցների տնօրենների կարծիքները համընկնում են մի բանով. Հափազանց կարևոր է համալսարանում բարձրացնել հոգեբանա-մանկավարժական և մեթոդական պատրաստման մակարդակը: Մանկավարժական փորձուսուցման ընդարձակման, այն առաջին կուրսից ընդհուպ հինգերորդ կուրս մտցնելու մեջ են նրանք տեսնում ուսուցչի պրոֆեսիոնալ պատրաստման կատարելագործման հիմնական ուղին: Դրա հետ մեկտեղ, տեսական պատրաստություն, առաջավոր մանկավարժական փորձի տիրապետման, նորագույն հոգեբանա-մանկավարժական գաղափարների յուրացման անհրաժեշտություն է, ընդգծել են համալսարանների շրջանավարտները: Մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ գործընկերները չեն անդադարձել այդ հիմնահարցին:

Այդ պայմաններում լիարժեք ազգային դպրոցի տեղեղծման բարեհաջող իրացումը հնարավոր է միայն ապագա ուսուցչի հոգեբանա-մանկավարժական պատրաստման արմատական բարելավման և դաստիարակության որակի գիտա-մանկավարժական և պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման միջոցով մանկավարժական կրթության բոլոր օղակներում:

Այս բոլորից հետո հարց է ծագում արդյո՞ք կա անհրաժեշտություն համալսարանի ուսանողների մանկավարժական պատրաստման առանձնահատկությունների հատուկ հետազոտություն, թե՞ ոչ: Միթե միևնույնը չեն մանկավարժական ինստիտուտների և

համալսարանների ուսանողների համամակնվարժական և մասնագիտական պատրաստման հիմնահարցերը: Միթե՞ ուսանողների ուսուցման և դաստիարակության միևնույն մեթոդները կիրառելի չեն, թե մանկավարժական ինստիտուտներում և թե համալսարաններում:

Մանկավարժական ինստիտուտների և համալսարանների բոլոր ամբիոնների վերջնական նպատակն նույնն է: Պատրաստել բարձրորակ ուսուցիչ դաստիարակ: Նպատակի միասնությունն ակնհայտ է: Սակայն բարձրագույն մանկավարժական կրթության այդ երկու տեսակներում պատմականորեն ձևավորվել են աշխատանքի տարբեր համակարգեր, ուստի վաղուց հասունացել է համալսարաններում ուսուցչի համամակնվարժական, պրոֆեսիոնալ-մանկավարժական պատրաստման յուրահատկության սահմանման և հիմնավորման պահանջը: Սեր աշխատանքի տարիների անձնական փորձը, ինչպես և հատուկ հետազոտությունների արդյունքները խոսում են այն տարբերությունների առկայության մասին, որ կա մանկավարժի պատրաստման գործում համալսարանում և մանկավարժական ինստիտուտում: Ուստի այսօրվա պահանջների իրացումը համալսարանում պետք է ընթանա յուրահատուկ ձևով:

Համալսարանի շրջանավարտների պատրաստման հաջողության կարևորագույն պայմանը ողջ ուսումնա-դաստիարակչական, հասարակական-քաղաքական, ուսումնա-հետազոտական գործունեության հետևողական ընդհանուր մանկավարժական ուղղվածության ապահովումն է, մանկավարժի պրոֆեսիայի շուրջ դրական միկրոլիմայի ստեղծումը: Նման մոտեցումն առավել ընդունելի է, երբ դպրոցում աշխատելու հոգեբանական կողմնորոշումն սկսվում է ուսանողի առաջին քայլերից: Այն կարող է և պետք է դրսևորվի ընդհանուր և հատուկ դասընթացներում, հատկապես գործնական և լաբորատոր պարապմունքներում: Արտադրական փորձուսուցման նախապատրաստման և անցկացման ընթացքում, օրինակ, կենսաբանների, բանասերների, աշխարհագրագետների, պետք է հաշվի առնվեն նրանց ապագա պրոֆեսիայի առանձնահատկությունները:

Ամիրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել տեսական, հոգեբանա-մանկավարժական և մեթոդական պատրաստության վրա: Ոչնչով չի արդարացվում այն հանգամանքը, որ ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի ուսանողները զրկված են ֆիզիոլոգիա, դպրոցական հիգիենա, մանկավարժության պատմության, տարիքային և մանկավարժական հոգեբանություն դասընթացներն ուսումնասիրելու հնարավորությունից: Մանկավարժության գծով անընդմեջ ուսումնական փորձուսուցման բացակայությունը մեծապես դժվարեցնում է ողջ դասընթացի լիարժեք ուսումնասիրությունը: Չէ որ այդպիսի բարդ մանկավարժական հասկացությունների խթան յուրացումը, ինչպիսին են ուսուցման գործընթացի խթանը, ուսուցման զարգացնող բնույթը, դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցումը և այլն հնարավոր չէ առանց դրանց կոնկրետ «բովանդակության» դիտման և ուսումնասիրման բուն դպրոցական կյանքում: Դա չի նշանակում, թե ստեղծված իրավիճակում բոլոր ջանքերը պետք է ուղղել սոսկ համալսարանի գործունեության մանկավարժայնացման խորացմանը: Անընդմեջ մանկավարժական փորձուսուցում մտցնելու դեպքում, երբ նրա տարբեր տեսակները մտցվում են ուսումնական պլանները, դասացուցակ և հատկացվում է հատուկ օր, կամ 4-6 ժամ (շաբաթվա ընթացքում), նրա կազմակերպումը և ղեկավարումը առաջին կուրսից սկսած, ամշուշտ, կլուծի ուսումնական փորձուսուցման հիմնահարցը: Այդ կդառնա ուսումնա-ծանոթացման տարրը 1-2 կուրսերում:

Զգալիորեն նորացվող հասարակագիտական դասընթացները և ուսումնասիրությունը պետք է ծառայի ազգային նոր դպրոցի ստեղծման, հասունացվող սերնդի հայեցի դաստիարակության գործում ուսուցչի ունեցած դերի նկատմամբ դրական վերաբերմունքի պատվաստմանը, ինչպես նաև նրանց գինի կոնկրետ գիտելիքներով, որոնց հիման վրա մշակվեն համապատասխան կարողություններ, հմտություններ, ձևավորվեն արժեքային կողմնորոշումներ, գիտական աշխարհայացք և ապագա մանկավարժի անձի սուբյեկտային դիրքորոշումը:

Միևնույն ժամանակ ըստ մեր հատուկ հետազոտությունների տվյալների համալսարանականների հարցմանը մասնակցած դասախոսների 70 տոկոսը չի պատասխանել այն հարցին, թե ինչպես են նրանք ծնավորում ուսանողների պրոֆեսիոնալ-մանկավարժական ուղղվածությունը: Դեռևս չի հաղթահարվել համալսարանի առաջատար գիտնականների մի մասի բացասական վերաբերմունքը «Ընդհանուր մանկավարժություն», «Մանկավարժության պատմություն», «Հոգեբանություն» դասընթացների ընդանրապես մանկավարժի պրոֆեսիայի նկատմամբ: Ընդհակառակը, մեթոդական համամանկավարժական պատրաստման շատ բացթողումներ, բերությունների հաղթահարմանը կարող են նպաստել մանկավարժությունից և հոգեբանությունից կարգացվող այնպիսի հատուկ դասընթացները, ինչպես «Դաստիարակչական աշխատանքի մեթոդիկա», «Գիտա-մանկավարժական հետազոտության մեթոդները», «Ուսումնա-դաստիարակչական գործընթացի կառավարումը», «Ուսուցման գործընթացի հոգեբանական հիմունքները», «Մանկավարժական վարպետություն և էթիկա» և այլն: Այն կնպաստի ապագա ուսուցչի մանկավարժական տեխնիկայի, տեխնոլոգիայի, մանկավարժական վարպետության հիմունքների ծնավորմանը:

Այսպիսով, մեր կարծիքով, համալսարանում ուսանողների պրոֆեսիոնալ-մանկավարժական դաստիարակության և զարգացման հիմնական ուղղիներն են.

- համալսարանական կրթության հոգեբանա-մանկավարժական ուղղվածության ուժեղացումը, շարունակական մանկավարժական փորձուսուցումը շարունակական դարձնելու և դրա վարումը ուսումնառության բոլոր տարիների (1-ին կուրսից ընդհուպ 5-րդ կուրս),
- մասնագետների տարանջատ պատրաստումը և ապագա ուսուցչի նպատակաուղղված պրոֆեսիոնալ-մանկավարժական դաստիարակությունը ուսման բոլոր տարիներին,
- նոր դասընթացներ (մանկավարժության պատմություն, տարիքային ֆիզիոլոգիա, դպրոցական հիգիենա) և հնարավորության սահմաններում, հատուկ դասընթացներ (մանկավարժական վարպետության հիմունքները, մանկավարժության էթիկա և այլ) մտցնելը,
- համալսարանների շրջանավարտների նշանակումը աշխատանքի (ավարտելուց հետո) հանրապետական միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում, հատուկ միջնակարգ դպրոցներում, վարժարաններում, քոլեջներում: Այս դրույթը պետք է օրինականացվի,
- համալսարանական պրոֆեսիոնալ-մանկավարժական կրթության հիմնահարցերի մանկավարժական հետազոտությունների ըստ ամենայնի զարգացում և այլն:

Ուստի պետք է հոգով, մտքով ու սրտով ըմբռնել գիտական հոգվածը, աշխատել խղճի մտքը, զոնել թե լավագույն միջոցներ և թե մեթոդական արդյունավետ հնարներ ու եղանակներ, երբեք չմոռանալով, որ նորացվող դպրոցին պետք են նոր կադրեր: Ուրեմն ապագա ուսուցչի պրոֆեսիոնալ պատրաստությունը, վերապատրաստումը և ատեստավորումը այնպես պիտի կազմակերպել, որ դպրոց մտնի որպես վարպետ-մանկավարժ:

Агабекян Р.Дж.

Особенности профессионально педагогической подготовки учителя в университете.

Резюме

Изучение основных вопросов подготовки будущих учителей в условиях университетского образования потребовало разработки особой методики, которая дала бы возможность раскрыть личность студента как субъекта.

В научной работе отмечается, что методика исследования представляет собой целый комплекс методов и методологий.

В ходе проведенного эксперимента были применены не только методы анализа отчетов, консультативных методов.

Применение этих методов дало нам возможность раскрыть не только состояние профессионально-педагогической подготовки будущего учителя, но и выявить типичные ошибки в этой области.

Всесторонний анализ результатов проведенной научной работы позволит нам определить основные направления воспитания и формирования личности студентов в условиях университета. Постепенно было создано целостное представление о реальных условиях подготовки будущих учителей в университете.

Agabekyan R.Dj.

*The peculiarities of the teachers professional-pedagogic
preparation at the university*

Summary

The article is devoted to one of the urgent problems of pedagogics. The author convinced that the development of theoretical thinking of students is possible only if teaching at universities is founded not on formal, but on dialectal logic.

Different approaches of the notion "practice", determination of the "students psychology", "special methods" are introduced in this article.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիտահետազոտական աշխատանքները ԱրդՊ-ում 2000-2001 թթ.	3
Չափագիտություն	
ԱՂԱՄՅԱՆ Կ. Ն., ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Վ. Ս. - Չափիչ սարքերի ինֆորմացիոն ունակությունը որպես որակի գնահատման կոմպլեքս ցուցանիշ	5
Մեխանիկա	
ԱՎԱՆԵՍՅԱՆ Վ. Գ. - Մածուցիկոպաստիկ ոչ նյութական էմուլսիոն խառնուրդների շարժման դիֆերենցիալ հավասարումների պրոտիվը և առաջարկումը	8
Ֆիզիկա	
ՄՈՎՍԻՍՅԱՆ Գ. Մ. - Կադմիումի սուլֆիդի և սելենիդի բյուրեղների կլանման և անդրադարձման դիֆերենցիալ սպեկտրների մեկնաբանության մասին	13
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Ա. Գ. - Կիսահաղորդչային շՔՇ լազերի գեներացիայի գերցածր շեմի մասին	21
Մաթեմատիկա	
ՍԱՀԱԿՅԱՆ Գ. Ջ. - Երկպարամետրով պարբերական հերմիտիաներով Դիրակի խնդրի մոնոդրոմիայի մատրիցիաները և մոլտիպլիկատորները	25
Քիմիա	
ԽԱՉԱՆՈՎ Զ. Վ., ՄԻՐՁՈՅԱՆ Վ. Ս., ՄԻՆԱՍՅԱՆ Գ. Ա. - Արդյունաբերական հանքավայրերի հնարավոր շահագործման գոտիներում հողերի էկոլոգիական վիճակի գնահատումը (Մեծմանայի հանքային շրջան, Գյուտիսային Արցախ)	31
Կենսաբանություն	
ԱՂԱՄՅԱՆ Ա. Բ. - ԼԳՅ դպրոցականների ֆիզիկական զարգացման և հեմոդինամիկական ցուցանիշները խաղաղ ժամանակաշրջանում, պատերազմի ժամանակ և դրանից հետո	41
ԱՂԱՄՅԱՆ Ս. Ա. - ԼԳՅ-ում դպրոցականների արյան հիմոդինամիկական ցուցանիշները խաղաղ ժամանակաշրջանում, պատերազմի ժամանակ և հրադադարի շրջանում	51
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վ. Տ. - ԼԳՅ միջատների (INSECTIVORA) էկոլոգիան և մակարդակները	58
Փիլիսոփայություն	
ՍԱՐԳՍՅԱՆ Ս. Ա. - Կյանքի իմաստի հարցի շուրջ	62
ԱՌՍԱՍՅԱՆ Ռ. Ա. - Ֆեդերատիվ Ռուսաստանի կառուցվածքի սահմանադրական հիմունքները	67
Գրականություն	
ԽԱՆՅԱՆ Ս. Ա. - Հայրենասիրության թեման պոլսահայ արդի պոեզիայում	80
ԽԱՆՅԱՆ Կ. Ա. - Ավ. Իսահակյանի պոեզիան ռուսերեն	88
ԱՌՍԱՍՅԱՆ Ս. Ա. - Է. Խիլզենռատի «Դեքիաթ վերջին մտքի մասին» անսովոր վեպը	94
Պատմություն	
ԲԱՆԱՅԱՆ Ռ. Ա. - Կանայք Արցախյան պատերազմի հերոսամարտում	101

ՔԱԼԱՅԱՆ Վ.Ռ. - Արցախը Վանի թագավորության շրջանում	106
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.Ա. - Մարտական գործողությունները 1992 թ. սեպտեմբերին	109
ՍԱՐՈՒՄՅԱՆ Ն.Պ. - Ժողովրդագրական տեղաշարժերը Լեռնային Ղարաբաղում արցախյան շարժման նախաշեմին	118
ՍԱՖԱՐՅԱՆ Վ.Ա. - Նորահայտ հնագիտական նյութեր Մեհտիշեն գյուղի Զարաբլուր վայրից	126
Տնտեսագիտություն	
ՄԻՆԱՍՅԱՆ Մ.Մ - Սեփականաշնորհման առանձնահատկությունները ԼՂՀ տնտեսական բարեփոխումների համակարգում	131
Մանկավարժություն	
ՍՂԱԲԵԿՅԱՆ Ռ.Ջ. - Ուսուցչի պրոֆեսիոնալ-մանկավարժական պատրաստման առանձնահատկությունները համալսարանում	137

СОДЕРЖАНИЕ

Научно-исследовательские работы в АрГУ 2000-2001 гг.	3
Метрология	
АДАМЯН К.Н., АЛЕКСАНИЯ В.С. - Информационная свойство средств измерения как мера комплексной оценки качества	5
Механика	
АВАНЕСЯН В.Г. - Рекомендация дифференциальных уравнений движения вязкопластичных неньютоновских эмульсионных смесей	8
Физика	
МОВСИСЯН Г.М. - Об интерпретации дифференциальных спектров отражения и поглощения кристаллов сульфида и селенида кадмия	13
АЛЕКСАНИЯ А.Г. - О сверхнизком пороге генерации полупроводникового к р с лазера	21
Математика	
СААКЯН Г.Г. - Матрица монодромии, свойства мультипликаторов для двухпараметрической задачи Дирака	25
Химия	
Х.В.ХАЧАНОВ, В.С.МИРЗОЯН, Г.А.МИНАСЯН - Оценка экологического состояния почв в зонах возможной разработки промышленных месторождений (<i>Мехманшинский рудный район, Северный Арцах</i>)	31
Биология	
АГАСЯН А.Б. - Основные показатели физического развития и гемодинамики у школьников НКР в мирное время, во время войны и перемирия	41
АГАСЯН С. А. - Гемодинамические показатели школьников НКР и их изменения во время арцахской войны и в период перемирия	51
АЙРАПЕТЯН В. Т. - Экология и паразиты насекомых (INSECTIVORA) НКР	58
Философия	
САРКИСЯН С.А. - К вопросу о смысле жизни	62
АРУСТАМЯН Р.С. - Конституционные основы федеративного устройства России	67
Литература	
ХАНИЯН С.А. - Тема патриотизма в современной Армянской поэзии Константинополя	80
ХАНИЯН К.С. - Поэзия А.Исаакяна на русском языке	88

АРУСТАМЯН М.С. - Необычный роман Э.Химляснрата - "Сказка о последней мысли" _____	94
История	
БАЛАЯН Р.А. - Женщины в героических битвах арцахской войны _____	101
БАЛАЯН В.Р. - Арпах в период Ванского царства _____	106
АРУТЮНЯН М.А. - Боевые действия в сентябре 1992г _____	109
САРУМЯН Н.П. - Демографические миграции в Нагорном Карабахе в преддверии Арцахского движения _____	118
САФАРЯН В.А. - Новонайденные археологические материалы из местечка Караблур села Мектишен _____	126
Экономика	
МИНАСЯН М.М. - Особенности приватизации в системе экономических реформ в НКР _____	131
Педагогика	
АГАБЕКЯН Р.Дж. - Особенности профессионально педагогической подготовки учителя в университете _____	137

Արցախի պետական համալսարանի հրատարակչություն

ԱրԴՀ տպարան

Մ. Գոշ 2

ԿԱՆՈՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. «ԱրԴՀ գիտական տեղեկագիր» դարբերականում հրատարակվում են Արցախի տեղական համալսարանում կատարված օրիգինալ հոդվածներ, հաղորդումներ ու նամակներ տեսական և էքսպերիմենտալ բնույթի՝ մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներից:

2. Ընդունվում են նաև ԱրԴՀ-ի մասնակցությամբ կայացած կոնֆերանսների, գիտաժողովների և գիտական դոյրոցների նյութեր:

3. Բնագրերը ներկայացվում են երկու օրինակով, մեքենագրված, երկու ինտերվալը մեկ, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփումներով: ՄԱԿ-ից (վերելի ձախ անկյունում), հոդվածի վերնագրով և հեղինակի անվանատառերից ու ազգանունից հետո բերվում է կարճ անոտացիա: Հոդվածի ծավալը աղյուսակներով չոխտը է գերազանցի 10 էջ, հաղորդմանը՝ 4, նամակինը՝ 2:

4. Հոդվածի հետ ներկայացվում է արձանագրության քաղվածքը այն ամբիոնից, որտեղ կատարվել և քննարկվել է աշխատանքը:

5. Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար (հստակ լուսանկար կամ գծագրեր՝ արված առանձին սոփիտակ թղթի վրա): Յուրաքանչյուր նկարի հակառակ կողմի վրա գրվում է կարգային համարը: Տեքստի լուսանցքներում նշվում է նկարների և աղյուսակների տեղերը:

6. Միեւնույն նյութը աղյուսակի և նկարի ձեւով ներկայացնել չի թույլատրվում:

7. Բերվող գրականության մասին հոդվածում նշվում է միայն կարգային համարը, քառակուսի փակագծերում [1,2-5] ըստ հանդիտման հերթականությամբ: Հոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում են գրականության ցուցակը, կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, գրքի կամ հոդվածի վերնագիրը: Պարբերական հրատարակությունների համար այնուհետեւ հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումը առանց չափերունների, թվականը՝ հատորի ու թողարկման համարները, հերթական համարը և էջը: Գրքի դեղքում՝ հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը: Չհրատարակված աշխատանքի վերաբերյալ (բացի ատենախոսությունից) գրականության մեջ նշել չի թույլատրվում: Արտասահմանյան գրականությունը տեքստում նշվում է հոդվածի լեզվով, իսկ գրականության մեջ օրիգինալով:

8. Հոդվածի տեքստի վերջում ձախ կողմում նշվում է այն ամբիոնը կամ լաբորատորիան, որտեղ կատարվել է աշխատանքը:

9. Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ

1. В журнале "Ученые записки" АрГУ публикуются оригинальные статьи, сообщения и письма теоретического и экспериментального характера из области математики, механики, физики, радиофизики, химии, геологии, биологии, географии, экономики и гуманитарных наук, выполненные в Арцахском государственном университете.

2. Принимаются также материалы научных конференций, симпозиумов и научных школ, проведенных при участии АрГУ.

3. Рукописи представляются в двух экземплярах в машинописи через два интервала на русском, армянском или английском языках, с армянским, русским или английским резюме. После указания УДК (вверху слева), инициалов и фамилии автора и названия статьи приводится краткая аннотация. Объем статьи вместе с таблицами не должен превышать 10 страниц, сообщения-4, письма-2.

4. К статье необходимо приложить выписку из протокола заседания кафедры, где выполнена и обсуждена статья.

5. Разрешается не более 5 рисунков (контрастные фотографии или чертежи, выполненные черной тушью на белой бумаге). На оборотной стороне каждого рисунка отмечается его порядковый номер. На полях статьи должны быть помечены места рисунков и таблиц.

6. Представление одного и того же материала в виде рисунков и таблиц не допускается.

7. Цитируемая литература отмечается в тексте поочередно порядковым номером в квадратных скобках ([1,2-5]). В конце статьи в той же очередности приводится список цитированной литературы: порядковый номер, фамилия и инициалы авторов, названия книги или статьи. В ссылках на периодические издания далее следует общепринятое сокращенное название журнала без кавычек, год, том, выпуск, порядковый номер, страница; книги-место издания, изд-во, год, страница. Ссылки на неопубликованные работы (кроме диссертаций) не допускаются. Зарубежная литература в тексте дается на языке статьи, а в литературе-на оригинале.

8. В конце статьи слева указывается кафедра или лаборатория, где выполнена работа.

9. Статья подписывается всеми авторами.